«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ՝ ԱԲՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ) առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17

- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17
- ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԲՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 21

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 23

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 23

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 26

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 34

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 44

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 51

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 57

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 62

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 68

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 72

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 77

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 84

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 85

- ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 85
- ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 87
- ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 89
- ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 92
- ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 93
- ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 94

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ավանդական բժշկության համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է ««Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Արտաքին գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանը երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց: Փորձաքննության ընթացքում դիտարկվել են նախորդ գործընթացից հետո հաստատության ունեցած առաջընթացը, Թերությունների վերացման ծրագրով նախատեսված բարելավումների ազդեցությունը համալսարանի գործունեության տիրույթների վրա: Նախորդ հավատարմագրման շրջափուլում բուհը գտնվել է զարգացման անցումային փուլում՝ փոխելով կրթական ծրագրերի իրականացման թիրախը տեղական շուկայից դեպի օտարերկրյա դիմորդների ներգրավում ու անգլալեզու կրթական ծրագրերի իրականացում: Գործունեության վեկտորի նման փոփոխությունը նպաստել է դիմորդների կայուն հոսքին ու բուհի գործունեության շարունակականության երաշխավորմանը:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԱԲՀ-ի առաքելությունն է. «Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները»:

Նախորդ հավատարմագրումից հետո բուհը բարելավել է իր կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ փորձելով համահնչեցնել դրանք Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին: Հաշվի առնելով շնորհվող որակավորումների ճանաչման, ուսանողների կրթության շարունակականության ապահովման կարիքները՝ բուհը փոփոխություններ է իրականացրել նաև ավանդական բժշկության կրթամասի առարկաներում՝ դրանք տեղափոխելով կամընտրական հատված և հնարավորություն տալով դրանք ընտրելով փոխկապակցել դասական բժշկությունը գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության գիտելիքներին: Կրթական ծրագրերում դասավանդման և գնահատման մեթոդների հստակեցումը, պրակտիկայի վերահսկողության ու կատարման չափանիշների սահմանումը կարևոր են ապահովելու նախատեսված վերջնարդյունքները:

Բուհն իրեն դիրքավորում է որպես բժշկական կրթություն մատուցող առաջատար հաստատություն. այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) չափանիշներին բուհի կրթական

ծրագրերի համահնչեցումը և դրանց համապատասխանեցման ուղղությամբ բուհի կողմից աշխատանքների իրականացումը՝ շարունակաբար բարելավելու կրթական ծրագրերը։ Կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման համար բուհը կարիք ունի սահմանելու նաև ծրագրերի իրականացման, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի նվազագույն պահանջներ (դասախոս-ուսանող օպտիմալ հարաբերակցություն, գործնական պարապմունքներին ուսանողների առավելագույն քանակ, պրակտիկայի իրականացման համար բուժհաստատությունների պրոֆիլ, ուսումնասիրվող բժշկական դեպքերի քանակ և այլն), ինչը հնարավորություն կտա նաև ֆինանսական միջոցներն ուղղել կրթական ծրագրերի համապատասխան կարիքների բավարարմանը։ Իր առաքելությամբ շեշտադրելով նոր որակի բժիշկների պատրաստումը՝ բուհը կարևորում է ուսանողներին բժշկական գիտելիքների փոխանցման զուգորդումը կլինիկական մտածողության ձևավորման հետ։ Այս նպատակով վերջին տարիներին ավելացվել են գործնական դասաժամերը, պրակտիկայի ժամաքանակը, ինչպես նաև կրթական ծրագրերում ավելի շատ են ներդրվել իրավիճակային դեպքերն ու խնդիրները։ Փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման մեխանիզմների շարունակական լավարկումը, միջազգային (երկրներ, որտեղից բուհն ունի դիմորդների ներհոսք) աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրությունը կրթական ծրագրերի համահնչեցման, ուսանողների շարժունությանը և շրջանավարտների մրցունակությանը նպաստելու համար։ Բուհը պետք է դիտարկի նաև OSCE, OSPE գնահատման ձևերի ներդրման հնարավորությունները կրթական ծրագրերում գնահատման օբյեկտիվության ապահովման համար։

Կրթական ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու համար բուհը շարունակաբար համալրում է իր դասախոսական կազմը մասնագիտական բարձր որակներ ունեցող բժիշկ-կլինիցիստներով, որոնք իրենց փորձառությունն են փոխանցում ուսանողներին և նպաստում ապագա բժիշկների կլինիկակական մտածողության զարգացմանը։ Կրթական ծրագրերի իրականացման շարունակականության տեսանկյունից դրական հանգամանք է, որ բուհն ապահովում է դասախոսական կազմի կայունությունը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողական կազմի աճին զուգընթաց բուհն անհրաժեշտություն ունի գնահատելու դասախոսական կազմի համալրման կարիքները, սահմանելու ուսանող-դասախոս օպտիմալ հարաբերակցություն, շարունակաբար ավելացնելու ռեզերվը անհրաժեշտության դեպքում դասախոսական կազմի համալրման գործընթացը սահուն իրականացնելու համար։

Նախորդ հավատարմագրումից հետո բուհն իր ֆինանսական միջոցներն ուղղել է նոր մասնաշենքի կառուցմանը, որի միջոցով բուհը նախատեսել է ընդլայնել իր ուսումնական, լաբորատոր ենթակառուցվածքները, ձևավորել կլինիկական միջավայր ուսանողների գործնական կարողությունների զարգացման, կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերման համար։ Փորձագիտական խումբը, դրական համարելով բուհի նախաձեռնությունը շարունակաբար համալրելու և վերազինելու իր ռեսուրսները, շեշտադրում է այն հանգամանքը, որ ռեսուրսների պլանավորումը և ձեռքբերումը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին կապակցելը կարևոր է բուհի առաքելությամբ նախատեսված պրակտիկ կարողություններ ունեցող բանիմաց բժիշկների պատրաստման համար։ Բուհի ֆինանսական միջոցների բազմազանեցումը ևս կարևոր է ռազմավարական ծրագրով նախատեսված արդյունքների ձեռքբերման և հաստատության կայուն զարգացումը երաշխավորելու համար։

Այսպիսով, հաշվի առնելով նախորդ հավատարմագրումից հետո իրականացված բարելավումները կրթական ծրագրերի ուղղությամբ, դասախոսական կազմի համալրումը

բժիշկ-կլինիցիստներով, նյութատեխնիկական բազայի համալրմանն ուղղված բուհի ջանքերը՝ կարելի է նշել, որ համալսարանն ապահովում է շնորհիվող որակավորումների արժանահավատությունը:

Անդրադառնալով բուհի ռազմավարական զարգացման ու կառավարման գործընթացներին՝ կարելի է նշել, որ բուհը նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է ռազմավարական պլանավորման գործիքակազմը: Բուհի շահակիցները միասնական պատկերացումներ ունեն բուհի դերի ու առաքելության վերաբերյալ, փորձում է սահմանել նաև ռազմավարական զարգացման ծրագրի համար ԳԱՑ-երի համակարգ: Այս տեսանկյունից կարևոր է ԳԱՑ-երի և ֆինանսական միջոցների կապակցումը բուհի առաքելության լիարժեք իրականացման և հաստատության կայուն զարգացման համար:

Նախորդ հավատարմագրումից հետո երկու տարիների ընթացքում բուհն իր գործընթացներն ուղղել է նաև կառավարման համակարգի զարգացմանը, վարչարարության գործընթացների կանոնակարգմանը: Բուհը քայլեր է իրականացրել արտաքին շահակիցներին ներգրավելու կառավարման կոլեգիալ մարմիններում, այսուհանդերձ դեռևս կիրառված մոտեցումները չեն բավարարել բուհի սպասելիքները և չեն նպաստել արտաքին շահակիցների նախաձեռնողականության ավելացմանը, նրանց ազդեցությանը բուհի զարգացման գործընթացների վրա: Արտաքին շահակիցների, մասնավորապես միջազգային գործատուների կարիքների շարունակաբար ուսումնասիրությունը, նրանց հետ կապերի հաստատումը կարևոր են բուհի զարգացման ուղղությունները որոշելու, արտաքին կապերի ու համագործակցությունների հաստատման ուղղությամբ կառավարչական որոշումների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհի կազմակերպահրավական ձևի առանձնահատկություններով պայմանավորված բուհի կառավարման, զարգացման, ռեսուրսների տնօրինման վերաբերյալ որոշումները կայացվում են միանձնյա կառավարման սկզբունքով՝ ռեկտորի կողմից: Փորձագիտական խումբը շեշտադրում է ռեկտորի դերի հստակեցման, գործառույթների տարանջատման կարևորությունը՝ խուսափելու միանձնյա որոշումների կայացումից: Խորհուրդներում ռեկտորի դերի տարանջատումը կարևոր է նաև հաշվետվողականության, թափանցիկության ավելացման համար, ինչպես նաև ստեղծելու մեխանիզմներ ռեկտորի աշխատանքի արդյունավետության գնահատման ու շարունակական բարելավման համար: Հարկ է նշել, որ մյուս շահակիցները հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց կարիքները Կառավարման և Գիտական խորհուրդների նիստերում, որոնք հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ: Բուհը կարևորում է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը վարչարարության գործընթացներում և հետևում դրան փաստաթղթերի մշակման, կիրառման ու գնահատման գործընթացներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը հաստատության բոլոր գործընթացներում, գնահատման ու բարելավման գործընթացների փոխկապակցումը կարևոր են որակի մշակույթի ամրապնդման ու զարգացման համար:

Նախորդ հավատարմագրման ընթացքում բուհը գտնվել է որակի ապահովման մշակույթի ներդրման սկզբնական փուլում: Հաշվի առնելով փորձագիտական խորհրդատվությունները՝ որակի ապահովման համակարգի գործունեության համար բուհը մշակել է համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, որոնցով սկսել է աշխատել վերջին երկու տարիներին: Նկատելի է որակի ներքին ապահովման համակարգի ազդեցությունը հաստատության գործընթացների զարգացման վրա: Բուհը բարելավել է

շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները և գործիքները: Այսուհանդերձ, կիրառվող գործիքների վերանայումը, հաշվի առնելով որակի ապահովման ուղղությամբ բուհի սահմանած նպատակները, դրանց պարբերական կիրառումն ու վերլուծության իրականացումը, կարևոր են բուհի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ արժանահավատ տվյալներ ունենալու համար: Բուհի շահակիցներն իրենց կարիքները բարձրաձայնում են նաև բուհի կողմից կազմակերպված քննարկումների, խորհուրդների նիստերի ժամանակ, ինչը նպաստել է բուհի նյութատեխնիկական բազայի համալրմանն ու կրթական միջավայրի զարգացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է տվյալների հավաքագրման մեխանիզմների (հարցաշարերի բովանդակային վերանայում հարցման իրականացման նպատակներին հասնելու համար) շարունակաբար լավարկման անհրաժեշտությունը կառավարչական որոշումների համար արդյունավետ տվյալներ ունենալու համար:

Ամփոփելով կարելի է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո էականորեն բարելավվել են բուհի ռազմավարական պլանավորման և կառավարման գործընթացները, որակի ապահովման համակարգը նպաստում է ներքին շահակիցների կարիքների վերհանմանը և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Կրթական միջավայրի զարգացումը մշտապես գտնվում է բուհի ուշադրության կենտրոնում, և ԱԲՀ-ն շարունակաբար ռեսուրսներ է տրամադրում ուսումնական միջավայրի բարելավման նպատակով: Բուհում գործում են ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու համապատասխան ծառայություններ, վարչական անձնակազմը պատրաստակամ է աջակցել ուսանողներին կրթության կազմակերպման հարցերում: Փորձագիտական խումբը կարևորում է նաև դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ՀՀ-ում դիմորդների շրջանում տեղեկատվության տարածման մեխանիզմների լավարկման անհրաժեշտության դիտարկումը տեղացի դիմորդների ներգրացման նպատակով: Կարևոր հանգամանք է նաև ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների լավարկումը, գործատուների և շրջանավարտների հետ կապերի ամրապնդումը, ինչը կնպաստի կրթական ծրագրերի խնդիրների վերհանմանը և աշխատաշուկայի պահանջների ներառմանը կրթական ծրագրերում:

ԱԲՀ-ն իր ռազմավարական ծրագրով կարևորում է բուհի զարգացմանն ուղղված նորարարությունների և հետազոտության խթանումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ հետազոտության զարգացման նպատակով բուհի կողմից սահմանված նպատակները և տրամադրվող ռեսուրսները դեռևս չեն փոխկապակցվում իրար և չեն ապահովում սահմանված ուղղություններով հետազոտությունների խթանումն ու իրականացումը: Բուհի ռազմավարական ծրագրով նախատեսվում է մեծացնել հետազոտությանն ուղղված բյուջեն: Այսուհանդերձ, բուհի կողմից դեռևս գնահատում չի իրականացվել՝ դիտարկելու անհրաժեշտ ֆինանսական միջոցները և ուղիներ գտնելու դրանք նախատեսելու համար: Բուհի ամբիոնային հետազոտական ուղղությունները դեռևս հստակեցված չեն, դասախոսներն ակտիվորեն ներգրավված չեն բուհի հետազոտական աշխատանքներում, նրանց խրախուսման մեխանիզմները դեռևս չեն հանգեցրել հետազոտական ուղղությամբ աշխատանքների ավելացմանը և բուհի համար առանջնահերթություն հանդիսացող ուղղություններով գիտական արդյունքների ձեռքբերմանը: Բուհում ակտիվորեն գործում է Ուսանողական գիտական ընկերությունը: Ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում տեղի է ունենում հիմնականում սեմինարներին, գիտաժողովներին մասնակցության միջոցով: Այսուհանդերձ,

հետազոտական բնույթ ունեցող առաջադրանքներն ամբողջովին արտացոլված չեն բուհի կրթական ծրագրերում, թույլ են հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմները։

ԱԲՀ-ն կարևորում է իր գործընթացների մասին հաշվետվողականության ապահովումը ներքին և արտաքին շահակիցների համար՝ կիրառելով պաշտոնական կայքը և սոցիալական հարթակները։ Հարկ է նշել, որ բուհի հաշվետվությունները հաճախ կրում են նկարագրողական բնույթ, առավելապես փաստում են իրականացված գործընթացների մասին, սակայն չեն վերլուծվում չկատարման պատճառները և դրանք չեն փոխկապակցվում հետագա բարելավումներին։ Բուհում դեռևս չի գործում PR ռազմավարություն իր գործունեության մասին հասարակության առավել լայն շերտերին իրազեկելու ուղղությամբ, ինչը կարող է լրացուցիչ հնարավորություններ ստեղծել նաև դիմորդների հավաքագրման ակտիվացման և ընդունելության արդյունավետության բարձրացման համար։ Բուհում գործում է Գիտաբժշկական ուսումնական կենտրոնը, որը մատչելի բժշկական ծառայություններ է մատուցում հանրությանը՝ օգտագործելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները։ Իրականացվող բուժական ծառայությունները վկայում են բուհի սոցիալական պատասխանատվության իրացման մասին։ Այսուհանդերձ, բուհը դեռևս հստակ աշխատանքներ չի իրականացնում ԳԲՈՒԿ-ի մասին հանրության մեծ զանգվածներին տեղեկացնելու համար։

Բուհն իր ռազմավարությամբ կարևորել է արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացման գործընթացների խթանումը։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուհում շարունակաբար աճում է միջազգային ուսանողների թիվը, բուհը նաև փորձում է ընդլայնել համագործակցությունների շրջանակը միջազգային բուհերի հետ։ Այսուհանդերձ, բուհի կողմից սահմանված համագործակցությունները դեռևս չեն հանգեցնում փորձի փոխանակման գործընթացների պարբերական կիրառմանը։ Կրթական ծրագրերի բենչմարքինգը դեռևս չի թիրախավորում այն երկրների կրթական համակարգերը, կրթական վերջնարդյունքները կամ աշխատանքի անցնելու մուտքային պահանջները, որոնք անհրաժեշտ են բուհի շրջանավարտներին։ Բուհը ջանքեր է գործադրում համագործակցության պայմանագրերի ու համաձայնագրերի կնքման, կապերի հաստատման ուղղությամբ, սակայն դրանք դեռևս չեն հանգեցրել դասախոսների ու ուսանողների շարժունության իրականացմանը։ Միջազգային աշխատաշուկայի ուսումնասիրության ու միջազգային գործատուների հետ համագործակցությանն ուղղված գործընթացները դեռ պլանավորման փուլում են։ Այսպիսով, բուհի կողմից համապատասխան ռեսուրսների տրամադրումը, միջազգայնացման ուղղությունների ու նպատակների հստակեցումը, հաստատվող համագործակցությունների ուղղորդումը ուսանողների ու շրջանավարտների կարիքներին կարող է նպաստավոր լինել բուհի միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացման տեսանկյունից։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. բուհի առաքելության հստակ սահմանված լինելը և դրա մասին միասնական ընկալումը շահակիցների շրջանում,
2. ներքին շահակիցների ներգրավվածությունը բուհի կոլեգիալ կառավարման խորհուրդներում և նրանց կարիքների քննարկումը կառավարման մարմինների հետ,
3. ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը վարչարարության գործընթացներում,

4. ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության մեթոդներին տիրապետող շրջանավարտների պատրաստումը,
5. օտարերկրյա դիմորդների հավաքագրման մեխանիզմների լավարկումը և ընդունելության ցուցանիշների կայուն աճը,
6. բժիշկ-կլինիցիստներով դասախոսական կազմի համալրումը,
7. դասախոսական կազմի կայունությունը և սահուն սերնդափոխությունը,
8. ռեսուրսների ու ենթակառուցվածքների ձևավորումը և վերազինումը,
9. հասարակությանը գիտելիքների ու արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումները և բուհի սոցիալական պատասխանատվությունը,
10. որակի ապահովման գործընթացների կանոնակարգումը և դրանց ազդեցությունը բուհի զարգացման վրա։

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական կառավարման նպատակով սահմանված ԳԱՑ-երի համակարգի անկատարությունը,
2. ռազմավարական նպատակներին համահունչ ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար հատկացումները և ֆինանսների բազմազանեցման հնարավորությունների պակասը,
3. կրթական ծրագրերում դասավանդման ու գնահատման մեթոդների կիրառման ինստիտուցիոնալ մոտեցումների պակասը,
4. օտարերկրյա ուսանողների պրակտիկայի վայրերի ընտրության, վերահսկողության ու գնահատման մեխանիզմների անկատարությունը,
5. հետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ մարդկային ու ֆինանսական ռեսուրսների պակասը,
6. հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցման մեխանիզմների ոչ լիարժեք լինելը և հետազոտական բաղադրիչի թույլ արտացոլումը կրթական ծրագրերում,
7. հաշվետվությունների նկարագրական բնույթ ունենալը,
8. կրթական ծրագրերի միջազգայնացման ու փորձի փոխանակման գործընթացների անկատարությունը,
9. դասախոսների ու ուսանողների շարժունության և փոխանակման ծրագրերին մասնակցության խիստ ցածր ցուցանիշները,
10. կարիքների վերհանման նպատակով կիրառվող հարցաշարերի անկատարությունը, վերլուծությունների իրականացման ոչ պարբերական բնույթը։

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Կատարելագործել արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները և վերհանված կարիքները ներդնել ռազմավարական պլանավորման գործընթացների հիմքում։
2. ՌԾ-ով սահմանված գործընթացների համար նախատեսել համապատասխան ֆինանսական և նյութական ռեսուրսներ՝ նպատակների իրագործելիության ապահովման համար։

3. Բարելավել ԳԱՑ-երի սահմանման և ռազմավարական պլանավորման գործընթացներում դրանց կիրառման մոտեցումները՝ բուհի կառավարման արդյունավետության բարձրացման համար։

Կառավարումն ու վարչարարությունը

4. Հստակեցնել Կառավարման խորհրդի գործառույթները՝ գնահատելով արտաքին շահակիցների ներգրավման անհրաժեշտությունը, ռեկտորի գործառութային շրջանակի սահմանումը բուհի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման համար։
5. Լավարկել ՌԾ նպատակներին ու ակնկալվող արդյունքներին համահունչ ռեսուրսների տրամադրման մեխանիզմները՝ բուհի երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու համար։
6. Համապատասխան ֆինանսական միջոցներ տրամադրել Ռազմավարական ծրագրով սահմանված ԳԱՑ-երի ապահովման համար։
7. Բուհի ոլորտային առանձնահատկություններին համահունչ մշակել հստակ չափանիշներ կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվող նվազագույն ռեսուրսների և ուսանողների հարաբերակցության համար՝ կառավարման գործընթացներն ու ռեսուրսների տրամադրումն առավել պլանավորված դարձնելու համար։
8. Ներդնել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակման և դրա գնահատման մեխանիզմներ։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Կրթական ծրագրերի վերջնարդյունքները սահմանելիս հաշվի առնել նաև միջազգային աշխատաշուկայի կարիքները՝ նպաստելու ուսանողների մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը։
10. Մշակել հանձնարարությունների, ուսանողներին տրվող իրավիճակային խնդիրների բազա և շարունակաբար համալրել այն՝ ուսանողների մասնագիտական զարգացման հետագիծն ավելի պլանավորված դարձնելու համար։
11. Կրթական ծրագրերում հստակորեն արտացոլել հետազոտական աշխատանքները՝ ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի նկարագրիչներին համահունչ վերջնարդյունքների ապահովման համար։
12. Կրթական ծրագրերում ըստ ուսանողներին տրվող առաջադրանքների հստակեցնել դասավանդման և գնահատման մեթոդները, ներդնել PBL, CBL, OSCE, OSPE մեթոդները՝ առաջադրանքների իրականացումը փոխկապակցելով դրանց համար պահանջվող ռեսուրսներին։
13. Սահմանել ուսանողների պրակտիկաների վայրերի ընտրության չափանիշներ, լավարկել միջազգային ուսանողների պրակտիկայի վերահսկողության ու գնահատման մեխանիզմները։
14. Կրթական ծրագրերի բենչմարքինգն ուղղորդել ուսանողների մասնագիտական գործունեության երկրների բուհերի համապատասխան ծրագրերի հետ համեմատական վերլուծության իրականացմանը՝ նպաստելու ուսանողների շարժունությանը։

Ուսանողները

15. Հնարավորություններ ստեղծել ուսանողների լրացուցիչ պարապմունքների իրականացման համար՝ ապահովելու մասնագիտական անգլերենի անհրաժեշտ մակարդակի իմացությունը:

16. Շարունակաբար թարմացնել շրջանավարտների բազան և վեր հանել նրանց կարիքները մասնագիտական հետագծին հետևելու միջոցով:

17. Լավարկել կարիքների վերհանման, ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Իրականացնել դասալսումների համակարգային վերլուծություն և դրա արդյունքները դնել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման հիմքում:

19. Միջոցներ հատկացնել և հստակորեն պլանավորել դասախոսական կազմի շարունակական զարգացումն ու վերապատրաստումները՝ նպաստելու մրցունակ դասախոսական կազմի համալրմանն ու պահպանմանը:

20. Հստակեցնել դասախոսական կազմի խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներն ու չափանիշները:

21. Գնահատել բուհում ուսումնաօժանդակ կազմի համալրման անհրաժեշտությունը՝ գործնական պարապմունքների իրականացման պահանջները հաշվի առնելով:

Հետազոտությունը և զարգացումը

22. Ներդնել հետազոտական ոլորտում բուհի ռազմավարության ու բյուջեի համահնչեցման մեխանիզմներ՝ բուհի սահմանած նպատակներին հասնելու համար:

23. Հստակեցնել ամբիոնային հետազոտական ուղղությունները և դրանց զարգացման համար տրամադրել համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ՝ օգտվելով նաև հրավիրյալ դասախոսների կարողություններից:

24. Ներդնել դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման, ներքին դրամաշնորհների տրամադրման մեխանիզմներ՝ հետազոտական արդյունքների ձեռքբերման և դրանց ճանաչման համար:

25. Լավարկել ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմները՝ բժշկության ոլորտում ինտեգրված կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

26. Իրականացնել կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ապահովման նպատակով մեկ ուսանողի համար նախատեսված ռեսուրսների հաշվարկ՝ կրթական ծրագրերի ֆինանսական պլանավորման արդյունավետության բարձրացման նպատակով:

27. Բարելավել պրեռեքվիզիթային առարկաների համար նախատեսված լաբորատորիաները՝ ուսանողների կարողությունների զարգացման համար:

28. Ներդնել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ՝ ապահովելու բուհի ֆինանսական կայունությունը և կրթական ծրագրերի իրականացման շարունակականությունը:

29. Լաբորատորիաներում սահմանել ու ապահովել կենսաանվտանգության համապատասխան պայմաններ՝ գործնական պարապմունքների անվտանգ իրականացման համար։

Հասարակական պատասխանատվությունը

30. Լավարկել հաշվետվությունների վերլուծական բաղադրիչը՝ հաշվետվողականության և պլանավորման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով։
31. Ներդնել PR ռազմավարություն՝ բուհի գործընթացների ու իրականացվող միջոցառումների մասին հասարակության առավել լայն շերտերին իրազեկելու համար։
32. Հստակեցնել հասարակությանը գիտելիքների փոխանցման միջոցառումների պարբերականությունը՝ սահմանելով գործընթացներից ակնկալվող արդյունքները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

33. Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր՝ գնահատման չափելի ցուցիչներով։
34. Ֆինանսական միջոցներ տրամադրել միջազգայնացմանն ուղղված նպատակների իրականացման համար՝ նպաստելու միջազգային ծրագրերում դասախոսական կազմի ներգրավմանը։
35. Լավարկել կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման գործընթացները՝ խթանելու ուսանողների շարժունությունը և բուհի միջազգայնացումը։
36. Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների հիմքում դնել շահակիցների կարիքները՝ նպաստելու պրակտիկաների, փորձի փոխանակման գործընթացների բարելավմանը։

Որակի ներքին ապահովման համակարգը

37. Բարելավել որակի ապահովման համակարգի զարգացման համար նախատեսված ակնկալվող արդյունքները և ԳԱՑ-երը՝ համակարգի գործունեության արդյունքում որակական փոփոխություններ ունենալու համար։
38. Ներդնել արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ շուկայի գնահատման նպատակով։
39. Գնահատել շահակիցների կարիքների վերհանման նպատակով օգտագործվող գործիքների արդյունավետությունը՝ հստակեցնելով դրանց կիրառման պարբերականությունը։

Կարեն Թոչունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

5-ը մարտի, 2024 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Բուհի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ներառում է նրա կրթական համակարգերի և պրակտիկայի համապատասխանեցում ԵԲԿՏ-ում սահմանված չափանիշներին և սկզբունքներին: Թեև բուհի ղեկավարությունն իր պատրաստակամությունն ու մեծ ցանկությունն է հայտնում ինտեգրվելու ԵԲԿՏ-ին, սակայն բուհը պետք է շատ աշխատի այդ ուղղությամբ զարգանալու համար: Բուհը որոշակի քայլեր է իրականացրել Բոլոնիայի գործընթացին համահունչ զարգացման ուղղությամբ՝ մասնավորապես որակի ապահովման համակարգի զարգացման համար հիմքեր ստեղծելով: Այսուհանդերձ, դեռևս կարիք կա կանոնակարգելու միջազգայանացմանն ուղղված գործընթացները, սահմանելու հստակ նպատակներ Եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու և համահունչ կրթական ծրագրեր մատուցելու համար: Բուհը պետք է ավելի հստակ քայլեր ձեռնարկի ուսանողների և անձնակազմի շարժունության ծրագրեր սկսելու համար: Բուհն անպայման պետք է փոփոխությունների ենթարկի ծրագրերը միջազգային եվրոպական չափանիշներին համապատասխան, քանի որ ուսումնական ծրագրում ընդգրկված առարկաները հիմնականում համահունչ են ԱՊՀ երկրների կամ Խորհրդային Միության ծրագրերին, ինչը կարող է խոչընդոտել և դանդաղեցնել ուսանողների շարժունության գործընթացը: Համալսարանը բենչմարքինգ է իրականացնում Բելառուսի Հանրապետության համալսարանների հետ, բայց ԵԲԿՏ-ին ինտեգրվելու համար կարևոր է թիրախավորել նաև այլ եվրոպական բուհերի կրթական ծրագրերը:

Ընդհանրապես, կարևոր է ինտեգրման համար լեզվական խոչընդոտ չունենալը, հատկապես անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելը: Դրական հանգամանք է, որ բուհի ղեկավարությունը սկսել է վերապատրաստել իր անձնակազմին անգլերենի մակարդակի բարձրացման ուղղությամբ և դրա համար միջոցներ է հատկացրել: Ողջունելի է նաև, որ ակադեմիական անձնակազմի մեծ մասը սահուն տիրապետում է անգլերենին, ինչը կհեշտացնի նրանց շարժունությունը եվրոպական հաստատություններում: Բուհը պետք է բարձրացնի նաև հայ ուսանողների համար լեզվի ուսուցման կարևորությունը, քանի որ նրանց մեծ մասը լավ չի տիրապետում լեզվին, և դա կարող է խոչընդոտել փոխանակման ծրագրերում նրանց ներգրավումը: Բուհը պետք է ակտիվ խթանի ուսանողների և անձնակազմի շարժունությունը՝ խրախուսելով ինչպես ներգնա, այնպես էլ արտագնա փոխանակումները: Էրազմուս+ ծրագրերին և փոխանակման այլ նախաձեռնություններին մասնակցությունը կարող է նպաստել ուսանողների և անձնակազմի միջազգային փորձի ծանոթացմանը և բուհում տեղայնացմանը:

Բուհի ինտեգրման կարևոր ուղղություններից է հետազոտական համագործակցությունը: Ցավոք, բուհն այս ուղղությամբ էական ձեռքբերումներ դեռ չունի, առկա են միայն դեռևս ամբողջովին չիրագործված մի քանի հուշագրեր:

Ինտեգրումը պետք է կենտրոնանա նաև համալսարանական համայնքում ներառականության և բազմազանության խթանման վրա: Բազմամշակութային միջավայրի ընդունումը և տարբեր ծագում ունեցող ուսանողներին և անձնակազմին աջակցություն ցուցաբերելը կարևոր ասպեկտներ են: Այս ուղղությամբ բուհը ստեղծել է ներառական միջավայր արտասահմանցի ուսանողների համար, ինչի ցուցիչը օտարերկրյա ուսանողների գոհունակության բարձր մակարդակն է:

Ավանդական բժշկության համալսարանի համար կարևոր է ակտիվորեն ներգրավվել կրթական ծրագրերի միջազգայնացման, փորձի փոխանակման գործընթացներում՝ բարձրացնելու իր դիրքերը ԵՄ կրթական տարածքում և նպաստելու Բոլոնիայի գործընթացի գերնպատակների իրագործմանը: Բացի այդ, ԵՄ կրթական քաղաքականության թարմացումների և փոփոխությունների մասին տեղեկացված լինելը կարևոր է հաջող ինտեգրման համար, և դա հնարավոր է միայն ՈԱԱԿ-ի հետ ակտիվ համագործակցության դեպքում:

Միջազգային կրթության տրամադրման, որակավորումների ճանաչման տեսանկյունից կարևոր է համապատասխանեցնել բուհի կրթական ծրագրերը Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) պահանջներին: Բուհը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ ուղղություններին.

- Ծրագիրը պետք է հաշվի առնի տեղական և միջազգային զբաղվածության շուկայի պահանջները, ինչպես նաև առաջնորդի երկրում տարածված նոզոլոգիաների ուսուցումը, որոնք առաջարկվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից՝ հաշվի առնելով նաև տարածաշրջանների և երկրների հիվանդությունների վիճակագրությունը, որտեղից գալիս են ուսանողները: Օրինակ, քանի որ կան շատ հնդիկ ուսանողներ, պետք է ուշադրություն դարձնել Հնդկաստանում համաճարակաբանական և հիվանդությունների վերահսկման վիճակագրությանը, բուժման մեթոդներին:
- Ծրագրի թեմատիկ ինտեգրումը ցանկալի է սկսել սկզբնական փուլում առանձին առարկաների թեմատիկ դասավորությամբ: Օրինակ, եթե մեկ կիսամյակում դասավանդվում է անատոմիա, հյուսվածքաբանություն, կենսաքիմիա և հիվանդների խնամք կամ կլինիկական հմտություններ, կապակցել թեմաները, երբ անցում է կատարվում մյուս առարկաների դասավանդմանը, ինչպիսիք են անատոմիա, ֆիզիոլոգիա, հյուսվածքաբանություն և կենսաքիմիա: Անհրաժեշտ է նաև զարգացնել ուսանողների կլինիկական հմտությունները սրտանոթային համակարգի առումով, օրինակ՝ ԷՍԳ անելը, անոթազարակ հաշվելը, հիվանդի սիրտը գտնելը, շոշափելը, հարվածային գործիքները և այլն: Դա կօգնի ամրապնդել ուսանողի տեսական գիտելիքները գործնականում և զարգացնել ուսանողի նախնական կլինիկական հմտությունները:
- Հաշվի առնելով, որ ծրագրերը համարժեք են մագիստրոսական աստիճանին, ծրագիրը պետք է հաշվի առնի հետազոտական հմտությունների զարգացումը: Բուհն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանը, ակադեմիական լեզվին, գիտական արդյունքների ներկայացման հմտություններին, գիտական տվյալների բազաների որոնմանը և այլն: Ծրագրի ուսումնական պլանում գիտական/հետազոտական հմտությունների զարգացմանը ցանկալի է հատկացնել առնվազն 10 կրեդիտ:
- Խմբերում ուսանողների թիվը պետք է կախված լինի կիրառած դասավանդման մեթոդից: Պետք է հաշվարկել, թե ժամանակի ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ յուրաքանչյուր ուսանողի գնահատելու համար՝ օգտագործելով կոնկրետ մեթոդ: Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման դեպքում նախընտրելի է խմբում ունենալ 8-12 ուսանող (իհարկե, սա չի նշանակում դասախոսություն, որտեղ կարող եք տեղավորել 100-150 ուսանող): Օրինակ՝ PBL ուսուցման մեթոդի դեպքում խմբում ցանկալի է 8 ուսանող, կլինիկայում Bedside Teaching մեթոդով դասավանդելու

դեպքում՝ առավելագույնը 3 ուսանող և այլն։ Գործնական դասաժամերի քանակը նույնպես պետք է մշակել՝ հաշվի առնելով վերջնարդյունքի ձեռքբերման համար ծախսած ժամանակը։

- Ուսումնական պլանում պետք է նշվի, թե ինչ ուսուցման մեթոդներ են կիրառվում, երբ, ինչ թեմաներ են դասավանդվում, ինչ հմտություններ և վերջնարդյունքներ են նախատեսվում ձեռք բերել։ Դասավանդման մեթոդները չպետք է կախված լինեն յուրաքանչյուր դասախոսի դասավանդման հմտություններից։ Անհրաժեշտ է, որ ամբիոնները նախատեսեն, թե որ առարկայի դասավանդման ընթացքում որ մեթոդը պետք է կիրառվի։ Դասախոսները պետք է վերապատրաստվեն, որպեսզի օգտագործեն դասավանդման այն մեթոդները, որոնք նպատակահարմար են ապագայում այս առարկան դասավանդելու և վերջնարդյունքները ձեռքբերելու համար։
- Ծրագրի դասավանդման ընթացքում նախընտրելի է օգտագործել WFME-ի կողմից առաջարկվող դասավանդման և գնահատման մեթոդները (օրինակ՝ OSPE, OSCE, Bedside Teaching, CBL, PBL)։
- Կլինիկաները, որտեղ ուսանողները անցնում են պրակտիկա, պետք է համապատասխանեն նախապես մշակված չափանիշներին, որոնք հաստատվելու են բուհի կողմից (օրինակ՝ որքան պետք է լինի մահճակալային ֆոնդը, ամբուլատոր կամ ստացիոնար հիվանդների շրջանառությունը և այլն)։ Պետք է նաև լինեն չափանիշներ պրակտիկայի ղեկավարի համար (անկախ կլինիկական գործունեության փորձ, ոչ պակաս, քան 5 տարի, դասավանդման փորձ և այլն)։ Ավելի լավ կլինի, եթե համալսարանը ստանձնի պրակտիկայի կազմակերպումը, հուշագրեր ստորագրի տեղական կամ արտասահմանյան կլինիկաների հետ, փնտրի ղեկավարներ և բաշխի ուսանողներին։ Այսպիսով, համալսարանի համար ավելի դյուրին կլինի հետևել ուսանողների պրակտիկայի ընթացքին և գնահատել պրակտիկայի գործընթացի որակը։

Խորհրդատվություններ.

1. Բարելավել որակի ապահովման մեխանիզմները և գործիքները։
2. Խթանել լեզուների, հատկապես անգլերենի իմացության լավարկումը՝ համալսարանն ավելի գրավիչ դարձնելու միջազգային ուսանողների համար և հեշտացնելու համագործակցությունը ԵՄ այլ հաստատությունների հետ։
3. Ակտիվ խթանել և նպաստել ուսանողների, անձնակազմի շարժունությանը այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսին է Էրազմուս+-ը։ Զարգացնել գործընկերային հարաբերությունները եվրոպական այլ համալսարանների հետ՝ խթանելու փոխանակման ծրագրերն ու համատեղ նախաձեռնությունները։
4. Զարգացնել հետազոտական համագործակցությունը միջազգային համալսարանների և հաստատությունների հետ։ Մասնակցել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող հետազոտական ծրագրերին, ներգրավվել համատեղ հետազոտական նախաձեռնություններում և խրախուսել դասախոսներին միջազգային համագործակցությանը (օրինակ, փնտրել եվրոպական համալսարաններ, որոնք ունեն նույն գիտահետազոտական ուղղությունները և հետաքրքրված են ընդհանուր գիտական նախագծերով, բյուջեից միջոցներ հատկացնել դրա համար)։
5. Ստեղծել միջազգայնացման համապարփակ ռազմավարություն, որը նախանշում է կոնկրետ նպատակներ և գործողությունների ծրագրեր։ Այս ռազմավարությունը պետք

է ներառի ուսանողական կազմի բազմազանության մեծացման, փոխանակման ծրագրերում և շարժունության մեջ անձնակազմի և ուսանողների ներգրավվածության ավելացման ծրագրեր:

6. Տեղեկանալ ԵՄ կրթական քաղաքականության և նախաձեռնությունների փոփոխությունների մասին: Ակտիվորեն ներգրավվել ԵՄ համապատասխան ծրագրերի և ցանցերի մեջ՝ ապահովելու շարունակական համապատասխանեցում եվրոպական կրթական չափանիշներին:
7. Ակտիվ համագործակցել ՈԱԱԿ-ի հետ. օգտագործել ռեսուրսները, փորձը և կարողությունները եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու համար:
8. Ծրագրի դասավանդման ընթացքում օգտագործել WFME-ի կողմից առաջարկվող դասավանդման և գնահատման մեթոդները (OSPE, OSCE, CBL, PBL և այլն):

Նինո Չիչիվեիշվիլի
ԱԲՀ միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Ավանդական բժշկության համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Կարեն Թոչունյան՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, փորձագիտական խմբի ղեկավար:

Աննա Սուքիասյան՝ կենսաբանական գիտությունների թեկնածու, Առողջապահության ինտեգրատիվ գիտությունների եվրոպական ինստիտուտի, «Եվրասիա» միջազգային համալսարանի և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:

Վարդուհի Խաչատուրյան՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինժեներական էկոնոմիկայի և ագրոբիզնեսի ամբիոնի ավագ դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Նինո Չիչիվեիշվիլի՝ Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի փորձագետ, «Գեոմեդի» համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Մարիա Գալստյան՝ Հայկական բժշկական ինստիտուտի Բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Թարգմանությունը կատարել են **Վարդանուշ Բաղդասարյանը** և **Քրիստինե Օհանյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչներն ու համակարգողները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Ավանդական բժշկության համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1.Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,

2.Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,

3.Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,

4.Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցել քննություններին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[1]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2023 թվականի նոյեմբերի 17-ին Ավանդական բժշկության համալսարանում տեղի է ունեցել հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], ներկայացվել է

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ

փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին:

Բուհը դիտարկումներ և առարկումներ չի ներկայացրել փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Բուհի արձագանքը ստանալուց հետո փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

5-ը մարտի, 2024 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԲՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Ավանդական բժշկության համալսարան» առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Ավանդական բժշկության ինստիտուտ»-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1991 թվականին: Համալսարանն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի գործունեությունը նպատակաուղղված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի իրականացմանը:

Համալսարանը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հավատարմագրվել է 2001թ.-ին: Համալսարանին ՀՀ ՈԱԱԿ հիմնադրամի կողմից շնորհվել է պայմանական հավատարմագրում 2021 թվականի ապրիլի 29-ին:

Համալսարանի առաքելությունն է. «Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները»:

Կրթություն. Համալսարանում գործում են 2 ֆակուլտետ, 8 ամբիոն: 2022-2023 ուստարվա սկզբին բուհում ուսանում են 621 ուսանող, այդ թվում՝ 595 օտարերկրացի ուսանող՝ 17 երկրից: Համալսարանը համագործակցում է հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների հետ:

Իր գործունեության ընթացքում Համալսարանը պատրաստել է 1000-ից ավելի շրջանավարտներ, որոնց մեծամասնությունը, որպես պրակտիկ բժիշկ, գիտաշխատող, դասախոս, առողջապահության կազմակերպիչ, հաջողությամբ աշխատում են ոչ միայն ՀՀ, այլ նաև արտերկրի առաջնակարգ կլինիկաներում և բժշկագիտական կենտրոններում: Շրջանավարտներից շատերն ունեն իրենց մասնավոր կլինիկաները, դեռ ավելին, որպես գործատու աշխատելու նպատակով իրենց մոտ են հրավիրում բուհի շրջանավարտներին:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է մանկավարժական, մասնագիտական բազմամյա փորձառություն ունեցող, Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ճանաչված գիտնականներով, դասախոսներով, բժիշկներով, որոնց աշխատանքի շնորհիվ այսօր ԱԲՀ-ն ունի մեծ հեղինակություն և իր արժանի տեղն է զբաղեցնում Հանրապետության բուհական համակարգում:

Հետազոտություն. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԱՀԿ) 2002թ.-ին հռչակել է ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման ռազմավարական ուղիները՝ որպես XXI դարի քաղաքականություն: ԱՀԿ-ի հռչակած ռազմավարության հիմքում դրվել է հետևյալ գաղափարը՝ ուսումնասիրել տարբեր հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման եղանակների ողջ զինանոցը, որը դարերի ընթացքում կուտակվել է ավանդական բժշկության բնագավառում,

առավել արդյունավետ եղանակներն ընդգրկել կրթական ծրագրերում և ներդնել գործնական բժշկության մեջ:

Դա իր հերթին ենթադրում է բժշկագիտության նոր որակի մասնագետներ պատրաստելու անհրաժեշտություն: Վերը նշված քաղաքականությունը դեռևս 1991թ.-ին դրվել է Ավանդական բժշկու-թյան համալսարանի ռազմավարական ծրագրի հիմքում և շարունակվում է մինչ այսօր:

Միջազգայնացում. ԱԲՀ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման քաղաքականությունը բխում է Համալսարանի առաքելությունից, որտեղ գերակա նպատակ է ամրագրված համալսարանական և ծրագրային մակարդակներում միջազգայնացման շարունակական գործընթացների խթանումը: 2020-2025 թթ. ՌԶԾ-ում սահմանվել են նաև այն խնդիրները, որոնք նպատակաուղղված են.

- միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումների ընդլայնմանը,
- համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում,
- հանրության հետ կապի ապահովմանը և ընդլայնմանը, շարունակական կրթության զարգացմանը:

Որակի ապահովում. ՈԱ համակարգը բուհի գործունեության բոլոր ոլորտներին (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վերաբերող գործընթացների պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավումների իրականացման գործընթացների ամբողջությունն է: Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը ստեղծում են անհրաժեշտ հենք, որի շրջանակում համալսարանը ձևավորում է որակի ապահովման իր համակարգը, գնահատում դրա գործունեության արդյունավետությունը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Ավանդական բժշկության համալսարանի առաքելությունն ամրագրված է համալսարանի 2020-2025 թթ. ռազմավարական ծրագրում, համաձայն որի՝ «Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները»: Համալսարանն իր առաքելությունն իրականացնելու համար սահմանել է ռազմավարական հետևյալ նպատակները՝ կառավարում և վարչարարություն, կրթություն, ենթակառուցվածքներ և ֆինանսներ, ուսանողներ, արտաքին կապեր և միջազգայնացում, հետազոտություններ և նորարարություն, որակի ապահովում:

ԱԲՀ-ն կրթական ծառայություններ է մատուցում ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) 6-րդ, 7-րդ մակարդակներում: Հետազոտողի կամ 8-րդ մակարդակին համապատասխան կրթական ծառայություն չի մատուցվում հաստատության կողմից, և համալսարանն ավարտելուց հետո բժշկական գործունեություն ծավալելուն պատրաստ լինելու համար ուսանողներն իրենց կրթությունը շարունակում են այլ ուսումնական հաստատություններում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում: Փորձագիտական խմբի կողմից տեղի ունեցած ուսումնասիրությունները, շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ բուհը, իր սահմանած նպատակները հիմք ընդունելով, քայլեր է իրականացրել կրթական ծրագրերը համապատասխանեցնելու նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված Ոլորտային որակավորումների շրջանակներին (այսուհետ՝ ՈՈՇ):

Նախորդ ռազմավարությամբ առանձնացված առաքելության ուսումնասիրությունը և համադրումը ներկայումս սահմանված առաքելության հետ ցույց է տալիս, որ բուհը հիմա ևս կարևորում է ազգային և միջազգային աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստումը: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ բուհում ուսումնառողների մեծ մասն արտերկրից են, տեղացի ուսանողներ սովորում են միայն «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրում, և տեղացի դիմորդների ընդունելության ցուցանիշները նվազման միտում ունեն: Ի տարբերություն նախորդ ռազմավարության՝ ներկայումս ԱԲՀ-ն շեշտադրում է իր դերը նոր որակի բժիշկների պատրաստման գործում, որոնք ունակ կլինեն ինտեգրելու ժամանակակից և ավանդական բժշկության մոտեցումները իրենց պրակտիկ գործունեության ընթացքում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա բուհը ռազմավարությամբ կարևորել է համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը, ձևավորվել է կառավարման խորհուրդ, որը փորձում է բուհին աջակցել ֆինանսատնտեսական մասով որոշումների կայացման գործում:

Հաշվի առնելով սահմանված առաջնահերթությունները, նաև միջազգային աշխատաշուկայի սպասարկման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ բուհն ընդլայնել է նաև համագործակցային շրջանակը արտասահմանյան ուսումնական հաստատությունների՝ հիմնականում Բելառուսի բժշկական բուհերի հետ:

Այսուհանդերձ, հարկ է նշել, որ սահմանված որոշ նպատակներ բավական հավակնոտ են ներկայիս ռազմավարությամբ ու առկա ռեսուրսներով կյանքի կոչելու համար: Մասնավորապես՝ հետազոտության ուղղությամբ սահմանված նպատակների, իրականացված գործողությունների ու տրամադրված ռեսուրսների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բուհի կողմից սահմանված զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների իրականացման, դրանց արդյունքների միջազգայնացման համար նախատեսված ռեսուրսները խիստ սահմանափակ են: Բուհը ողջ ռեսուրսները այս պահին ներդնում է նոր մասնաշենքերի կառուցման մեջ, որտեղ առկա է լինելու ինչպես լսարանային ֆոնդ, այնպես էլ կլինիկա՝ նպատակ ունենալով ուսանողների մոտ ձևավորել կլինիկական մտածողություն առաքելությամբ սահմանված բժիշկների պատրաստման համար:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանի ներքին շահակիցներն են բուհի ղեկավարությունը, ուսանողները, ՊԴ և վարչական անձնակազմը: Բուհի արտաքին շահակիցներն են շրջանավարտները, ուսանողների ծնողները, գործատուները, պետական և մասնավոր կառույցները, առողջության հետ կապված տարբեր խնդիրներ ունեցող քաղաքացիները:

Համալսարանն իրականացնում է ներքին շահակիցների հետ հանդիպումներ կարիքները վերհանելու նպատակով: Հաշվի առնելով, որ ուսանողների մեծ մասը արտասահմանցի է, առաջանում են դժվարություններ և խոչընդոտներ արտաքին շահակիցների ներգրավման մասով, մասնավորապես այն օտարերկրյա գործատուների կարիքների վերհանման ուղղությամբ, որոնց մոտ հետագայում մասնագիտական կրթությունը օրդինատուրայում շարունակելուց հետո աշխատում են բուհի շրջանավարտները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվի առնելով այս հանգամանքով պայմանավորված բուհ-գործատու կապի խզումը՝ բուհը նախատեսում է կատարելագործել արտաքին շահակիցների ներգրավվածության նպատակով կիրառվող մեխանիզմները:

Նախորդ հավատարմագրումից հետո փորձագիտական խորհրդատվության հիման վրա 2020թ. ռեկտորի հրամանով ձևավորված ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի պլանավորման հանձնաժողովը վերանայել է համալսարանի առաքելությունը: Փոփոխված առաքելությունն արտացոլում է ԱԲՀ-ի դիրքավորումը ՀՀ-ում և միջազգային աշխատաշուկայում: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած քննարկումները ևս փաստում են, որ շահակիցների շրջանում բուհի առաքելությունն ընկալելի է: Այսուհանդերձ, դեռևս ռազմավարությամբ ամբողջովին հստակեցված չէ, թե բուհը ինչպես է պատկերացնում իր կողմից սահմանված «նոր տեսակի բժիշկների» պատրաստումը և ինչպես է գործող

ռազմավարությունը նպաստելու դրան։ Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ այս համատեքստում բուհն իր կրթական ծրագրերով փորձում է պատրաստել բժիշկներ, որոնք տիրապետում են ժամանակակից ու ավանդական բժշկության մեթոդներին։

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր։

Համալսարանն իր Ռազմավարական զարգացման ծրագիրը վերանայելիս 2020թ.-ին հիմք է ընդունել ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խնդիրները և դրանք ներառել իր ռազմավարական ուղղություններում։ Ինքնավերլուծության համաձայն՝ բուհը կարևորում է Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատումն ու մշտադիտարկումը, որի համար նախատեսում է հստակ գործիքներ ստեղծել ու զարգացնել ՌԾ գնահատման համակարգը։

Համալսարանի կողմից գործող ՌԾ-ի համար սահմանվել են գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ-եր)՝ ըստ բուհի զարգացման հիմնական ոլորտների։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները որոշակի առումով կիսում են բուհի կողմից ԳԱՑ-երի սահմանման կարևորությունը, սակայն դրանց արտացոլումը դեռևս տեսանելի չէ բուհի գործունեության բոլոր ոլորտներում և բոլոր ստորաբաժանումների պլաններում։ Սահմանված ԳԱՑ-երի ուսումնասիրությունը և դրանց համադրությունը ակնկալվող արդյունքներին ցույց է տալիս, որ դրանք հիմնականում միտված են գործընթացների փաստաթղթավորմանը, կանոնակարգմանը, վարչարարության գործընթացների արդյունավետության բարձրացմանը։ Այսպես օրինակ բուհի ՌԶԾ գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցում սահմանվել են այնպիսի ակնկալվող արդյունքներ, ինչպիսիք են կառավարման, ֆինանսների տնօրինման վերաբերյալ տարաբնույթ արձանագրությունների, կանոնակարգերի ձևավորումը, հարցումների արդյունքների ամփոփումը, ընթացակարգերի ստեղծումը և այլն։ Պլան-ժամանակացույցի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ բուհը սահմանված գործընթացների իրականացման համար առանձնացրել է պատասխանատուներ, ժամկետներ և ռեսուրսներ։ Հարկ է նշել, որ բուհի կողմից կարևորված որոշ ոլորտներին (մասնավորապես՝ արդիական հետազոտություններ և նորարարություն, արտաքին կապեր և միջազգայանացում) ուղղված գործընթացների իրականացման համար հատկացված չեն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ավանդական բժշկության համալսարանի առաքելությունն արտահայտում է իր գործունեության ուղղությունների բովանդակությունը, ինչը նպաստում է ԱԲՀ-ի վերաբերյալ պատկերի հստակեցմանը շահակիցների շրջանում։ Դրական հանգամանք է նաև կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը և դրանից բխող որակավորումների ոլորտային շրջանակին համահնչեցման միտումները, ինչը նպաստել է կրթական ծրագրերի վերջնարդյունքների հստակեցմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհը փորձում է շահակիցների կարիքները դնել զարգացման ուղղությունների պլանավորման հիմքում, ինչը նպաստում է ներքին շահակիցների շրջանում բուհի առաքելության և տեսլականի վերաբերյալ միասնական մոտեցման ձևավորմանը։ Կարևոր է, որ բուհը վերհանել է նաև արտաքին շահակիցների

կարիքների վերհանման արդյունավետության բարձրացման կարիքը, ինչը ուշադրության կենտրոնում պահելը, շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների լավարկումը կարող են նպաստել արտաքին շահակիցների (այդ թվում՝ ՀՀ-ից դուրս) կարիքների արտացոլմանը բուհի ռազմավարական զարգացման գործընթացներում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում բուհը փորձում է բարելավել իր ռազմավարական ծրագիրը և մշակում գործիքներ կապակցելու ռազմավարական ծրագրի պլանավորման և ԳԱՑ-երի սահմանման գործընթացները: Այսպես, ռազմավարական պլանավորումը նախորդից դրականորեն տարբերվել է առաջին հերթին նրանով, որ առկա է եղել ռազմավարական նպատակների գնահատման ԳԱՑ լրակազմ և բուհը առաջնորդվում է սահմանված ԳԱՑ-երով: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է ֆինանսական ռեսուրսների պլանավորման և ՌԾ նպատակների իրականացման կապի ապահովման կարևորությունը, ինչը կնպաստի բուհի երկարաժամկետ կայուն զարգացմանը: Դրական է ԳԱՑ-երի կիրառումը ռազմավարական նպատակների իրականացման և հետագայում ԳԱՑ-երով գնահատումն իրականացնելու համար: Այս առնչությամբ փորձագիտական խումբը գտնում է, որ ռազմավարական կառավարման գործընթացում ԳԱՑ-երի լիարժեք կիրառումը պետք է լինի բուհի ուշադրության կենտրոնում՝ ռազմավարական պլանավորման հաջորդ շրջափուլերում հստակեցման և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու անհրաժեշտությամբ: Սահմանված գործընթացների իրականացման համար ռեսուրսների հատկացումը կնպաստի ռազմավարական նպատակների իրագործմանը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ այս մոտեցումը կապահովի բուհի համաչափ զարգացումը ռազմավարական հանդիսացող ուղղություններով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՀ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որն արտացոլում է բուհի գործունեության հիմնական ուղղությունները, նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել է ռազմավարական պլանավորման գործիքակազմը, առկա են բուհի ռազմավարական նպատակների գնահատման արժանահավատ ցուցիչներ սահմանելու միտումներ, ռազմավարական պլանավորումն ընդգրկում է շահակիցների կարիքները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԱԲՀ կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և համալսարանի կանոնադրությանը համապատասխան՝ ԱԲՀ-ի կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի, ուսանողական խորհրդի, ամբիոնների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հիման վրա: Համալսարանի կառավարման համակարգի հիմքում ընկած է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցումը: Համալսարանի կանոնադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ իրավակազմակերպական ձևի համալսարանն արտադրական կոոպերատիվ է: Համալսարանի ընդհանուր ղեկավարումն ու գործառնական կառավարումն իրականացնում է ռեկտորը, ով հաշվետու է ԱԲՀ կառավարման բարձրագույն մարմնին՝ հիմնադիր անդամների ընդհանուր ժողովին, որտեղ ևս ռեկտորն ընդրգրկված է՝ պայմանավորված բուհի իրավակազմակերպական ձևի և գործող կառավարման համակարգի առանձնահատկություններով: Ռեկտորը ղեկավարում է նաև համալսարանի Գիտական խորհուրդը, ԳԽ-ին կից ձևավորված Որակի ապահովման հանձնաժողովի նախագահն է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհի Կառավարման խորհուրդը կազմված է ներքին շահակիցներից, քանզի արտաքին շահակիցներին ներգրավելու փորձերն արդյունավետ չեն համարվել բուհի կողմից: Բուհի ներկայացուցիչների դիտարկմամբ այս հանգամանքը պայմանավորված է նաև շրջանավարտների՝ ԱԲՀ-ում ուսումնառությունից հետո մասնագիտական կրթությունն այլ ուսումնական հաստատությունում ավարտելուց հետո աշխատանքի անցնելու հանգամանքով, ինչի պատճառով նվազում է գործատուների հետաքրքրվածությունը համագործակցության և Կառավարման խորհրդում ընդգրկվելու վերաբերյալ: Խորհուրդների նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունը և փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ Կառավարման խորհրդում, որտեղ ղեկավար կազմից զատ ներգրավված են նաև ուսումնական մասի վարիչը, պրոռեկտորները, հաշվապահը, քննարկվում են բուհի ֆինանսատնտեսական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերը, որից հետո վերջնական որոշումները կայացվում են ռեկտորի կողմից: Կրթությանն ու հետազոտությանն առնչվող հարցերը, կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունները քննարկվում են բուհի Գիտական խորհրդում:

ԱԲՀ-ի Գիտական խորհրդի կազմում գործում է էթիկայի հանձնաժողով, բուհի կողմից մշակվել է համապատասխան կանոնակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված ընթացակարգերի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

ԱԲՀ-ում կառավարման մարմինները իրենց գործողություններում առաջնորդվում են կանոնակարգերով և ընթացակարգերով, որոնց թափանցիկությունն ապահովվում է կայքում հասանելիության միջոցով: Համալսարանի կազմակերպական կառուցվածքում ներգրավված են ԱԲՀ ղեկավարությունը, 2 ֆակուլտետները, 8 ամբիոնները, գիտաբժշկական ուսումնական կենտրոնը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո ավելացվել են ուսումնական աշխատանքերի գծով, ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորների հաստիքները՝ կարևորելով բուհի ռազմավարական խնդիրները և ուղղությունները: Բուհի կողմից համապատասխան մարդկային ռեսուրսներ դեռևս չեն տրամադրված ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների համակարգման ուղղությամբ, հետազոտության զարգացման ուղղությամբ ևս մարդկային ռեսուրսները սահմանափակ են: Նախորդ հավատարմագրումից հետո բուհի կողմից մշակվել են նաև աշխատակիցների պաշտոնների նկարագրերը՝ հիմնվելով Զբաղմունքների դասակարգչի վրա:

Ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմքում դրված են ստորաբաժանումների կողմից ներկայացված հայտերը՝ իրենց ընթացիկ կարիքների և կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, գույքի, միջոցների ձեռքբերման համար, որի հիման վրա էլ կազմվում է բյուջեի նախահաշիվը: Համալսարանի ֆինանսական մուտքերը հիմնականում առաջանում են ուսանողների վարձավճարներից և դրանց շուրջ 30.1%-ն ուղղվում է աշխատավարձի ֆոնդին: Ներկայումս բուհի զարգացման ֆոնդը (բյուջեի 37.75%) ուղղված է ենթակառուցվածքների բարելավմանը, նոր մասնաշենքի կառուցմանը: Բյուջեի և ռազմավարական ծրագրի համադրությունը թույլ է տալիս նշել, որ ռազմավարական հանդիսացող մյուս ուղղությունների (մասնավորապես՝ հետազոտություն և միջազգայնացում) համար դեռևս ֆինանսական հապատասխան միջոցներ չեն տրամադրվում այս ուղղություններով սահմանված նպատակների լիարժեք իրագործման համար: Ֆինանսական միջոցների բազմազանեցման համար բուհը փորձել է դիմել նաև Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակում առաջարկվող ծրագրերին, սակայն բուհի կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագիրը չի ընդգրկվել հաղթող ծրագրերի ցանկում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված նպատակների համար բուհը փորձում է ներգրավել անհրաժեշտ որակավորում ունեցող մարդկային ռեսուրսներ՝ հաշվի առնելով ուսանողների թվաքանակի աճը: Այսուհանդերձ, սահմանված նպատակների իրականացման համար նվազագույն ռեսուրսի (օրինակ՝ ուսանող-դասախոս, ուսանող-վարչական-ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցություն, մեկ խմբում ուսանողների նվազագույն և առավելագույն թվաքանակ) հաշվարկ կամ առկա ռեսուրս-դրան ուղղված ֆինանսական միջոցների արդյունավետության գնահատում բուհի կողմից դեռևս չի իրականացվել:

2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ԱԲՀ-ի կառավարման համակարգը, կանոնակարգային հենքը ՊԴ կազմին և ուսանողներին հնարավորություն է տալիս ընդգրկվելու համալսարանի կառավարման կոլեգիալ մարմիններում՝ կառավարման խորհրդում և գիտխորհրդում: Նշված մարմիններում ներքին շահակիցների ներգրավումը թույլ է տալիս նրանց մասնակցել համալսարանի կառավարման գործընթացին և իրենց առնչվող հարցերի քննարկմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհրդում ներգրավված են արտասահմանցի և հայ ուսանողներ: Նրանք անմիջականորեն կամ միջնորդավորված հնարավորություն են ունենում մասնակցելու համալսարանի կառավարման գործընթացին, ակտիվ են իրենց առնչվող հարցերի քննարկման ու դրանց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առավել նախաձեռնողական են արտասահմանցի ուսանողները: Նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից բարձրաձայնված հարցերը ռեսուրսների բարելավման ուղղությամբ են հիմնականում, որոնց բուհի հնարավորության սահմանում տրվում են համապատասխան լուծումներ:

Բուհը դեռևս չի վերլուծել դասախոսների բավարարվածությունը՝ համալսարանի կողմից իրենց առնչվող որոշումների կայացման, այս գործընթացներում ներգրավվածության վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց կարիքներն առավելապես բարձրաձայնում են ամբիոնային քննարկումների ժամանակ, իսկ կրթական

ծրագրերի հետ կապված խնդիրները քննարկվում են գիտխորհրդում: Նման քննարկումների արդյունքում որոշակիորեն բարելավվել են կրթական ծրագրերը, մասնավորապես՝ նվազեցվել է ավանդական կրթամասի առարկաների թիվը, հատկացվել են ռեսուրսներ ու անհրաժեշտ նյութեր:

2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԱԲՀ երկարաժամկետ պլանավորումն արտացոլված է բուհի 2020-2025 թթ.-ի ՌԶԾ-ում, որտեղ ներառված նպատակները, խնդիրները և գործողություններն արտացոլում են ռազմավարական երկարաժամկետ ուղղությունները: Բուհի մշակած պլան-ժամանակացույցը ներկայացնում է ՌԾ կատարման ընթացքը: Ամբիոնները ևս ունեն հնգամյա Ռազմավարական ծրագրի ժամանկահատվածն ընդգրկող պլաններ, որտեղ ըստ իրենց գործունեության շրջանակը ներկայացնող ռազմավարական ուղղությունների (կրթական գործունեություն, ուսանողակենտրոն քաղաքականություն, արդիական հետազոտություններ և նորարարություններ, որակի ապահովման ներքին համակարգ) առանձնացված են գործողությունները և ակնկալվող արդյունքները, սահմանված են գործողությունների կատարման ժամկետները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս պլաններում առկա ակնկալվող արդյունքները բավական ընդհանրական են (նիստերի արձանագրություններ, ժամանակցույցներ, կատարողական զեկույցներ), և ոչ միշտ է տեսանելի կապը սահմանված նպատակի հետ:

ՄՈՒՀ-ում առկա չէ առանձին միջնաժամկետ պլանավորում: Պլան-ժամակացույցում որոշ գործընթացների իրականացման վերջնաժամկետները նշում են Ռազմավարական ծրագրի միջանկյալ ժամանակահատվածը: Բուհը մշակվում և իրականացվում է կարճաժամկետ պլանավորում, որտեղ ստորաբաժանումները փորձում են արտացոլել ՌԾ նպատակները:

Բուհը ստորաբաժանումների համար մշակել և ներդրել է գործունեության պլանավորման և կատարողականի նոր միասնական ձևաչափ: Ըստ ձևաչափի՝ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ԳԽ-ում և ռեկտորատում ներկայացնում են ընթացիկ և տարեկան հաշվետվություններ, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք առավելապես ներկայացնում են կատարողականի չափը և հիմնականում ունեն նկարագրական բնույթ: Ներկայումս բուհի շատ նախաձեռնություններ կապակցվում են նոր մասնաշենքի կառուցման ու դրա ընձեռած հնարավորությունների հետ:

2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համալսարանն իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար մշակել է համապատասխան ուղեցույց՝ սահմանելով ուսումնասիրության գործիքները և մեթոդները: Ուղեցույցի համաձայն՝ բուհը նախատեսում է վերլուծությունների արդյունքները կիրառել համալսարանի ռազմավարական նպատակների որոշման, ռազմավարությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների մշակման համար: Համալսարանի կողմից առանձնացվել են հետևյալ գործիքները՝ ինքնավերլուծություն, ինքնագնահատում, մշտադիտարկում, SWOT վերլուծություն, բենչմարքինգ: Ներքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող հարցումների արդյունքում բարելավվել են բուհի

ռեսուրսները: Ուսումնասիրելով բուհի շրջանավարտների հետագիծը Հնդկաստանից ժամանած ուսանողների համար առաջարկվել է իրականացնել FMGE քննության նախապատրաստական դասընթացներ մատուցված կրթական ծառայությունների որակի ճանաչման համար:

Նախորդ հավատարմագրման ընթացքում բուհը գտնվել է անցումային փուլում, քանի որ տեղացի ուսանողների թվի շարունակաբար նվազմամբ պայմանավորված անցում է կատարել հիմնականում օտարալեզու կրթական ծրագրերի իրականացմանը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ բուհը համապատասխան ֆինանսական միջոցներ է հատկացրել օտարալեզու կրթական ծրագրերի իրականացման համար դասախոսական կազմի հավաքագրման նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեռևս միջազգային աշխատաշուկայի (այն երկների, որտեղից բուհն ունենում է դիմորդներ) թիրախային ուսումնասիրություն և դրանց հենքով դիմորդների հավաքագրման, գործատուների հետ համագործակցության կամ կրթական ծրագրերի ճանաչելիությանն ուղղված միջոցառումներ բուհի կողմից դեռևս չեն իրականացվել:

2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Ավանդական բժշկության համալսարանում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը կիրառվում է վարչարարության գործընթացներում: Շրջափուլի կիրառման մոդելը ներկայացված է նաև 2022 թ. տպագրված ԱԲՀ ՈԱ ձեռնարկում: Նախորդ հավատարմագրումից հետո բուհի կողմից վերանայվել են պլանավորման ձևաչափերը, ըստ դրանց հաշվետվությունների իրականացման մեխանիզմները: Պլանների ու հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հաճախ նկարագրական բնույթի են, ցույց են տալիս նախատեսված գործընթացների կատարման չափը: Հաշվետվողականություն-առաջիկա բարելավում շղթան դեռևս ինստիտուցիոնալացված չէ:

ՊԻԳԲ շրջափուլի կիրառման մոտեցումները ներդրված են կրթական ծրագրերի իրականացման գործընթացում: Բուհը մշակել է նաև ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ՝ փորձելով ապահովել ՊԻԳԲ շրջափուլի հերթականությունը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհի կողմից գնահատվել ու բարելավվել են կրթական ծրագրերը, և այժմ համալսարանը նորից սկսել է կիրառել այս շրջափուլը կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ռազմավարական ուղղությամբ տարվող աշխատանքները ներկայումս իրականացման փուլում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնականում պլանավորման փուլում են գտնվում հետազոտության ուղղությամբ տարվող աշխատանքները՝ պայմանավորելով դրանք լաբորատորիաների կառուցմամբ ու դրամաշնորհային ծրագրերին մասնակցությամբ:

2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Համալսարանում կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համար իրականացվում են հարցումներ պրակտիկայի, դասընթացների, կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ:

Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեկ այլ մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծությունը: Հաշվետվությունների և դրանց վերլուծությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հանձնաժողովը հիմնականում շեշտադրել է կլինիկական հետազոտությունների վերաբերյալ հարցերի ընդգրկումը հարցաշարերում, ինչը հաշվի առնելով՝ բուհը որոշակիորեն փոփոխել է հարցաշարը ու ներառել նաև այս ուղղությամբ իրավիճակային խնդիրներ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կառավարման, հետազոտության իրականացման, միջազգայնացման արդյունավետության վերաբերյալ գնահատումներ բուհը դեռևս չի իրականացրել:

2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԱԲՀ-ում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների թափանցիկությունն ապահովում է պաշտոնական կայքով, ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով:

ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տվյալները ԱԲՀ-ում հավաքագրվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և դեկանի հաշվետվությունից: Այսուհանդերձ, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումները գնահատող մեխանիզմներ ու գործիքներ ԱԲՀ-ում դեռևս ներդրված չեն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շրջանավարտների հաջողությունների մասին բուհը փորձում է տվյալներ հավաքագրել ուսումնական մասի միջոցով: Կայքում բուհը տրամադրում է տեղեկատվություն այն երկրների մասին, որտեղ շրջանավարտները մասնագիտական գործունեություն են ծավալում: Հարկ է նշել, որ այս տեղեկատվությունն ընդհանրական է, առանձնացված չեն շրջանավարտների հաջողության պատմությունները կամ նրանց կարիերայի հետագիծը ցույց տվող ուղղությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է իրականացրել կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ, ինչը նպաստել է կառավարման ու վարչարարության գործընթացների կանոնակարգմանը և արդյունավետ իրականացմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհն իր կառավարման գործընթացների հիմքում դնում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքները՝ այդպիսով փորձելով մասնակցային դարձնել որոշումների կայացման գործընթացը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ բուհը փորձել է Կառավարման խորհրդի ձևավորմամբ բարձրացնել ռազմավարական կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այսուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավման մոտիվացիայի բացակայությունը, որոշումների կայացման գործընթացներում չներգրավվելը հանգեցրել է բուհի որոշմանը՝ խորհուրդներում ներգրավել միայն ներքին շահակիցներին: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է կառավարման կամ խորհրդակցական մարմիններում արտաքին շահակիցների ներգրավման այնպիսի ձևաչափերի որոնումը, ինչը կհենվի բուհի առանձնահատկությունների վրա և կնպաստի արտաքին շահակիցների կարիքների ներկայացմանը բուհում և դրանց հիման վրա բարելավումների իրականացմանը: Փորձագիտական խումբը, հաշվի առնելով բուհի կազմակերպահիրավական ձևի

առանձնահատկությունները, այնուամենայնիվ նշում է՝ համալսարանի կառավարման կարևորագույն ասպեկտը արտաքին հեռանկարների և անկախ գնահատման ներառումն է, որը կապահովի, որ հաստատությունը հավատարիմ մնա լավագույն փորձին և հաշվետու լինի իր շահակիցներին: Ռեկտորի երկակի դերը կարող է սահմանափակել խորհրդի կարողությունները՝ ծառայելու որպես բուհի կառավարման և գործունեության արդյունավետ գնահատող: Նման տարանջատումը կարևոր է հաշվետվողականությունը պահպանելու և շահերի բախումը կանխելու համար: Այս խնդիրը լուծելու համար ԱԲՀ-ն պետք է հաշվի առնի իր կառավարման կառուցվածքում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Սա կարող է ներառել Կառավարման խորհրդի կազմում անկախ վերահսկողական հանձնաժողովների ստեղծումը, որոշումների կայացման հիմնական գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավումը և ռեկտորի աշխատանքը օբյեկտիվ տեսանկյունից գնահատելու հստակ ուղեցույցներ սահմանելը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը մշակել է պաշտոնների անձնագրեր, բարելավվել են պլանավորման ձևաչափերը, ինչը ևս նպաստել է գործընթացների կանոնակարգմանը: Այս համատեքստում դրական է, որ բուհը գիտակցում է սահմանված նպատակների համար ռեսուրսների հատկացման կարևորությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կողմից սահմանված նպատակներին համահունչ ֆինանսական ռեսուրսների հատկացումը, ֆինանսավորման այլընտրանքային ձևերի որոնումը կարող են նպաստել բուհի ֆինանսական կայունությանը, հետազոտության, արտաքին կապերի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված նպատակների ամբողջական իրագործմանը: Այս տեսանկյունից կարևոր է նաև նյութատեխնիկական բազայի ու ենթակառուցվածքների զարգացմանը զուգընթաց շարունակաբար ռեսուրսներ հատկացնել նաև մարդկային ներուժի զարգացմանը, կրթական ծրագրերի բարելավմանը, ինչը կնպաստի մրցունակ մասնագետների պատրաստմանը:

Դրական հանգամանք է, որ բուհը որոշումների կայացման գործընթացներում ներգրավում է ներքին շահակիցներին: Հատկապես կրթության կարևորագույն շահակիցների՝ ուսանողների ներգրավվածությունը, նրանց նախաձեռնողական առաջարկները մեծապես նպաստել են անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծմանը: Կարևոր է նաև մասնագիտական քննարկումների շարունակաբար իրականացումը, դասախոսների մոտիվացիայի ավելացումը առաջարկներով հանդես գալու հարցում, ինչը կարող է կրթական ծրագրերի կառավարման արդյունավետության համար լրացուցիչ երաշխիքներ ստեղծել:

Անդրադառնալով պլանավորման գործընթացներին՝ փորձագիտական խումբը դրական է գնահատում պլանավորման գործընթացների, ձևաչափերի բարելավումը և նշում, որ սահմանված նպատակների ու ակնկալվող արդյունքների փոխկապակցումը, արդյունքների առավել հստակեցումը կարևոր են ռազմավարական պլանավորման գործընթացների բարելավման համար:

Դրական հանգամանք է, որ բուհը փորձում է ապահովել կապը տարեկան ու ռազմավարական պլանների միջև, ինչն առավել իրատեսական է դարձնում սահմանված նպատակներին հասնելը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բարելավումը կարող է նպաստել հետագա պլանավորման առավել արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է իրականացրել նաև իր գործունեության վրա ազդող գործոնների

ուսումնասիրության ուղղությամբ, մշակել է համապատասխան ձևաչափեր, որոնց պարբերական կիրառումը տվյալների շարունակաբար հավաքագրման համար կարող է նպաստել կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ որոշ գործոնների ուսումնասիրության հիմքով բուհն արդեն իսկ կարողացել է իր գործունեության ուղղության վերաբերյալ որոշումներ կայացնել՝ դիմորդների հավաքագրման շուկաների ընտրության և կրթական ծրագրերի իրականացումն օտարալեզու դարձնելու հարցերում: Արտաքին միջավայրի ուսումնասիրությունն անհրաժեշտ է շարունակել ոչ միայն դիմորդների կայուն հոսքն ապահովելու, այլ նաև շրջանավարտների մասնագիտական հետագիծն ուսումնասիրելու նպատակով, ինչը կնպաստի կրթական ծրագրերի բարելավմանը, բուհ-գործատու կապերի ամրապնդմանը, շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը փորձում է կիրառել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը, ինչը նպաստել է վարչարարության գործընթացների լավարկմանը: Դրական է, որ որոշ գործընթացներ արդեն անցել են այս շրջափուլով, ինչը նպաստել է կառավարման համակարգի, որակի ապահովման ուղղությամբ էական բարելավումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհում որոշակիորեն բարելավվել են տվյալների հավաքագրման մեխանիզմները, ինչը նպաստել է կրթական ծրագրերում բարելավումների իրականացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ մեխանիզմների շարունակաբար կիրառումը, հավաքագրված տվյալների վերլուծությունը, դրանց քննարկումը շահակիցների հետ կարող են նպաստել բարձր և միջին օղակների կառավարիչների կողմից կայացվող որոշումների արդյունավետությանը: Կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումն էլ կարող է հիմք դառնալ բուհի առանձնահատկություններին համապատասխան գործիքների ընտրության համար՝ նպաստելով տվյալների հավաքագրման ուղղությամբ հատկացվող ռեսուրսների արդյունավետ կիրառմանը:

Կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության ապահովումը վկայում է բուհի մոտեցման մասին՝ ապահովելու գործընթացների թափանցիկությունը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև շրջանավարտների, նրանց հետագծի, մասնագիտական կարիերայի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, դրա հրապարակայնության ապահովումը, ինչը կարող է նպաստել նաև դիմորդների աճին, բուհի մասին տեղեկատվության հասանելիությանը շահակիցների ավելի լայն շրջանակի համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատության կառավարման համակարգը բարելավվել է նախորդ հավատարմագրումից հետո, ներդրվել են նոր հաստիքներ հաստատության կարիքները հաշվի առնելով, տրամադրվել են ռեսուրսներ հաստատության առաջնահերթ ուղղությունների զարգացման համար, կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ներքին շահակիցներին ներգրավվել որոշումների կայացման մեջ, փորձում է իրականացնել իր գործունեության վրա ազդող գործոնների վերլուծություն, ՊԻԳԲ շրջափուլը որոշակիորեն կիրառվում է վարչարարության գործընթացների իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Համալսարանում իրականացվում են անընդհատ և ինտեգրացված «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերը, որոնք համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 6-7-րդ մակարդակներին: Հիմք ընդունելով նախորդ փորձաքննության արդյունքում ստացած խորհրդատվությունները՝ բուհը վերանայել է կրթական ծրագրերը՝ մասնավորապես տարանջատելով ընդհանրական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական վերջնարդյունքները և փորձելով համապատասխանեցնել դրանք նաև Ոլորտային որակավորումների շրջանակին: ՄԿԾ-ների մասնագրերում ներկայացված են դիմորդին ներկայացվող պահանջները, մասնագիտական գործունեության բնութագրերը, վերջնարդյունքները, ուսուցման և դասավանդման մոտեցումները, գնահատման մեթոդները: Կրթական ծրագրերի հավելվածներն են ուսումնական պլանը և ակնկալվող վերջնարդյունքների քարտեզագրումը Որակավորումների ազգային շրջանակի նկարագրիչներին:

Կրթական ծրագրերի մուտքային պահանջներում մասնագիտական առարկաների իմացությունից զատ, օտարերկրյա ուսանողների համար պարտադիր է նաև անգլերենի իմացությունը: Փորձագիտական ուսումնասիրությունները և դասալսումները ցույց տվեցին, որ տարբեր խմբերում լեզվաիմացության տարբեր աստիճան ունեն ուսանողները, և կրթական վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից դեռևս հստակեցված չէ լեզվի մակարդակը: ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի նկարագրիչներին համապատասխանության տեսանկյունից բուհը փորձում է ուսանողներին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված գիտաժողովների, սեմինարների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են ուղղորդելու ուսանողներին և աջակցելու հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ կրթական ծրագրերի դասընթացներում դեռևս հստակեցված չեն հետազոտական մեթոդներին նվիրված, տվյալների հետ աշխատելուն, եզրահանգումներ իրականացնելուն ուղղված առաջադրանքները:

Հաշվի առնելով կրթական ծրագրերի ինտեգրված լինելու հանգամանքը՝ կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեմատիկ առումով դրանք դեռևս ամբողջությամբ ինտեգրված չեն միմյանց: Ուսումնական ծրագրերում առանձնացված են հիմնական (գիտական) առարկաներ, նախակլինիկական և կլինիկական առարկաներ: Մասնագիտական հանդիպումները և քննարկումները շահակիցների հետ ցույց տվեցին, որ

կրթական ծրագրերում ինտեգրման բաղադրիչը բուհը փորձում է ապահովել ուսանողների մասնագիտական գիտելիքների տրամադրմանը զուգընթաց կլինիկական մտածողություն ձևավորելու միջոցով: Առաջադրանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նախորդ հավատարմագրումից հետո ուսանողներին տրվող առաջադրանքներում ավելացվել են դեպքերի ուսումնասիրությունները, պրակտիկայի ժամաքանակը: Կլինիկական հմտությունների ձևավորման համար՝ օրինակ ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ժամանակ իրականացնում են զննումներ՝ առուսկուլտացիա, պերկուսիա, պալպացիա:

Բուհի առանձնահատկություններով պայմանավորված՝ ուսումնական ծրագրում ներառված են նաև ավանդական բժշկական գիտության առարկաներ: Փորձագիտական այցից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ բուհը գնահատել է այս առարկաների վերջնարդյունքների ձևավորման, դրանց համար նախատեսված կրեդիտների ազդեցությունը շրջանավարտների մասնագիտական հետագծի և ոսումնառության շարունակականության հնարավորությունների ստեղծման վրա: Համադրելով դրանք այն երկրների պահանջներին, որտեղ հետո շրջանավարտները վերադառնում են իրենց կրթությունն ԱԲՀ-ում ավարտելուց հետո՝ պարզ է դարձել, որ ավանդական բժշկության առարկաների կրեդիտների ճանաչման խնդիրներ են առաջանում, և դրանց համար կրեդիտների նախատեսումը հանգեցնում է մյուս մասնագիտական առարկաների կրեդիտների նվազեցմանը: Այս նպատակով ավանդական բժշկության ուղղությամբ առարկաները տեղափոխվել են կամընտրական կառուցամաս՝ թույլ տալով ուսանողներին ընտրել դրանք և լրացուցիչ հմտություններ ստանալ նաև ավանդական բժշկության ուղղությամբ: ԱԲՀ ուսանողները, օգտագործելով բուհի Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի ընձեռած հնարավորությունները, ուսումնասիրում են Իրիդոդիագնոստիկա, Ֆիտոթերապիա, Ասեղ-այրում թերապիա և այլն:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄԿԾ-երում առկա են նաև այնպիսի առարկաներ, որոնք այդ բովանդակությամբ և անվանումով ընկալելի և ճանաչելի չեն այլ երկրներում, ինչպիսիք են տոպոգրաֆիկ անատոմիան, օպերատիվ վիրաբուժությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի ներկայացուցիչները ևս քննարկել են այս հանգամանքը և դիտարկում են առարկայացանկի վերանայման անհրաժեշտությունը:

ԱԲՀ-ն իր առաքելությամբ կարևորում է նոր որակի բժիշկների պատրաստումը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում կկարողանան ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները իրենց ուսումնառության նյութերում ներառում են նաև ժամանակակից բժշկության տարբեր ուղղությունները, այսպես օրինակ «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրում ներառել են իմպլանտալոգիան, բարդ պրոթեզավորումները:

Անդրադառնալով կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցմանը տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջներին՝ հարկ է նշել, որ բուհի ընդունելության ցուցանիշները ցույց են տալիս, որ ներկայումս բուհն առավելապես թիրախավորում է միջազգային աշխատաշուկան և արտերկրից դիմորդների ներգրավումը: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականացվող բենչմարքինգի արդյունքում ուսումնասիրվել են հիմնականում Բելառուսի Հանրապետության բժշկական բուհերի կրթական ծրագրերը՝ բովանդակային խիստ տարբերություններ չունենալով պայմանավորված: Փորձագիտական քննարկումները ցույց տվեցին, որ ուսումնական ծրագրերում և առարկաների բովանդակության մեջ արտացոլված

չեն այն երկրներում տարածված համաճարակների (օրինակ՝ մալարիա) ուսումնասիրությունը, որոնց հետագայում առնչվելու են շրջանավարտները: Որոշ առարկաների շրջանակում, օր.՝ օրթոպեդիկ ստոմատոլոգիա և թերապևտիկ ստոմոտոլագիա, իրականացվել է համեմատական վերլուծություն Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և Իրանի Հանրապետության բուհերի կրթական ծրագրերի հետ մասնագիտական գրականության հստակեցման նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհը դեռևս չի դիտարկել կրթական ծրագրերի համապատասխանեցումը WFME (World Federation for Medical Education՝ Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափանիշներին: Շրջանավարտների կարիքների ուսումնասիրությունը հիմք ընդունելով՝ բուհը նախատեսում է իրականացնել միջոցառումներ մատուցված կրթական ծառայությունների որակի ճանաչման համար՝ օտար-երկրյա (հնդիկ) ուսանողներին նախապատրաստելով FMGE (Foreign Medical Graduate Examination՝ արտասահմանում բժշկական կրթություն ստացած շրջանավարտների ավարտական քննություն) քննություններին: Բուհը վերանայել է Թերապևտիկ առարկաների կրեդիտների բաշխումը, հաշվի առնելով էմբրիոլոգիայի իմացության կարևորությունը՝ ներդրել է այն որպես կամընտրական առարկա: Ուսումնասիրությունների արդյունքում հանվել է բույսերի մորոֆիզիոլոգիա առարկան:

Բուհի դիտարկումները ցույց են տվել, որ նախահիմք հանդիսացող առարկաներում փոփոխության անհրաժեշտություն ներկայումս չկա, որոշ փոփոխություններ են իրականացվել առարկաների դասավանդման կիսամյակների ուղղությամբ առարկաների բովանդակային հաջորդականությունն ապահովելու համար:

Կրթական ծրագրերի դիտարկումը ցույց տվեց, որ բուհը կարևորում է հիմնարար առարկաների ուսուցանումը, այսուհանդերձ դեռևս բավարար չափով կարևորված չեն կենսաէթիկան, բժշկական էթիկան կամ դեոնտոլոգիան: Այս ուղղություններին ուսանողները ծանոթանում են այլ առարկաների, պրակտիկայի գործընթացի ընթացքում:

3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա բուհը բարելավել և բազմազանեցրել է ուսումնառության ու դասավանդման մեթոդները: Դասալսումներից ու կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բուհի դասախոսների կողմից գիտելիքների փոխանցման ու հմտությունների ձևավորման համար կիրառվում են դասախոսությունները, սեմինարները, գործնական պարապմունքների ընթացքում ուսանողների հետ անհատական աշխատանքը: Այսուհանդերձ, ուսումնական պլաններում և կրթական ծրագրերում մեթոդների ընտրության մոտեցումները հստակեցված չեն, մեթոդների ընտրությունն իրականացվում է տվյալ դասընթացը դասավանդող դասախոսի կողմից՝ հաշվի առնելով խմբի և առարկայի առանձնահատկությունները: Բուհի գործընկեր հաստատություններում և համալսարանում ուսանողների գործնական պարապմուքների դիտարկումից պարզ դարձավ, որ երբեմն խմբերը շատ մեծ են (20-22 ուսանող) գործնական պարապունքների իրականացման համար: Վերջին տարիներին ուսանողների թվի աճով պայմանավորված՝ աճել է նաև գործնական պարապմունքների խմբերում ուսանողների թվաքանակը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների իրականացման համար բուհը չի սահմանել նվազագույն պահանջներ, ինչպիսիք են

գործնական պարապունքների ընթացքում ուսանողների առավելագույն քանակ, ուսումնասիրվող դեպքերի նվազագույն քանակ, ուսանող-բուժառու (պացիենտ) հարաբերակցություն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դեռևս չեն կիրառվում բժշկական կրթության դասավանդման այնպիսի ժամանակակից մեթոդներ, ինչպիսիք են PBL (Problem-Based Learning՝ խնդրի վրա հիմնված ուսուցում), Bedside Teaching (անկողնային ուսուցում՝ փոքր խմբերի ուսուցման մասնագիտացված ձև, որը տեղի է ունենում բուժառուի ներկայությամբ): Դասալսումներից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ բուժառուի ներգրավմամբ որոշ դասընթացներ իրականացվում են՝ օգտագործելով ԳԲՈՒԿ-ի միջավայրը, որտեղ հատկապես ավանդական բժշության ուղղությամբ դասընթացներն են իրականացվում: «Ստոմատոլագիա» կրթական ծրագրի պարագայում ևս ուսանողներն ունեն հնարավորություն աշխատելու բուժառուների հետ, մասնակցելու նրանց բուժման գործընթացին: Ուսանողների մոտ կլինիկական մտածողության զարգացման նպատակով որոշ դասընթացների պարագայում կիրառվում են CBL (Case Based Learning՝ դեպքերի վրա հիմնված ուսուցում) մեթոդներ, կազմակերպում են քննարկումներ տվյալ դեպքի շուրջ նաև հիվանդանոցներում գործնական միջավայրում կոնկրետ դեպքի դիտարկումից հետո, օրինակ վիրահատական կամ գինեկոլոգիական միջամտության իրականացման և դրա հետևանքների վերաբերյալ:

Կրթական ծրագրերում ուսանողներին տրվող առաջադրանքներում ոչ միշտ են տեսանելի միջառարկայական կապերը, բայց փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները հիվանդությունները, դրանց բուժման ընթացքը քննարկելիս կարևորում են միջառարկայական կապերի ստեղծումը, այսպես օրինակ կոնկրետ դեպքերի քննարկման ժամանակ կապեր են ձևավորվում ֆիզիոլոգիայի, անատոմիայի և թերապևտիկ ստոմատոլոգիայի միջև: Դասախոսը դիտարկելով այլ առարկայի շրջանակում ուսանողի կողմից որևէ խնդրի վերաբերյալ ոչ ամբողջական ընկալումը, իր դասընթացի շրջանակում ևս մեկ անգամ անդրադարձ է կատարում այլ առարկայի կամ նախահիմք հանդիսացող առարկաներին հաջորդ էտապին անցնելու, նոր գիտելիքներ փոխանցելու համար:

Փորձագիտական խումբը, դիտարկելով ուսանողներին տրվող առաջադրանքները և համադրելով դրանք կիրառվող ռեսուրսների հետ, նշում է, որ բուհը շարունակաբար համալրում է իր ենթակառուցվածքները, այսուհանդերձ դրանց վերազինումը ոչ միշտ է հենվում առաջադրանքների համակարգված բազայի և դրանց համար պահանջվող ռեսուրսների վրա: Դասավանդման գործընթացում կիրառվող տեխնիկական միջոցները, ինչպիսիք են՝ անատոմիական 3D աղյուսակը, սիմուլյացիոն մոդելները, պրոեկտորները, խելացի գրատախտակները և այլն, ձեռք են բերվում համալսարանի կողմից, սակայն կրթական ծրագրերում դեռևս հստակեցված չէ դրանց և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների կապը և թե ինչ հմտություն են ուզում զարգացնել ուսանողների մոտ տվյալ ռեսուրսի ձեռքբերմամբ (օրինակ՝ բարելավել գինեկոլոգիական մոդելավորման ռեսուրսները՝ գինեկոլոգիական հետազոտության հմտությունները զարգացնելու համար և այլն):

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների մոտ կլինիկական մտածողության ձևավորման նպատակով բժիշկ-դասախոսները դասավանդման գործընթացում քննարկում են նաև իրենց փորձառության դեպքերը, ծանոթացնում ուսանողներին բժշկության ժամանակակից մեթոդներին ու ձևերին:

3.3. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Համալսարանում գործում է «ԱԲՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգը: Բուհի կողմից սահմանված 100 միավորանոց գնահատման համակարգում նվազագույն դրական/անցողիկ միավորը 51-ն է: Ըստ սահմանված համակարգի բուհի կողմից կարևորվում են ուսանողների հաճախումները, գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատումը և ինքնուրույն աշխատանքը: Հաշվի առնելով, որ բժշկական կրթության իրականացման համար բուհում ներկայումս սահմանված անցողիկ շեմը 51 միավորն է, իսկ դրա ձևավորման համար հաճախումներին մեծ տոկոս է հատկացված, բուհը որոշակի փոփոխություններ է իրականացրել գնահատման գործոնների բաշխման համար: Այսպիսով, նվազել է հաճախելիության գնահատումը. ինքնուրույն աշխատանքների դերը մեծացնելու նպատակով հաճախումներին տրվել է 16 միավոր նախկին 20-ի փոխարեն, ինքնուրույն աշխատանքներին՝ 14 միավոր՝ նախկին 10-ի փոխարեն: 70 միավոր է հատկացված գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատմանը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առաջադրանքների բազա և դրան համապատասխան գնահատման մեթոդներ չեն առանձնացվել, սակայն բուհի կողմից սահմանվել են պահանջներ ինքնուրույն և գործնական աշխատանքների իրականացման համար: Կրթական ծրագրերի վերանայումից հետո հստակեցվել են ռեֆերատներին ներկայացվող պահանջները, նաև անդրադարձ է կատարվել ակադեմիական ազնվության պահպանմանը՝ մասնագիտական գրականությունից օգտվելիս: Ինքնուրույն աշխատանքներում կլինիկական առարկաների համար ներառվել են այնպիսի առաջադրանքներ, ինչպիսիք են անամնեզի հավաքումը, հիվանդության պատմության լրացումը, բուժման մեթոդների մոդելավորումը և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման մեթոդներն ընտրվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ առարկայի առանձնահատկությունները: Յուրաքանչյուր վերջնարդյունքի գնահատման համար առանձին գնահատման մեթոդ առանձնացված չէ: Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատման 70 միավորից 20-ը հատկացվում է ընթացիկ ստուգմանը, ուսանողների ակտիվությանը, իսկ 50 միավորը՝ ամփոփիչ քննությանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ստանում են հետադարձ կապ դասախոսներից, քննարկում են կատարված սխալները, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ խորհրդատվություն:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողները գործնական պարապունքների ընթացքում ծանոթանում են համապատասխան բուժօգնություն տրամադրելու համար նախատեսված ալգորիթմներին ու քայլերին, որոնք այնուհետև հնարավորություն են ունենում տեսնել կամ կիրառել (բուժառուի համաձայնության պարագայում՝ բժշկի հսկողության ներքո) պրակտիկայի ընթացքում:

Բուհը սահմանել է նաև գնահատականի բողոքարկման ընթացակարգը, որը տեղի է ունենում ուսանողի և ՈւԽ ներկայացուցչի մասնակցությամբ: Բողոքարկման արդյունքում վերջնական գնահատականը հաստատվում է բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից և ամրագրվում տեղեկագրում: Կրկնակի բողոքարկում իրականացնել հնարավոր չէ:

Կլինիկական հմտությունների ձևավորման համար կրթական ծրագրերում ներառված է նաև պրակտիկա: Պրակտիկաները նախատեսված են 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կուրսերում: «Բուժական գործ» կրթական ծրագրի պրակտիկայի համար ընդհանուր առմամբ հատկացված

է 18 կրեդիտ։ Պրակտիկայի ընթացքում ուսանողները հաջորդաբար անցնում են այս ուղղություններով՝ բուժքրոջ օգնական, մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական, բժշկի օգնական (թերապիա), բժշկի օգնական (վիրաբուժություն), բժշկի օգնական (մանկաբարձություն և գինեկոլոգիա), շտապ օգնության բժշկի օգնական։ «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի համար նախատեսված է 15 կրեդիտ։ Պրակտիկայի ընթացքում ուսանողները հաջորդաբար անցնում են այս ուղղություններով՝ բուժքրոջ օգնական, բժիշկ-ստոմատոլոգի (թերապևտ) օգնական, բժիշկ-ստոմատոլոգի (վիրաբույժ) օգնական, բժիշկ-ստոմատոլոգի (օրթոպեդ) օգնական, մանկական բժիշկ ստոմատոլոգի օգնական։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պրակտիկային նախորդող դասընթացները ավարտելուց և անցողիկ միավորները հավաքելուց հետո ուսանողները հնարավորություն են ունենում անցում կատարելու պրակտիկային։ Բուհի կողմից վերանայվել են ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը, նրանում ներառված գնահատման չափանիշները։ Նախորդ հավատարմագրումից հետո 2021-2022 ուստարվանից բուհում ներդրվել է պրակտիկայի թղթապանակը՝ որպես գնահատման միջոց։ Ըստ բուհի ներկայացուցիչների՝ այն հնարավորություն է տալիս գնահատել պրակտիկայի կատարման ընթացքը և ուսանողի առաջընթացը։

Բուհն ունի համագործակցության պայմանագրեր ՀՀ բուժհաստատությունների հետ, որոնք ներառում են նաև պրակտիկաների իրականացումը։ Գործընկեր բուժհաստատություններում պրակտիկա անցնել կարող են ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի ուսանողները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտարերկրյա ուսանողների մեծ մասը պրակտիկան անցնում են իրենց երկրների հիվանդանոցներում, որտեղից բուհը ստանում է համապատասխան հավաստիացում պրակտիկայի իրականացման վերաբերյալ, փաստաթուղթը ներառում է նաև ուսանողի գնահատականը։ Բուհը դեռևս չի հստակեցրել պրակտիկայի վայրերի ընտրության պահանջները (հիվանդանոցի պրոֆիլ, բուժառուների հետ տարվող աշխատանքների ցանկ), սահմանված չեն ընթացիկ գնահատման ստուգաթերթեր (checklist)։ Բուհում դեռևս ամբողջությամբ հստակեցված չեն արտերկրում պրակտիկայի գործընթաց անցնող ուսանողների վերահսկման մեխանիզմները։ Այսուհանդերձ, նախորդ հավատարմագրումից հետո հստակեցվել են պրակտիկայի գնահատման պահանջները և բաղադրիչները։ Պրակտիկայի գնահատականը ձևավորելիս հաշվի են առնվում հերթապահությունները (14 միավոր), հաճախումները (16 միավոր), ընթացիկ ստուգումը (20 միավոր) և ամփոփիչ ստուգումը (50 միավոր)։ Արտերկրում պրակտիկա անցնող ուսանողների դեպքում ամփոփիչ ստուգումը տեղի է ունենում առցանց տարբերակով Zoom հարթակի կիրառմամբ՝ համալսարանի պրակտիկայի պատասխանատուների մասնակցությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաջորդ ուստարվանից բուհը նախատեսում է նաև արտերկրում պրակտիկա անցած ուսանողների համար ներդնել պրակտիկայի պաշտպանության գործընթացը՝ գնահատման օբյեկտիվության ապահովման համար։

Համալսարանում ուսանողների ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ամփոփիչ ավարտական ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված կարգի և համալսարանի «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման» կարգի համաձայն։ Հանձնաժողովում ընդգրկված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ։ Ամփոփիչ ատեստավորումը ներառում է ստուգման երկու փուլ՝ գործնական

ունակությունների ստուգում և բանավոր քննություն: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը բարելավել է քննական հարցատամսերը, կարևորելով կլինիկական մտածողության և ձեռքի հմտությունների գնահատումը՝ ավելացվել են իրավիճակային խնդիրները և հմտությունների ցուցադրումը մուլյաժների վրա: Բուհում դեռևս չեն կիրառվում բժշկական կարողությունների գնահատման համար նախատեսված OSCE (Objective Structured Clinical Examination՝ Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննություն), OSPE (Objective Structured Practical Examination՝ Օբյեկտիվ կառուցվածքային գործնական քննություն) քննությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նորակառույց մասնաշենքում բուհը նախատեսում է նման ենթակառուցվածքների ստեղծումը քննության ձևաչափի փոփոխման համար:

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

Կրթական ծրագրերի վերանայումն ու բարելավումն իրականացնելիս բուհը բենչմարքինգ է իրականացրել գործընկեր բուհերի կրթական ծրագրերի հետ: Բուհն իր կրթական ծրագրերը համեմատական վերլուծության է ենթարկել Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի և Վիտեբսկի պետական բժշկական համալսարանների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեռևս չեն իրականացվել բենչմարքինգի իրականացման աշխատանքներ այն երկրների կրթական ծրագրերի վերաբերյալ, որտեղ կրթությունն ավարտելուց հետո շարունակում են իրենց ուսումնառությունն ու աշխատանքային գործունեությունը ԱԲՀ շրջանավարտները: Իրականացված ուսումնասիրությունների, շրջանավարտների կարիքների դիտարկման արդյունքում փոխվել է ավանդական բժշկությանն առնչվող առարկաների կառուցամասը, այս առարկաները տեղափոխվել են հիմնականում կրթական ծրագրերի կամընտրական հատված՝ հետագայում շարժունության ու փոխանակման համար խնդիրներ չառաջացնելու համար: Բուհի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում նաև վերհանվել է այն հանգամանքը, որ եվրոպական երկրներում ինտեգրված ուսումնական ծրագրերում այլևս առանձին կերպով չեն դասավանդվում այնպիսի առարկաներ, ինչպիսիք են պաթանատոմիան և պաթոֆիզիոլոգիան: Այս հանգամանքը ներկայումս գտնվում է բուհի ուշադրության կենտրոնում, բուհում քննարկումներ են ընթանում առարակայացանկի վերանայման ուղղությամբ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհում բենչմարքինգի գործընթացներն ուղղորդվում են հիմնականում առարկաների համեմատական ուսումնասիրությանը, այլ ոչ թե վերջնարդյունքների դիտարկմանը: Ստոմատոլոգիայի ուղղությամբ բուհը կրթական ծրագրերը համեմատել է Կազանի և Սանկտ Պետերբուրգի կրթական ծրագրերի հետ՝ հաշվի առնելով, որ որոշ շրջանավարտներ իրենց մասնագիտական գործունեությունը շարունակում են նաև այս աշխատաշուկայում:

Համալսարանը կնքել է համաձայնագրեր ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովելու նպատակով Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի և ԱՄԷ Շարժայի «Սըքսես Փոինթ» քոլեջի հետ: Վերջինիս հետ իրականացվել է 16 ուսանողի փոխանակում: Շարժունության այլ դեպքեր բուհում դեռևս չկան:

3.5. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Համալսարանը 2017թ. մշակել է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը: ԱԲՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման հիմնական մեխանիզմներն են դասալսումները, ուսանողների և դասախոսների հետ իրականացվող քննարկումները, նրանց շրջանում կազմակերպվող հարցումները: 2020թ. բուհը ձևավորել է նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խումբ, որտեղ ներգրավվել են կրթական ծրագրերի ղեկավարը, ուսումնական մասի վարիչը, ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ՈՒԳԸ նախագահը, նաև արտաքին շահակից բժշկական ոլորտից: Իրականացվող քննարկումների արդյունքում վերանայվել են կրթական ծրագրերի վերջնարդյունքները, դրանք քարտեզագրվել են՝ կապակցվելով որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը դեռևս չունի կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման չափելի ցուցիչներ և մեխանիզմներ՝ գնահատելու կրթական ծրագրերի արդյունավետությունը և ուսանողի կողմից յուրաքանչյուր վերջնարդյունքի ձեռքբերումը: Այսուհանդերձ, կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար բուհը կիրառում է նաև հարցաթերթերը, որոնց արդյունքում ավելացվել է պրակտիկայի ժամաքանակը: Կրթական ծրագրերում բժիշկ-կլինիցիստների ներգրավման արդյունքում վերհանվել է նաև գործնական ժամերի ավելացման կարիքը, որի հետևանքով փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրերում՝ ավելացնելով գործնական պարապմունքների քանակը և ձեռքի հմտություն ձևավորող առաջադրանքները: Հաշվի առնելով ուսումնառության ավարտից հետո հնդիկ ուսանողների FMGE քննություններ հանձնելու պարտադիր հանգամանքը՝ բուհը որոշակիորեն փորձում է ուսումնառության ընթացքում պատրաստել ուսանողներին այդ քննություններին և քննական հարցերում ավելացնում է այս քննությանն առնչվող որոշակի հարցեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները ևս պատրաստակամ են աջակցելու ուսանողներին պատրաստվել այս քննությանը՝ չնայած առանձին ժամեր կամ նախապատրաստական դասընթացներ բուհում դեռ առկա չեն:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացում հաշվի են առնվում նաև ամփոփիչ ատեստավորման ավարտական հանձնաժողովների հաշվետվությունները: Հանձնաժողովների հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում քննության տոմսերում ավելացվել են իրավիճակային խնդիրները, ինչպես նաև գործնական կարողությունները ցուցադրելուն ուղղված առաջադրանքները: Հաշվետվությունների ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովները կարևորում են «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի պարագայում իրավիճակային խնդիրներում կլինիկական հետազոտությունների հետ կապված նկարների (սոնոգրաֆիկ, համակարգչային շերտագրություն և այլն) և հետազոտության պատասխանների ավելացումը, Օրթոդոնտիա առարկայից հարցերի ավելացումը գործնական ունակությունների ատեստավորման փուլում: «Բուժական գործ» կրթական ծրագրի պարագայում կարևորվել է հետազոտման սիմուլյացիոն հնարավորությունների ընդլայնումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը վերանայել է կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ համապատասխանեցնելով դրանք Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին:

Կրթական ծրագրերում միջազգային աշխատաշուկայի պահանջների ներառումը, Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի չափանիշներին համահնչեցումը կնպաստեն բուհի շրջանավարտների կրթության շարունակականության ապահովմանը և մասնագիտական դաշտում իրացվելու մակարդակի աճին: Փորձագիտական խումբը կարևորում է բուհի մոտեցումները՝ պատրաստելու գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության մեթոդներին տիրապետող նոր որակի բժիշկներ: Տեսանելի է, որ վերջին տարիներին պրակտիկ ոլորտից բժիշկ-դասախոսների ներգրավումը, նրանց կողմից հանձնարարվող առաջադրանքները ևս նպաստել են ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է կրթական ծրագրերում միջառարկայական կապերի ապահովումը, հանձնարարությունների լիարժեք ու հստակ արտացոլումը՝ կապակցելով վերջնարդյունք-դրան հասնելու համար նախատեսված առաջադրանք-ռեսուրս շղթան: Ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերում ուսանողների տարածաշրջանի և երկրների հիվանդությունների, համաճարակների ուսումնասիրությունը կարող է մեծապես նպաստել ուսանողների կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը կարևորում է ուսանողների կարիքները, քայլեր իրականացնում նրանց նախապատրաստելու FMGE քննություններին: Այս համատեքստում կարևոր է շարունակաբար զարգացնել այս աշխատանքները, դիտարկել ուսանողների առաջընթացը մասնագիտական կրթության շարունակման և աշխատանքային գործունեության իրականացման ուղղությամբ, ինչը կնպաստի կրթական ծրագրերի շարունակական համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ջանքերն ուսումնառության ու դասավանդման մեթոդների բազմազանեցման գործում, ինչը նպաստում է կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը և ուսանողների կարողությունների զարգացմանը: Բուհի կողմից կրթական ծրագրերում ուսանողներին տրվող բոլոր առաջադրանքների (այդ թվում՝ հետազոտական) արտացոլումը և դրանց համար նախատեսված մեթոդների հստակեցումը կարող են նպաստել կրթական ծրագրերի պլանավորման արդյունավետության բարձրացմանը: Բժշկական կրթության առանձնահատկությունները հաշվի առնելով հստակ պահանջների սահմանումը գործնական պարապմունքների խմբերի, ուսումնասիրվող դեպքերի քանակի վերաբերյալ՝ կարևոր են ապահովելու բուհի սահմանած նշաձողը և պատրաստելու որակյալ մասնագետներ: Մեթոդների շարունակաբար զարգացումը, PBL, Beside Teaching մեթոդների ներդրումը, դեպքերի բազայի ստեղծումը և շարունակական համալրումը կարող են բուհին հնարավորություն տալ ավելի հստակ ուրվածգելու մասնագետի պատրաստման ընթացքը և ձևավորելու կլինիկական մտածողություն ունեցող շրջանավարտներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը քայլեր է իրականացրել բարելավելու ուսանողների գնահատման համակարգը, ինչի արդյունքում փոփոխվել են գնահատման բաղադրիչները՝ առավել շատ կարևորելով ուսանողների ինքնուրույն աշխատանքը և կարողությունների զարգացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ըստ առարկաների առանձնահատկությունների և ուսանողներին տրվող առաջադրանքների գնահատման մեթոդների տարբերակումը կարող է նպաստել ուսումնառության արդյունքների առավել օբյեկտիվ գնահատմանը և ուսանողների կրթական կարիքների վերհանմանը: Դրական հանգամանք է, որ բուհը հստակեցրել է ինքնուրույն աշխատանքներին տրվող

պահանջները, ինչը ավելի է չափելի է դարձրել դրանց գնահատումը: Դասախոսների կողմից ուսանողներին տրվող հետադարձ կապը նպաստում է նրանց ուսումնառության արդյունավետության բարձրացմանը և հաջորդ՝ առավել բարդ առաջադրանքների ավելի դյուրին իրականացմանը:

Անդրադառնալով ուսանողների պրակտիկաներին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների վայրերի ընտրության չափանիշների սահմանումը բուհի կողմից, օտարերկրյա ուսանողների պրակտիկայի վերահսկողության մեխանիզմների լավարկումը, կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան ստուգաթերթերի մշակումը կարող են մեծապես բարձրացնել պրակտիկաների արդյունավետությունը: Դրական է պորտֆոլիոների ներդրումը, ինչը հնարավորություն է տալիս ամբողջական պատկեր ձևավորել ուսանողների պրակտիկայի ընթացքի վերաբերյալ:

Ուսանողների ձեռքի հմտությունների ստուգման, կլինիկական կարողությունների գնահատման համար ամփոփիչ ատեստավորման քննությունների բարելավումը նպաստել է շնորհվող որակավորումների արժանահավատության բարձրացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն անհրաժեշտություն ունի ներդնելու բժշկական կրթության գնահատման աշխարհում ընդունելի ձևերը՝ OSCE, OSPE քննությունները, ինչը կարող է հանգեցնել ուսանողների կարողությունների առավել օբյեկտիվ ու արդյունավետ գնահատմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա կրթական ծրագրերի կարիքների գնահատումը նպաստել է դրանց լավարկմանը: Գործընթացների լավարկմանը կարող են նպաստել նաև նրանց հետ պարբերական քննարկումները կրթական ծրագրերի վերաբերյալ:

Կրթական ծրագրերի բարելավմանն է նպաստել նաև գործընկեր համալսարանների հետ կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը, ինչի արդյունքում փոփոխություններ են տեղի ունեցել առարկայացանկում և մասնագիտական գրականության ընտրության մեջ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ուղղորդումը այն երկրների բուհերի կրթական ծրագրերի հետ, որտեղից բուհն ունենում է դիմորդներ, կարող է նպաստել արտաքին աշխատաշուկայում պահանջվող կարողություններ ունեցող շրջանավարտների պատրաստմանը: Բենչմարքինգի ուղղորդումը վերջնարդյունքներին, այլ ոչ միայն առարկաներին կարող է նպաստել վերջնարդյունահենք կրթության մատուցմանը և միջազգային գործատուների պահանջները բավարարող մասնագետների պատրաստմանը:

Բուհի կրթական ծրագրերի փոփոխությունները, ավանդական բժշկության առարկաների տեղափոխումը կամընտրական կրթամաս որոշակիորեն ուղղված են նաև ուսանողների շարժունության ապահովմանը, կրեդիտների ճանաչմանը, ինչը դեռևս հանգեցրել է միայն 16 ուսանողների փոխանակմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է համագործակցությունների հաստատումը, կրթական ծրագրերի համահնչեցմանն ուղղված աշխատանքների իրագործումը, ինչը կարող է նպաստել ուսանողների շարժունության աճին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ կրթական ծրագրերի մշտադիտարկմանն ուղղված բուհի ջանքերը, ինչի արդյունքում բովանդակային փոփոխությունների են ենթարկվել որոշ մասնագիտական առարկաներ, լավարկվել է ամփոփիչ ատեստավորման գործընթացը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման չափելի

ցուցիչների սահմանումը կարող է նպաստել կրթական ծրագրերով սահմանված յուրաքանչյուր վերջնարդյունքի գնահատման համակարգի ներդրմանը բուհում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատության կրթական ծրագրերը համապատասխանում են ԱԲՀ առաքելությանը, նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են կրթական վերջնարդյունքները, որոշակիորեն հստակեցվել են դրանց ձեռքբերման ուղիները, բուհը ներգրավել է բժիշկ դասավանդողների, որոնց կողմից կիրառվող դասավանդման մեթոդների շնորհիվ նպաստում է ուսանողների կլինիկական մտածողության զարգացմանը, բարելավել են ընթացիկ գնահատման և ամփոփիչ ատեստավորման գնահատման չափանիշները և բաղադրիչները, քայլեր է իրականացրել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ուղղությամբ, բուհում գործում են կրթական ծրագրերի մշտադիտարկման, գնահատման որոշ մեխանիզմներ ու ընթացակարգեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԱԲՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով հայ դիմորդների ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում: ԱԲՀ ընդունվելու համար տեղացի դիմորդները հանձնում են միասնական քննություններ կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա մրցութային քննություններից ընտրելով երկուսը և Հայոց լեզվից՝ որպես ոչ մրցութային առարկա: ԱԲՀ-ի 2-րդ կուրսում իրենց ուսումը շարունակելու համար կարող են դիմել նաև բժշկական քոլեջների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները:

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության, ինչպես նաև ԱԲՀ Օտարերկրյա ուսանողների ընդունելության կարգերի համաձայն: ԱԲՀ օտարերկրյա ուսանողների գիտելիքների ստուգման կարգի համաձայն՝ օտարերկրյա դիմորդները քննություն են հանձնում անգլերեն, կենսաբանություն, քիմիա առարկաներից ՀՀ միջնակարգ կրթական ծրագրի բովանդակային սահմաններում:

ԱԲՀ-ն իրականացնում է նաև նախապատրաստական դասընթացներ օտարերկրյա դիմորդներին քննություններին պատրաստելու համար: Դասալսումներից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտարերկրյա ուսանողներն ունեն լեզվաիմացության տարբեր մակարդակներ: Բժշկական կրթական ծրագրերի առանձնահատկություններից ելնելով՝ ընդունելությունը հնարավոր է իրականացնել միայն առկա կրթաձևում: Ներկայումս բուհում

սովորում են 621 ուսանողներ, որոնցից 595-ը օտարերկրյա ուսանողներ են: ՀՀ-ից ուսանողներ սովորում են միայն «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրում (26 ուսանող):

Ուսանողների հավաքագրման նպատակով բուհը ընդունելության մասին տեղեկատվությունը տրամադրում է պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի, ինչպես նաև գովազդների միջոցով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տարեցտարի նվազում է հայ ուսանողների թիվը, և ներկայումս բուհը միտված է առավելապես օտարերկրյա ուսանողների հավաքագրմանը: Օտարերկրյա ուսանողների հավաքագրման նպատակով ԱԲՀ-ն համագործակցում է դիմորդների հավաքագրման մասնավոր գործակալությունների հետ, որոնք պատասխանատու են արտերկրում ԱԲՀ ծրագրերի ներկայացման, ինչպես նաև ՀՀ-ում ուսումնառության նախապատրաստման և կազմակերպչական աջակցության համար:

ԱԲՀ-ից դուրս մնացած ուսանողների թիվը վերջին երկու տարիներին եղել է յուրաքանչյուր տարի մոտ 36-ը (6%), վերականգնվել է յուրաքանչյուր տարի 1 ուսանող (0.17%): Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների հեռացումների հիմնական պատճառը անբավարար առաջադիմությունն է, որոշ դեպքերում նաև ուսման վարձը չվճարելը: Անբավարար առաջադիմության պատճառով հեռացված ուսանողների քանակը նվազեցնելու նպատակով համալսարանում ուշադրություն է դարձվում խորհրդատվական, անհատական աշխատանքների կազմակերպմանը:

4.2. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

ԱԲՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով կիրառվում են տարբեր մեխանիզմներ, մասնավորապես՝ հարցումներ, հանդիպումներ, քննարկումներ ուսանողական խորհրդի հետ: Ուսանողների շրջանում իրականացվող հարցումներն ուղղված են դասավանդման, գնահատման գործող համակարգի արդյունավետության, նյութատեխնիկական բազայից բավարարվածության վերաբերյալ տվյալների հավաքագրմանը:

Իրականացված հարցումների վերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները կարևորել են գործնական հմտությունների զարգացումը, անգլալեզու գրականության ավելացումը, պրակտիկաների կազմակերպման համար բազմապրոֆիլ հիվանդանոցների ընտրությունը, պրակտիկաների ժամաքանակի ավելացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի կողմից փոփոխություններ են իրականացվել տեսական և գործնական ժամերի հարաբերակցության մեջ, ավելացվել են գործնական պարապմունքների դասաժամերը, որոշակի քայլեր են իրականացվել մասնագիտական գրականության համալրման ուղղությամբ էլեկտրոնային գրադարանային ցանցերին միանալու միջոցով: Այսուհանդերձ, փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ օտարալեզու մասնագիտական գրականությունը դեռևս սահմանափակ է: Կարիքների վերհանման արդյունքում թարմացվել է նյութատեխնիկական բազան՝ 25 համակարգիչներով, կշեռքներով և մուլյաժներով:

Ուսանողների կրթական կարիքները, արտերկրում պրակտիկան անցնելու հնարավորությունները քննարկվում են նաև Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված հանդիպումների ժամանակ, անհրաժեշտության դեպքում դրանք այնուհետև ուսանողների նախաձեռնությամբ քննարկվում են Կառավարման և Գիտական խորհուրդներում: Այսպես օրինակ կարելի է նշել ռեսուրսների, մուլյաժների, ուսումնական

գործընթացում կիրառվող նյութերի համալրման հարցերի քննարկումը և բուհի կողմից իրականացված համալրումները:

4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Բուհում ամբիոնների կողմից սահմանված է հստակ ժամանակացույց լրացուցիչ խորհրդատվության տրամադրման համար: Լրացուցիչ խորհրդատվություններ տրվում են առարկայական տարբերություն ունեցող, ինքնուրույն աշխատանք կատարող (ռեֆերատ, շնորհանդես և այլն), դասընթացի վերաբերյալ հարցեր ունեցող ուսանողներին: Խորհրդատվությունները տրվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակով: Ուսանողները խորհրդատվություն են ստանում նաև քննություններից առաջ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անհրաժեշտության դեպքում դասախոսները ևս պատրաստակամ են ուսանողներին օժանդակություն ցուցաբերելու, նաև անհատապես հարցերին պատասխանելու համար: Խորհրդատվության տրամադրման համար կիրառվում են նաև առցանց հարթակները (Zoom), սոցիալական ցանցերը: Ուսանողներին անհրաժեշտ ուղղորդում, կրթական ծրագրերի իրականացման, դասացուցակների, պրակտիկաների կազմակերպման մասին տեղեկատվություն են տրամադրում նաև կուրսի խորհրդատուները:

Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների 100%-ը ընդգրկված է խորհրդատվական պարապմունքներում, իսկ 75%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում ուսանողների շրջանում անգլերենի կամ մասնագիտական ուղղությունների վերաբերյալ լրացուցիչ պարապմունքներ չեն իրականացվում, այնուամենայնիվ անհրաժեշտության դեպքում դասախոսները լրացուցիչ աշխատում են դրանց կարիքն ունեցող ուսանողների հետ:

4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԱԲՀ-ում գործում է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ցանկացած խնդիր քննարկում են նախ խորհրդատուների, այնուհետև ուսումնական մասի և ամբիոնի, ղեկավար կազմի հետ: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում ուսանողների և վարչական աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները խնդիրների առկայության դեպքում ունեն հնարավորություն դիմելու վարչական անձնակազմին, բարձրացնել իրենց հուզող խնդիրները և ստանալ դրանց լուծումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները դիմել են վարչական անձնակազմին վարձավճարի, գնահատականների բողոքարկման վերաբերյալ հարցերով: Արդյունքում տրամադրվել են վարձավճարի զեղչեր ինչպես ծնողազուրկ ուսանողների, այնպես էլ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շրջանում, ներկայացվել են գնահատականների բողոքարկման հնարավորությունները:

Վարչական անձնակազմին դիմելու առանձին ժամանակացույց բուհում սահմանված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական մասը, դեկանը, արտաքին կապերի բաժինը և մյուս ստորաբաժանումները հասանելի են ուսանողների համար աշխատանքային օրվա ընթացքում: Ինքնավերլուծության համաձայն՝ վարչական

անձնակազմին դիմող ուսանողների 76 տոկոսը բավարարված է նրանց տրամադրած օժանդակությունից:

4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԱԲՀ-ում ձևավորված չէ կարիերային նպաստող ծառայությունների մատուցման առանձին ստորաբաժանում: Բուհի նորկայացուցիչների համաձայն՝ այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ բուհն ավարտելուց հետո շրջանավարտներն անհրաժեշտություն ունեն մասնագիտական կրթությունը շարունակել օրդինատուրայում կամ ասպիրանտուրայում մասնագիտական աշխատանք իրականացնելու հնարավորության համար: Այսկերպ որոշակիորեն խզվում է կապը շրջանավարտների և գործատուների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների հետ կապի պահպանմամբ, նրանց կարիերայի ուղղորդման աշխատանքներով զբաղվում է ուսումնական մասը:

Համալսարանում առկա է շրջանավարտների բազա, որը տարին մեկ անգամ թարմացվում է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած դեռևս ոչ միշտ է հնարավոր լինում ապահովել կապն օտարերկրյա շրջանավարտների հետ, բայց նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է իրականացրել բազայի պարբերական թարմացման ուղղությամբ: Միջազգային շրջանավարտների հետ կապը հաստատվում է հիմնականում սոցիարթակների միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը ևս իրեն դիտարկում է գործատու՝ իր լավագույն շրջանավատներին ներգրավելով դասավանդման գործընթացներում, ԳԲՈՒԿ-ում և ուսումնաօժանդակ կազմում: Այժմ համալսարանի աշխատակազմի 7.7%-ը համալսարանի շրջանավարտներն են:

Բուհը համագործակցում է նաև ՀՀ-ում գործող բժշկական հաստատությունների հետ, սակայն հաշվի առնելով ուսանողների գերակշիռ մասի օտարերկրյա լինելու հանգամանքը, նրանց հետ համագործակցությունը հիմնականում ուղղվում է ուսումնառության ընթացքում պրակտիկաների կազմակերպմանը:

Ըստ ինքնավերլուծության՝ Ավանդական բժշկության համալսարանի և «AvoTar» մասնագիտական ուսուցման և հավաքագրման գործակալության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակում ընկերությունները նախատեսում են համագործակցել Գերմանիայում ԱԲՀ Բուժական ֆակուլտետի շրջանավարտների համար համապատասխան աշխատանք գտնելու հարցում:

4.6. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ԱԲՀ-ն իր 2020-2025թթ. ՌԾ-ում խնդիր է դրել ընդլայնել ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին: Ուսանողների ներգրավվածությունը հետա-զոտական աշխատանքներում արտահայտվում է գիտաժողովների, սեմինարների, դասախոսների գիտահետազոտական աշխատանքների ժամանակ փորձերին մասնակ-ցությամբ, համահեղինակությամբ հոդվածների հրապարակմամբ: ԱԲՀ ուսանողները և ՊԴ կազմը ակտիվ մասնակցություն են ունեցել Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ՝ իրականացվող կոնֆերանսներին, գիտակրթական միջոցառումներին: Համալսարանի որոշ ուսանողներ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտաշխատողների հետ համատեղ փորձեր են իրականացրել, այսպիսի օրինակ է առնետների վիրահատությունների

իրականացումը և կենդանիների վարքի դրսևորումների ուսումնասիրությունն ուսանողների կողմից:

Բելառուսի Գրոդնոյի համասարանի հետ համագործակցության շրջանակներում 2022 թ. կազմակերպվել են առցանց և առկա գիտական դասախոսություններ, որոնց մասնակցություն են ունեցել նաև ուսանողները:

ԱԲՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ 2023թ.-ին իրականացվել է «Ապացույցների վրա հիմնված ինտեգրատիվ բժշկություն» խորագրով ուսանողական կոնֆերանս: 2021-2022 ուստարում ԱԲՀ ուսանողներից երեքն ունեցել են տպագրություններ հոդվածների և թեզիսների տեսքով: Համալսարանի երկու ուսանողներ՝ գիտական ղեկավարների հետ համատեղ պատրաստել են գիտական հոդվածներ և ելույթներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում: Ուսանողներից մեկը 2022թ. մասնակցել է Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի կողմից կազմակերպված «Երիտասարդ գիտնականների ժամանակակից նվաճումները բժշկության մեջ» թեմայով հանրապետական գիտագործնական գիտաժողովին:

Հետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցությունը խթանելու նպատակով ԱԲՀ-ում հետազոտական աշխատանքներ իրականացրած ուսանողները ստանում են համապատասխան վկայականներ:

Փորձագիտական խմբի կողմից ուսնաողներին տրվող առաջադրանքները և մասնագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ բուհում դեռևս ինստիտուցիոնալացված չեն ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմները: Կրթական ծրագրերում հստակ չեն հետազոտության մեթոդների ուսումնասիրման հիմնահարցերը, դասավանդվող առարկաներում առանձին կամ ինտեգրված այլ առարկայի շրջանակում չի ուսուցանվում հետազոտության մեթոդաբանությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անհրաժեշտության դեպքում դասախոսներն անհատապես աշխատում են ուսանողների հետ՝ աջակցելու նրանց իրենց ուսումնասիրություններն իրականացնելիս, ռեֆերատները, ինքնուրույն աշխատանքները, հոդվածները պատրաստելիս:

4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պատասխանատու կառույց՝ Ուսանողական խորհուրդը: ՈՒԽ-ում ներգրավված են, ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղացի ուսանողներ: Կառույցը տեղեկատվության տարածման նպատակով պարբերաբար հանդիպումներ է իրականացնում ուսանողների շրջանում, օգտագործում է նաև ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ առավել նախաձեռնողական են օտարերկրյա ուսանողները, որոնց կողմից վերհանված խնդիրները ՈՒԽ նիստերից զատ քննարկվում են նաև համալսարանի ղեկավար կազմի հետ Կառավարման և Գիտական խորհրդի նիստերի շրջանակներում: Այսպես օրինակ, ուսանողները բարձրացրել են նյութատեխնիկական ռեսուրսների բարելավման, պրակտիկաների վայրերի բազմազանեցման, գնահատականների բողոքարկման խնդիրները:

Տեղացի ուսանողներին ևս ՈՒԽ-ն փորձում է ներգրավել իր աշխատանքներում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև Արտաքին կապերի բաժնի աշխատակիցներին թարգմանության իրականացման համար: Փորձագիտական այցից պարզ

դարձավ, որ լեզվաիմացությունը խոչընդոտ չէ տեղացի և օտարերկրյա ուսանողների փոխգործակցության համար։

Ուսանողներն ՈւԽ-ին դիմում են նաև մշակութային միջոցառումների, սոցիալական նախաձեռնությունների իրականացման նպատակով։ Այսպես օրինակ, իրականացվել են շախմատային, ֆուտբոլային մրցություններ, տոնական օրերին նվիրված միջոցառումներ, մասնագիտական բանավեճեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ բուհը պատրաստակամ է աջակցել ուսանողների նախաձեռնություններին՝ ըստ անհրաժեշտության կազմակերպչական ծախսերի իրականացման համար հատկացնելով նաև ֆինանսական միջոցներ։

2021 թ. բուհը մշակել է նաև ուսանողի ուղեցույց, որտեղ արտացոլված են համալսարանի առաքելությունը, ուսանողների պարտականությունները, ուսումնական գործընթացին՝ պրակտիկային, գնահատման համակարգին, ակադեմիական ազնվության պահպանմանը և որակի ապահովմանն առնչվող կանոնակարգերը և նկարագրերը։

4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԱԲՀ-ի ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատումն ու որակի ապահովումն իրականացվում է ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումների, դասալսումների, հանդիպում-քննարկումների միջոցով։ Ուսանողների շրջանում անցկացված հարցումներն ուղղված են եղել գնահատելու առկա ռեսուրսների համապատասխանությունը կրթական ծրագրերի պահանջներին, ուսանողների բավարարվածությանը խորհրդատվական ծառայություններից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները քննարկվում են շահակիցների հետ և բուհը փորձել է միջոցներ տրամադրել ռեսուրսների բարելավման նպատակով։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաճախ հարցաշարերում հարցերը բավական ընդհանրական են, իսկ վերլուծությունենրում պատասխանները խմբավորված չեն ըստ ուղղությունների, առանձնացված չեն բարելավման հնարավորությունները։ Ինքնավերլուծության համաձայն՝ բուհը նախատեսում է բարելավել հարցումների բովանդակությունն ավելի լիարժեք տեղեկատվություն ստանալու համար, պարզելու՝ ինչ ընթացք և լուծում է տրվել բարձրացված խնդրին կամ առաջարկությանը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհում կանոնակարգված են ուսանողների հավաքագրման և ընտրության մեխանիզմները, ինչը նպաստում է ուսանողների ընդունելության թվաքանակի ընդլայնմանը և դիմորդների հոսքի մեծացմանը։ Դրական հանգամանք է, որ բուհը, փոխելով դիմորդների հավաքագրման շուկան և կենտրոնանալով օտարերկրյա ուսանողների ներգրավման վրա, կարողանում է հավաքագրման արդյունավետ մեխանիզմներ կիրառել, ինչը նպաստում է նաև կրթական ծրագրերի իրականացման շարունակականությանը։ Այս տեսնակյունից տեղացի ուսանողների ընդունելության գործընթացը շարունակելու դեպքում կարևոր է նաև տեղացի ուսանողների ներգրավման արդյունավետության գնահատումը և դրա արդյունքներով պայմանավորված աշխատանքների իրականացումը ՀՀ դպրոցների, հասարակության ավելի լայն շերտերի հետ, ինչը հնարավորություն կտա բուհի կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը հասանելի դարձնել նաև տեղացի դիմորդներին։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ

բուհը նախապատրաստական դասընթացների հնարավորություններ է ստեղծել դիմորդների կայուն հոսքն ապահովելու համար:

Դրական հանգամանք է, որ բուհն ուսանողների կարիքները դնում է իր գործունեության հիմքում, փորձում աջակցել նրանց առաջացած հարցերին պատասխանելու ու կրթական կարիքներին արձագանքելու միջոցով: Փորձագիտական խումբը գտնում է, որ հանդիպումների պարբերաբար իրականացումը շահակիցների հնարավորինս լայն շրջանակի ներգրավմամբ կնպաստի կրթական ծրագրերի բարելավմանը և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը ստեղծել է նաև խորհրդատվության տրամադրման հնարավորություններ բուհի ուսանողների համար, ինչի արդյունքում նվազել են նաև ուսնառողների հեռացումների դեպքերը: Սա նաև լավ հնարավորություն է ուսանողների առաջադիմության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև անգլերենի, նեղ մասնագիտական առարկաների ուղղությամբ լրացուցիչ պարապմունքների իրականացման, այս ուղղությամբ աշխատանքների կանոնակարգման կարևորությունը, ինչը հնարավորություն կտա մասնագիտական անգլերենի մակարդակը բարձրացնել, օգտվել օտարալեզու մասնագիտական գրականությունից և մասնակցել բժշկական մասնագիտական քննարկումներին փորձի փոխանակման նպատակով:

Դրական հանգամանք է, որ բուհի վարչական կազմը պատրաստ է աջակցել ուսանողներին և տրամադրել համապատասխան աջակցություն, ինչը նպաստում է ուսանողների բավարարվածության մակարդակի բարձրացմանը իրենց տրամադրվող ծառայություններից, նրանց ինտեգրմանը ՀՀ կրթական միջավայրում:

Փորձագիտական խումբը, հաշվի առնելով բուհ-շրջանավարտ-գործատու կապերի խզումը մասնագիտական կրթությունը շարունակելու անհրաժեշտությամբ պայմանավորված, այնուամենայնիվ կարևորում է, որ բուհը ուղիներ որոնի տեղական և օտարերկրյա գործատուների կարիքներն ուսումնասիրելու, կապեր հաստատելու, ինչը կնպաստի շրջանավարտների կարիքների վերհանմանը: Շրջանավարտների մասնագիտական հետագծի պարբերական և կանոնավոր ուսումնասիրությունը, դրա հիման վրա քննարկումների իրականացումը կարևոր են նաև կրթական ծրագրերի բարելավման համար:

Անդրադառնալով հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավմանը՝ փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը փորձում է ընդլայնել գիտաժողովների, սեմինարների մասնակցության հնարավորությունները: Դրա արդյունքում որոշակիորեն մեծացել է նման գործընթացներին մասնակցող ուսանողների մոտիվացիան, Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվող գիտաժողովներին ուսանողների մասնակցությունը: Կոնֆերանսներում ուսանողների ներգրավմանը նպաստում է նաև դասախոսական կազմի կողմից համապատասխան աջակցության տրամադրումը, համատեղ աշխատանքների իրականացումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև ուսնառողներին տրվող առաջադրանքներում հետազոտական բաղադրիչի ավելացման կարևորությունը, դրանց համակցումը կրթական ծրագրերի նպատակների հետ, ինչը կնպաստի ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին համահունչ հետազոտական կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը:

Դրական հանգամանք է, որ բուհի Ուսանողական խորհուրդն ակտիվորեն ներգրավված է ուսանողների իրավունքների պաշտպանության գործընթացներում, հանդես է գալիս առաջարկներով, ինչը նպաստում է կրթական միջավայրի բարելավմանը և

ուսանողական ներուժի օգտագործմանը իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու համար։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհում գործում են կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տվել բուհին բացահայտել ուսանողների կարիքները և բարելավել կրթական ծառայությունները, բուհի ենթակառուցվածքները։ Փորձագիտական խմբի դիտարկմամբ կիրառվող մեխանիզմների լավարկումը, հարցաշարերի բովանդակային վերանայումը կնպաստեն հարցումների՝ որպես կարիքների վերհանման գործիքների արդյունավետության բարձրացմանը և իրականացվող վերլուծությունների որակի լավարկմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընդունելության մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողների կայուն հոսքին, բուհը կարևորում է ուսանողների կարիքների վերհանումը և պատրաստակամ է աջակցել նրանց կրթական միջավայրի բարելավման համար, ուսանողներին տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն, վարչական անձնակազմը հասանելի է ուսանողների համար, գործում է իրավունքների պաշտպանության մարմին, բուհը քայլեր է իրականացնում ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ, փորձում է գնահատել ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և բարելավել դրանք՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները։

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**։

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Ըստ ԱԲՀ ՄՈԿ քաղաքականության՝ համալսարանում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի հավաքագրումն իրականացվում է պաշտոնի անձնագրի պահանջներին համաձայն։ ՊԴ կազմի թափուր տեղերի համալրումն իրականացվում է մրցույթային կարգով՝ հայտարարությունների տեղադրմամբ (օր.՝ job.am կայքում), ինչպես նաև բժիշկ-կլինիցիստներին հրավիրելու միջոցով։ Վերջին տարիներին բուհի կողմից կարևորվում է պրակտիկ փորձառությամբ բժիշկ-կլինիցիստների ներգրավումը ուսանողների գործնական կարողությունների ձևավորման համար։

Ինքնավերլուծության համաձայն՝ բուհի դասախոսական կազմի ընդհանուր թիվը ներկայումս 68 է, որոնց մոտ 50%-ը պրակտիկ բժիշկներ են և համատեղությամբ աշխատում

են բուհում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմին ներգրավելիս բուհը հաշվի է առնում նրանց մասնագիտական կրթությունը, գիտական աստիճանը և գիտամանկավարժական աշխատանքի ստաժը, գիտամեթոդական կամ ուսումնամեթոդական աշխատանքների առկայությունը: Բուհում աշխատում են 28 գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսներ, որից 6-ը գիտությունների դոկտոր է, 22-ը՝ գիտությունների թեկնածու:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվի առնելով բուհի թիրախավորումը հիմնականում օտարալեզու կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ դասախոսական կազմն ընտրելիս հատուկ ուշադրություն է դարձվում մասնագետի անգլերենի իմացությանը: Օտարալեզու խմբերում դասավանդող դասախոսները հիմնականում ունեն լեզվի իմացության B1-B2 մակարդակ: Լեզվի իմացության գնահատման համար դասախոսական կազմի համալրման նպատակով դիմած թեկնածուները կարող են ներկայացնել լեզվաիմացության համապատասխան մակարդակի հավաստագիր, ինչպես նաև լեզվի իմացությունը գնահատվում է թեստի, հարցազրույցի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՊԴ կազմը համալրելուց առաջ թեկանծումները հանդիպում են ռեկտորի, ղեկավար կազմի հետ, այնուհետ ամբիոնների վարիչների հետ, որից հետո որոշում է կայացվում տվյալ մասնագետի ընտրության վերաբերյալ:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Համալսարանում ըստ կրթական ծրագրերի առանձնացված չեն դասախոսական կազմին ներկայացվող պահանջները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը հաշվի է առնում դասախոսների կողմից դասավանդվող դասընթացների ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթությունը, ինչպես նաև հետազոտական և գիտամեթոդական գործունեության ոլորտը:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Համալսարանում ՊԴ կազմի գնահատումն իրականացվում է ԱԲՀ դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգի համաձայն: Ըստ կանոնակարգի՝ դասալսման նպատակներից է կատարելագործել ՊԴ կազմի մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումներն իրականացվում են ինչպես նախապես հաստատված ժամանակացույցի համապատասխան, այնպես էլ տեղի են ունենում լրացուցիչ, չպլանավորված դասալսումներ ամբիոնների վարիչների մասնակցությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կատարվում են նաև փոխադարձ դասալսումներ լավագույն փորձի փոխանակման նպատակով, որոնց մասին նախապես պայմանավորվածություն է ձեռք բերվում դասախոսների շրջանում: Այսպես օրինակ, դասալսումներ են իրականացվել սոցիալական բժշկության և բնագիտական առարկաների ամբիոնների միջև, ինչպես նաև օրթոպեդիկ ստոմատոլոգիա և պրոպեդևտիկա դասավանդող դասախոսների մասնակցությամբ: Փոխադարձ դասալսումների արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերի ժամանակ, այնուհետև Գիտական խորհրդում:

Դասալսումների արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուշադրություն է դարձվում ուսումնական նյութի մատուցմանը, դիդակտիկ նյութին,

տեխնիկական միջոցներին, ուսանողների ներգրավվածությանը, առավել քիչ է կարևորված դասավանդման մեթոդաբանությանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումներ են իրականացվում նաև երիտասարդ, սկսնակ դասախոսների մոտ, նրանց տրվում է հնարավորություն մասնակցելու ավելի փորձառու դասախոսների դասընթացներին փորձի փոխանակման նպատակով:

2022 թ.-ին բուհում մշակվել է ՊԴ կազմի որակի ապահովման քաղաքականություն, որտեղ առանձնացված են ինքնագնահատման, անմիջական ղեկավարի կողմից գնահատման, գործընկերային գնահատման և ուսանողների կողմից գնահատման եղանակները: Քաղաքականությունը դեռևս ամբողջությամբ չի գործարկվել ուսումնական հաստատությունում:

Բուհի կողմից մշակվել է նաև Դասընթացի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթ, որի միջոցով ուսանողները գնահատում են դասապրոցեսի ընթացքը, ժամանակի արդյունավետ կիրառումը, գնահատման օբյեկտիվությունը: Հարցաթերթում առանձնացված են նաև այնպիսի հարցեր (դասախոսը հետաքրքիր անձնավորություն է, նրանից կարելի է շատ բան սովորել կամ դասավանդողն անհրաժեշտ գիտելիքներ ունի առարկայից դուրս պատասխանելու ուսանողների հարցերին), որոնց արդյունքների կիրառումը և կապը դասավանդման գործընթացի հետագա բարելավման հետ այդքան էլ տեսանելի չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ իրականացված հարցումները դեռևս պարբերական բնույթ չեն կրում, դրանց արդյունքների մասին տեղեկացվածությունը դասախոսական կազմի շրջանում ևս ցածր է: Դասավանդման որակին առնչվող խնդիրներն առավելապես վերհանվում են քննարկումների, Գիտական խորհրդի նիստերի ընթացքում:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Համալսարանը փորձում է աջակցել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործմանը և մասնագիտական զարգացմանը: Վերջին երկու տարիներին դասախոսների մի մասը մասնագիտական կատարելագործում է անցել արտերկրում կամ արտերկրից ժամանած մասնագետների մոտ, օր.՝ իմպլանտացիայի, օրթոպեդիայի և էսթետիկ ռինոպլաստիկայի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական միջազգային վերապատրաստումներին դասախոսները հիմնականում մասնակցում են սեփական նախաձեռնողականությամբ: Հաշվի առնելով դասախոսական կազմի՝ բժշկական հաստատություններում աշխատելու հանգամանքը՝ նրանք նաև իրենց հաստատություններում անցնում են Շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) դասընթացներ՝ այսկերպ ծանոթանալով նորագույն հնարավորություններին: Փորձի փոխանակումը տեղի է ունենում ամբիոնային նիստերի ընթացքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը չունի վերապատրաստումների համար նախատեսված հստակ բյուջե, սակայն անհրաժեշտության դեպքում կամ ներկայացված առաջարկի հիման վրա պատրաստ է աջակցելու:

Համալսարանի միջոցներով «Բաբելոն» ուսուցման կենտրոնի կողմից 2021-2022 ուստարում կազմակերպվել և անցկացրել է դասախոսական կազմի 28 աշխատակիցների անգլերեն լեզվի վերապատրաստում և ատեստավորում: Հաշվի առնելով օտարալեզու կրթական ծրագրերում ուսանողների աճի միտումները՝ բուհը պարբերաբար միջոցներ է

նախատեսում դասախոսական կազմի շրջանում օտար լեզվի իմացության բարձրացման նպատակով:

2023թ.-ին բուհի 3 դասախոս մասնակցել է «Կրթական ծրագրերի համահնչեցումը WFME (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով եռօրյա վերապատրաստումներին: Վերապտրաստումների արդյունքների ներդրումը կրթական ծրագրերում և դրանց համահնչեցումը WFME չափորոշիչներին դեռևս չի իրականացվել:

ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստման կանոնակարգի հանձայն՝ բուհում 2020-2021 ուստարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը կազմակերպել է որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներն ուղղված են անգլերենի իմացության բարձրացմանը, մանկավարժությանը և հոգեբանությանը, որակի ապահովմանը:

Համալսարանի և Բելառուսի Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի միջև կնքված համաձայնագրի շրջանակում 2021-2022 ուստարում կազմակերպվել են նաև փոխադարձ դասախոսություններ:

5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ինքնավերլուծության համաձայն՝ բուհի ՊԴ կազմի 68 դասախոսներից 34-ը (50%) հիմնական աշխատակիցներ են: Վերջին տարիներին շարունակաբար աճում է ուսանողների թիվը, այդ նպատակով բուհը փորձում է ներգրավել նաև նոր դասախոսներ, այսուհանդերձ դեռևս բուհի կողմից չի սահմանվել հստակ թիվ խմբերի, մեկ դասախոսի կողմից դասավանդվող առարկաների քանակի վերաբերյալ: Բուհը չի գնահատել նաև ներկայումս առկա վերոնշյալ ցուցանիշների արդյունավետությունը և ազդեցությունը կրթական գործընթացի վրա: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանող-դասախոս հարաբերակցությունը բուհում 1/9 է: Մեկ դասախոսի կողմից դասավանդվող առարկաների թիվը բուհում չի գերազանցում հինգը, որոնք հիմնականում իրար փոխկապակցված են և լրացնում են իրար:

Դասախոսական կազմի կայունության ապահովման նպատակով նախորդ հավատարմագրումից հետո բուհում ձևավորվել է ռեզերվ, որտեղ ներկայումս ընդգրկված է 8 դասախոս: Համալսարանը դասախոսական կազմը համալրում է նաև իր շրջանավարտներով, նեղ մասնագիտական ուղղություններով հրավիրում մասնագետներ գործընկեր բուժհաստատություններից: Համալսարանում դասախոսական կազմը երիտասարդացման միտումներ ունի: ՊԴ կազմի միջին տարիքը 42 է:

Դասախոսական կազմի կայունության ապահովման համար համալսարանը փորձում է ապահովել գրավիչ պայմաններ՝ ՊԴ կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերը սահմանելիս, դասախոսական կազմի գործունեության արդյունավետության հիման վրա տարբերակված, բարձր աշխատավարձ սահմանելու միջոցով:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԱԲՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և ազատման կանոնակարգի համաձայն՝ բուհում գործում են պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի տարակարգերը:

Ինքնավերլուծության համաձայն՝ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային առաջխաղացումն իրականացվում է՝ հաշվի առնելով թեկնածուի անհատական ուղին, նրա դասախոսական և հետազոտական կարողությունները, տվյալ ոլորտում ունեցած մասնագիտական փորձը: 2021-2022 ուստարում, որպես աշխատանքային առաջխաղացում, բուհի ամբիոնի վարիչին շնորհվել է դոցենտի կոչում ուսանողների գործնական և լաբորատոր պարապմունքների իրականացման համար ձեռնարկի մշակումից հետո:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ համալսարանն ուշադրություն է դարձնում նաև ՀՀ այլ բուհերի հետ համադրելի աշխատավարձի ապահովմանը, սակայն տարբերություն չի սահմանում պրոֆեսոր և դոցենտ գիտական կոչումների համար, այլ հիմնվում է գիտությունների դոկտոր և գիտությունների թեկնածու գիտական աստիճանների տարբերակման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներին խրախուսելու համար աշխատավարձի բարձրացում է իրականացվում՝ հաշվի առնելով բուհի դասախոսների աշխատանքի արդյունավետությունը: 2017թ. բուհում գործում է ՊԴ կազմի խրախուսման կարգը՝ գրավոր շնորհակալության, պարգևատրման ձևաչափով՝ խրախուսելով դասախոսներին ծրագրերի մշակման, մենագրությունների կան հոդվածների տպագրման համար: ԱԲՀ 30-ամյակի կապակցությամբ համալսարանի 47 աշխատակցի տրվել են անվանական պատվոգրեր և հուշանվերներ:

Արդյունավետության չափման հստակ ցուցիչներ և խրախուսման չափանիշներ բուհը դեռ չի սահմանել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է առաջիկայում մշակել դասախոսներին վարկանշային-տարբերակված աշխատավարձ վճարելու կանոնակարգ, ինչպես նաև խրախուսման չափանիշներ:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Նախորդ հավատարմագրումից հետո, հաշվի առնելով փորձագիտական զեկույցում վերհանված խնդիրները, բուհը քայլեր է իրականացրել համալրելու աշխատակազմն իր սահմանած նպատակների համար անհրաժեշտ մասնագիտական կազմով: 2021-2022 ուստարում ամբիոնների մշտադիտարկման արդյունքում ամբիոնները համալրվել են ուսումնական աշխատանքների գծով պատասխանատուներով: Հաշվի առնելով ուսանողների թվի ավելացումը և ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման աշխատանքների ծավալը՝ համալրվել է կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի թափուր հաստիքը: Արտաքին կապերի բաժինը համալրվել է նոր մասնագետով:

Ներկայումս վարչական և ուսումնաօժանդակ աշխատանքներն իրականացնում են 22 աշխատակիցներ, որոնց գործառույթները և պարտականությունները սահմանված են պաշտոնի անձնագրերով: Բուհն աջակցում է վարչական աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումների իրականացմանը: Այսպես օրինակ, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը և առաջատար մասնագետը մասնակցել են 2023թ.-ի աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ սեմինարին, Արտաքին կապերի բաժնի վարիչը, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ վերապատրաստումներին:

Դասալսումներից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դեռևս ուսանողների և դասախոսների թվաքանակին, ուսանողներին տրվող գործնական պարապմունքներին համապատասխան լաբորատորիաներում օգնականների,

լաբորանտների պլանավորում չի իրականացվել բուհում: Հաճախ այս գործառույթը վերապահվում է դասախոսին գործնական պարապմունքն իրականացնելիս:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը դասախոսական կազմը համալրում է կրթական ծրագրերի առանձնահատկություններին համահունչ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմով: Դասավանդման գործընթացում բժիշկ-դասախոսների ներգրավումը նպաստում է ուսանողների կլինիկական մտածողության ձևավորմանը և մասնագիտական համատեքստում այլ բժիշկների հետ աշխատելու հմտությունների ձևավորմանը: Դրական հանգամանք է, որ բուհը գնահատում է դասախոսական կազմի գործունեությունը. իրականացվող փոխադարձ դասալսումները նպաստում են փորձի փոխանակմանը և լավ փորձի տարածմանը, երիտասարդ կադրերի մասնագիտական զարգացմանը: Այս տեսանկյունից դասալսումների արդյունքների համակարգային վերլուծությունը և դրանց արդյունքների ուսումնասիրությունը բուհի կողմից կարող է հիմք հանդիսանալ դասախոսական կազմի մասնագիտական զարգացման պլանավորման ու իրականացման համար:

Դրական հանգամանք է, որ բուհը սահմանել է նաև այլ մեխանիզմներ դասախոսական կազմի կարիքների գնահատման համար, ինչպիսիք են ինքնագնահատումը, գործընկերային գնահատումը, ինչը կարող է նպաստել տվյալների հավաքագրման մեխանիզմների բազմազանեցմանը և օբյեկտիվ ու համապարփակ տեղեկատվության վերհանմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև դասավանդման որակի գնահատմանն ուղղված հարցաթերթերի բարելավման և հարցերի շրջանակի համապատասխանեցման անհրաժեշտությունը հարցումներից ակնկալվող արդյունքներին: Հարցումների պարբերական իրականացումը և փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրությունը կարող են մեծապես բարելավել ՊԴ կազմի գնահատման և դասախոսների կարողությունների զարգացման գործընթացը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը պատրաստակամ է աջակցելու դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին ու զարգացմանը՝ այդ նպատակով տրամադրելով նաև ֆինանսական միջոցներ: Վերապատրաստումներին ուղղված ֆինանսական միջոցների առանձնացումը, ըստ տարիների դրանց ավելացումն ու ուղղորդումը ՊԴ կազմի գնահատման արդյունքում բացահայտված կարիքներին կարող են նպաստավոր լինել դասախոսների շարունակական զարգացման համար: Դրական է, որ դասախոսական կազմի մասնագիտական որակների զարգացմանն են նպաստում նաև համատեղությամբ աշխատող դասախոսների բուհից դուրս իրականացվող մասնագիտական վերապատրաստումները: Դրանց արդյունքների տարածումը բուհում ներքին լավ փորձի տարածման շրջանակներում կարևոր է ֆինանսական միջոցների խնայման և մյուս ուղղություններով վերապատրաստումներին ուղղելու համար:

Կրթական ծրագրերի իրականացման շարունակականության տեսանկյունից դրական հանգամանք է, որ բուհն ապահովում է դասախոսական կազմի կայունությունը: Կարևոր է, որ ուսանողական համակազմի աճին զուգընթաց բուհը գնահատի դսախոսական կազմի բավարար լինելու աստիճանը, սահմանի ուսանող-դասախոս օպտիմալ հարաբերակցությունը, շարունակաբար ավելացնի ռեզերվը անհրաժեշտության դեպքում դասախոսական կազմի համալրման գործընթացն անխոչընդոտ իրականացնելու համար: Դրական են նաև դասախոսական կազմի երիտասարդացմանն ուղղված բուհի ջանքերը, որոնք

նպաստում են կայուն սերնդափոխության իրականացմանը և փորձառու դասախոսների փորձի փոխանցմանը սկսնակ մասնագետներին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի, խրախուսման չափանիշների հստակեցումը և դրան ուղղված ռեսուրսների տրամադրումը կարող են նպաստել դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը:

Դրական հանգամանք է, որ բուհը փորձում է իր աշխատակազմը համալրել սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմով: Նրանց համար պաշտոնների անձնագրերի սահմանումը նպաստում է գործառութային շրջանակի հստակեցմանը: Գործնական աշխատանքների իրականացման արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել նաև ուսումնաօժանդակ կազմի համալրումը՝ հիմնվելով գործնական պարապմունքների առանձնահատկությունների, քանակի ու լաբորատորիաներում պահանջվող պայմանների վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհն ունի դասախոսական կազմի ընտրության համապատասխան պահանջներ և ընթացակարգեր, դասախոսական կազմը համալրվում է համապատասխան որակներ ունեցող բժիշկ մասնագետներով, գործում են դասախոսական կազմի գնահատման և լավ փորձի տարածման որոշ մեխանիզմներ, բուհն աջակցում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին, քայլեր է ձեռնարկում ապահովելու դասախոսական կազմի կայունությունը, երիտասարդացումն ու սահուն սերնդափոխությունը, կրթական գործընթացի իրականացմանն աջակցելու համար ներգրավում է համապատասխան վարչական կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԱԲՀ 2020-2025թթ. Ռազմավարական ծրագրի համաձայն՝ ռազմավարական նպատակներից է Բուհի զարգացմանն ուղղված նորարարությունների և հետազոտության խթանումը, որը կապակցված է ռազմավարական առաջնահերթություններից կրթական գործունեության իրականացման և միջազգայնացման հետ: Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը հստակեցրել է իր գիտական հետաքրքրությունները և իր հիմնական հետազոտական ուղղությունն է համարում «Կենսաբժշկություն»-ը: Բուհի այս ընտրությունը պայմանավորված է դասախոսական անձնակազմի՝ հիմնականում այս ուղղությամբ մասնագիտացված լինելու հանգամանքով: Փորձագիտական

ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած մասնագիտական հետաքրքրություններին բուհի դասախոսներն իրենց հետազոտական աշխատանքներն իրականացնում են ոչ թե բուհում կամ բուհի կողմից տրված ֆինանսական ռեսուրսներով, այլ ԳԱԱ ինստիտուտներում և ԵՊՀ-ում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհը դիրքավորում է իրեն որպես առավելապես դասավանդող բուհ, սակայն, չունենալով մեծ հավակնություններ գիտության ոլորտում, այնուամենայնիվ կարևորում է հետազոտությունը: Բուհը փորձում է ամրապնդել կապը հետազոտության և կրթության միջև: Բուհը, հիմք ընդունելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից հռչակված ռազմավարությունը՝ ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման մասով որպես XXI դարի քաղաքականություն, փորձում է կրթական ծրագրերում ապահովել կրթության և հետազոտության ինտեգրումը: Այսուհանդերձ, կրթական ծրագրերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտական բնույթի առաջադրանքները դեռևս հստակորեն տարանջատված չեն կրթական ծրագրերում:

Գիտական մասը բուհում համակարգում է գիտական մասի վարիչը՝ ըստ գիտական մասի կանոնակարգի: Բուհի գիտական մասի գործառույթներն են արտասահմանյան ուսումնական հաստատությունների և գիտականն կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի բանակցային գործընթացի կազմակերպումը, միջազգային գիտական հետազոտական ծրագրերի իրականացման կազմակերպումը և կատարման վերահսկողությունը, ՊԴ կազմի, ուսանողության կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքների, գիտական ստորաբաժանումների գործունեության համակարգումը, գիտության զարգացման այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների որոնումը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գիտական մասն ունի միայն ղեկավար, և նախատեսված գործառույթների իրականացման համար այլ աշխատակիցներով կենտրոնը համալրված չէ: Համադրելով նախատեսված գործառութային շրջանակը և բուհի կողմից սահմանված նպատակները՝ տեսանելի է, որ մարդկային ռեսուրսները և տրամադրվող ֆինանսական ռեսուրսները (բյուջեի մոտ 2%) բավական քիչ են նպատակների իրագործելիության ապահովման համար:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրություններն ու հավակնությունները ներկայացված են ՌԾ «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի ներքո, որտեղ առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- նպաստել համալսարանում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- խթանել համալսարանում հետազոտական գործունեությունը,
- խթանել համալսարանում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Վերը նշված նպատակների համար սահմանվել են համապատասխան ԳԱՑ-եր, ինչպիսիք են գիտական մասի ռազմավարական պլանը՝ հստակեցնելով ԱԲՀ բյուջեով գիտական հետազոտություններին տրվող հատկացումները, ըստ կատարողականի գիտական գործունեության հաշվետվողականությունը, իրականացված առնվազն երկու համատեղ դրամաշնորհները, հաստատված գիտական թեմաներն ամբիոններում և այլն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարբեր հրապարակումներում ԱԲՀ դասախոսները հաճախ ներկայացված են ոչ որպես բուհի ներկայացուցիչներ, այլ որպես այլ բուհերի դասավանդողներ կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչներ: Բուհի ռազմավարական ծրագրով նախատեսվում է մեծացնել բուհի հետազոտությանն ուղղված բյուջեն: Այդուհանդերձ, բուհի կողմից դեռևս գնահատում չի իրականացվել՝ դիտարկելու որ ցուցանիշի ապահովումը իրագործելի կդարձնի բուհի սահմանած նպատակների ձեռքբերումը:

Բուհը մշակել է մինչև 2025թ. հետազոտության մասով ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը: Հետազոտական միջնաժամկետ պլանավորում առկա չէ, որոշ գործընթացների համար երկարաժամկետ ռազմավարությունում ընտրված են միջանկյալ ժամկետներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գիտական մասի պլանավորումը, որը վերաբերում է գիտական աշխատանքներին, և դրանց փոխկապակցվածությունը կրթության հետ հստակեցված չէ ամբիոններում: Կատարվող հետազոտական աշխատանքները որոշակիորեն չեն արտացոլում բուհում ընդունված ՌԾ ԳԱՑ-երին հասնելու ուղիները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դասախոսական կազմի կողմից իրականացված հետազոտությունները հաճախ բխում են իրենց մասնագիտական հետաքրքրություններից և չեն պայմանավորում բուհի կողմից ստանձնած ուղղությունները, հետևաբար նաև դրանց կապակցումը բուհի նախանշած նպատակներին:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ԱԲՀ-ում գիտական մասը գործում է՝ ըստ գիտական մասի կանոնակարգի և բուհի կանոնադրության: Ներկայումս մշակման փուլում են ՊԴ կազմի գիտական գործունեության խրախուսման համար նախատեսված ընթացակարգը, դասախոսների և ուսանողների միասնական գիտական սեմինարների թեմաների մշակման, կազմակերպման և խրախուսման ընթացակարգերը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԱԲՀ-ն փորձում է դիմել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան դրամաշնորհների: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ԱԲՀ-ն մեկ փոքր դրամաշնորհ է ստացել AESA ("Armenian Engineers and Scientists of America" organization՝ «Ամերիկայի հայ ճարտարագետներ և գիտնականներ» կազմակերպություն)-ից հետազոտական գործունեության իրականացման համար գնելու սարքավորումներ: Ավելին, գիտական մասի վարիչը ստացվել է դրամաշնորհ PMI Science Armenia-ի կողմից. ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի բազայի հիման վրա: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ տարբեր գիտական կամ հետազոտական դրամաշնորհների դիմելիությունը շատ ցածր մակարդակի վրա է՝ համադրելով այն հավակնությունները և ԳԱՑ-երը, ինչին բուհը ձգտում է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի համար լրացուցիչ խոչընդոտ է Գիտության կոմիտեի կողմից տարբեր ծրագրերին դիմելու բազային ֆինանսավորման հնարավորության բացակայությունը, որը շատ դեպքերում անհնարին է դարձնում ԱԲՀ-ի կողմից դրամաշնորհներին դիմելու հավանականությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեկտորի հրամանով բուհում սահմանվել են խրախուսական վճարներ հետազոտական գործունեությամբ զբաղվող դասախոսների համար, որի միջոցով բուհը ևս նախատեսում է խրախուսել դասախոսական կազմին հետազոտական գործունեության իրականացման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կլինիկական բազաների հետ համագործակցության պայմանագրերը հաճախ ներառում են դրույթներ նաև հետազոտական գործունեության իրականացման համար ռեսուրսների տրամադրման ուղղությամբ, սակայն դրա կիրառման տեսանելի օրինակներ բուհում դեռևս առկա չեն։

ԱԲՀ գիտական մասի և ՈՒԳԸ համագործակցությամբ ձևավորվել են ուսանողական հետազոտական 3 խմբեր՝ անհետաձգելի բժշկություն, էնդոկրինոլոգիա, նյարդագիտություն ուղղություններով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խմբերը պարբերաբար քննարկումներ ու սեմինարներ են իրականացնում այս ուղղություններով։ Այսուհանդերձ, հարկ է նշել, որ սա դեռևս հատվածական բնույթ է կրում և չի ներառում բուհի ուսանողների մեծ շրջանակի։

Դիտարկելով բուհի հավակնությունները հետազոտության իրականացման ու խթանման ուղղությամբ՝ պարզ դարձավ, որ բուհը նոր ռեսուրսների ձեռքբերումը, հետազոտության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը պայմանավորում է նոր մասնաշենքի կառուցմամբ։ Այսուհանդերձ, հստակ պլանավորում, թե ինչ հետազոտական արդյունք է ակնկալում ունենալ բուհը մասնաշենքի ենթակառուցվածքների կիրառմամբ, դեռևս առկա չէ։

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը։

Հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով բուհը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ և գործողություններ։ Մասնավորապես, համագործակցություն է ստեղծվել Բելառուսի Գրոդնոյի համալսարանի հետ։ Այդ համատեքստում կազմակերպվել են առցանց դասախոսություններ և սեմինարներ, որոնց մասնակցել են ինչպես ԱԲՀ դասախոսները, այնպես էլ ուսանողները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը խրախուսել է ուսանողների այցերը միաջզգային տարբեր կոնֆերանսների, մասնավորապես վերջին խրախուսումը Լեհաստանում կայացած գիտաժողովներից մեկին ուսանողի մասնակցությունն էր և զեկույցի ներկայացումը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ 2023 թ. չկան տպագրված հոդվածներ բուհի ՊԴ անձնակազմի կողմից։ Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա հոդվածների համար բուհի աշխատակիցները ներկայացված չեն որպես ԱԲՀ դասախոսական կազմի ներկայացուցիչներ։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ միջազգային հետազոտական դրամաշնորհներ բուհը դեռևս չի շահել, միջազգային գիտատեղեկատվական համակարգերում տպագրություններ առկա չեն։

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ։

ԱԲՀ ուսումնական և հետազոտական գործընթացների կապը բխում է բուհի ՌԾ դրույթներից։ Բուհը հետազոտական գործունեությունը խթանելու համար նախաձեռնել և իրականացնում է տարբեր գործողություններ՝ կրթական ծրագրերի վերանայում, ուսումնառողների հետազոտական աշխատանքների բազմազանեցում, ամփոփիչ քննություններին ներկայացվող պահանջների բարելավում, ընթացակարգերի և մեթոդական ցուցումների վերանայումներ։ Փորձագիտական այցի և մասնագիտական քննարկում-զրույցների ընթացքում պարզվեց, որ կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը լավ արտահայտված չէ, և ուսանողներին հետազոտահենք կրթություն տրամադրելու

մեխանիզմները դեռևս ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում՝ հիմնականում մեկտեղելով դրանք լաբորատոր կամ գործնական աշխատանքների հետ: Հաշվի առնելով նաև կրթական ծրագրերի ինտեգրված լինելու և ուսումնառության ավարտին ՈԱԾ-ի 7-րդ մակարդակին համապատասխան աստիճան ստանալու հանգամանքը՝ հարկ է նշել, որ ուսանողներին տրվող առաջադրանքները դեռևս չեն խթանում նրանց հետազոտական կարողությունների զարգացումը, այլ դեռևս շեշտադրվում են միայն ձեռքի հմտությունների ձևավորումը:

Փորձագիտական այցի ընթաքում պարզվեց, որ ընդհանուր առմամբ հստակ պատկերացում չկա բուհի տարբեր օղակներում հետազոտական բաղադրիչի ներդրումը կրթական ծրագրերում կամ հետազոտահենք կրթության կազմակերպումն ինչպես պետք է իրականացվի: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ բուհն աջակցում է ուսանողներին տարբեր կոնֆերանսներին և գիտաժողովներին նախապատրաստման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն ունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն՝ երկարաժամկետ պլանավորմամբ: Առկա են ԳԱՑ-եր ՌԾ-ում, ինչը որոշակի հիմքեր է ստեղծում գործընթացների պլանավորման և այնուհետև դրանց արդյունավետության գնահատման համար: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որբուհի կողմից հետազոտության զարգացման համար սահմանված նպատակների և տրամադրվող ռեսուրսների գնահատման բացակայությունը կարող է խոչընդոտել նպատակների իրագործելիության առավել չափելի և գնահատելի դառնալուն: Այս տեսանկյունից կարևոր է, որ բուհը նաև ուշադրություն դարձնի նպատակների սահմանմանը՝ համադրելով նախատեսված գործողությունների, տրամադրվող ռեսուրսների ու սահմանված ժամկետների հետ: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով համալրումը բուհի կողմից հրատապ լուծման անհրաժեշտություն ունի՝ նպաստելու հետազոտական ոլորտում բուհի որդեգրած նպատակների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը փորձել է առանձնացնել նաև Կենսաբժշկության ոլորտը՝ այդպիսով որոշակիորեն նախանշելով հետազոտական աշխատանքների զարգացման ուղղությունները: Այս համատեքստում սահմանված ուղղությամբ հստակ հետազոտությունների պլանավորման ու իրականացման բացակայությունը պետք է լինի բուհի ուշադրության կենտրոնում՝ որոշակի հիմքեր ստեղծելու հետազոտահենք կրթության իրականացման ու բուհի կողմից սահմանված նշաձողերին հասնելու համար:

Դրական հանգամանք է, որ բուհը շարունակաբար քայլեր է իրականացնում հետազոտական դրամաշնորհային ծրագրերին դիմելու ուղղությամբ, ինչը կարող է հանգեցնել ռեսուրսների դիվերսիֆիկացիայի, իսկ անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը հետազոտական միջավայրի ձևավորման համար կնպաստի այս ուղղությամբ սահմանված ԳԱՑ-երի հաղթահարմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական հստակ խնդիրների սահմանման ու արդյունքներ ունենալու համար բուհն անհրաժեշտություն ունի հստակեցնելու ամբիոնային հետազոտական ուղղությունները, սահմանելու խրախուսման հստակ մեխանիզմներ ու ընթացակարգեր, ինչը կհանգեցնի նաև ոլորտային հետազոտությունների իրականացմանը բուհի կողմից, դասախոսական կազմի

կարողությունների ուղղորդմանը բուհի հետազոտական պոտենցիալի ամբողջական իրացման համար:

Հաշվի առնելով բուհի մոտեցումները ենթակառուցվածքների շարունակաբար բարելավման համատեքստում՝ փորձագիտական խումբը շեշտադրում է դրանց համալրման շարունակականության հիմքում բուհի դասախոսական կազմի հետազոտական կարիքների ներդրումը, ինչը էապես կարող է բարձրացնել դասախոսական կազմի հետաքրքրվածությունը հետազոտությամբ զբաղվելու, ինչպես նաև հետազոտական արդյունքներն առևտրայնացնելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ խթանման մեխանիզմների շարունակաբար լավարկումը կարող է հանգեցնել նաև միջազգային գիտատեղեկատվական համակարգերում բուհի վարկանիշի ձևավորմանը ու իրականացած հետազոտությունների արդյունքների միջազգայանացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհի կողմից հետազոտահենք կրթության ձգտման միտումները, սակայն դրանց արտացոլված չլինելը կրթական ծրագրերում ուսանողներին տրվող առաջադրանքների միջոցով կարող է խոչընդոտներ ստեղծել կրթություն-հետազոտություն կապերի ամրապնդման համար: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցման ինստիտուցիոնալ մոտեցումների որդեգրումը, ըստ կրթական ծրագրերի նպատակների դրանց արտահայտումը, ինչը կնպաստի ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթության և հետազոտության ամբողջական ինտեգրումը կնպաստի նաև շնորհվող որակավորումների արժանահավատության մեծացմանը և լրացուցիչ հնարավորություններ կստեղծի ուսանողների համար կրթական հաջորդ մակարդակ անցնելու տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՀ գիտահետազոտական աշխատանքների իրականացման տեսանկյունից առկա են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ բուհում դեռևս ամբողջովին ներդրված չէ հետազոտական ոլորտում իր հավակնություններն արտահայտող ռազմավարությունը, երկարաժամկետ և միջնաժամկետ պլանները չեն փոխկապակցվում իրար, և դրա համար համապատասխան ռեսուրսներ չեն հատկացվում, կրթության մեջ հետազոտական բաղադրիչի թերի ներդրման, տարբեր միջազգային շտեմարաններում հոդվածների բացակայության, դասախոսական անձնակազմի՝ դրամաշնորհներին դիմելու սակավության հանգամանքները, ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմների անկատարությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԱԲՀ-ն տեղակայված է երկու մասնաշենքերում (2200մ²): Կրթական միջավայրի ընդլայնման անհրաժեշտությունից ելնելով՝ նախորդ հավատարմագրումից հետո սկսվել է նոր մասնաշենքի կառուցումը: Այն ամբողջությամբ կշահագործվի 2024թ. սեպտեմբերին, կընդլայնվեն համալսարանի ենթակառուցվածքները՝ ընդհանուր առմամբ կազմելով 8800մ²: Նոր մասնաշենքում տեղակայված են լինելու կլինիկան, լսարաններ և հետազոտական լաբորատորիաներ՝ համապատասխան սարքավորումներով և կահավորմամբ: Բուհի կրթական ծրագրերի իրականացման համար առկա են ինչպես լսարաններ, այնպես էլ գործնական, լաբորատոր աշխատանքների իրականացման համար լաբորատորիաներ: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի իրականացման համար պրեռեկվիզիտային առարկաների մասնավորապես՝ մանրէաբանության և կենսաքիմիայի լաբորատոր պայմաններն ու հնարավորություններն անհրաժեշտ չափով հագեցած չեն կրթական ծրագրերի վերջնարդյունքների լիարժեք ապահովման համար: Ուսանողների գործնական կարողությունների զարգացման համար բուհն օգտվում է նաև գործընկեր կազմակերպությունների, գիտահետազոտական ինստիտուտների ռեսուրսներից և լաբորատորիաներից:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ բուհը «Ստոմատոլոգիա» մասնագիտության համար տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսները գործնական պարապմունքների իրականացման համար, սակայն «Բուժական գործ» կրթական ծրագրի համար դեռևս ամբողջապես հագեցած չեն լաբորատորիաները, ենթակառուցվածքները, սահմանափակ են մուլյաժները: Բուհում գործում է նաև Գիտաբժշկական ուսումնական կենտրոնը: Բուհում առկա են մասնագիտական կաբինետներ ասեղ-այրում թերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, նյարդաբանություն, էնդոկրինոլոգիա, ռեֆլեքսոթերապիա, ֆիզիոթերապիա, թերապևտիկ ստոմատոլոգիա, վիրաբուժական ստոմատոլոգիա, օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկաների դասավանդման համար:

Դասալսումներից պարզ դարձավ, որ վերջին տարիներին ուսանողների թվաքանակի աճով պայմանավորված՝ գործնական պարապմունքների խմբերը մեծ են (մինչև 20 հոգի). ռեսուրս-ուսանող օպտիմալ հարաբերակցության հաշվարկ բուհը դեռևս չի իրականացրել: Ռեսուրսների համատեղ օգտագործման ու կլինիկական առարկաների գործնական պարապմուքնների, պրակտիկաների իրականացման համար բուհն ունի համապատասխան պայմանագրեր տարբեր հիվանդանոցների հետ (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բշժկական կենտրոն, «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն, «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն և այլն):

Համալսարանում առկա է նաև գրադարան: Բուհը համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի անդամ է, որով համալսարանը մի շարք փակ գրադարանների մուտք է ապահովում ուսանողների համար: Ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկումից պարզ դարձավ, որ գրադարանային ռեսուրսները և ընթերցասրահը ըստ բուհի ներկայացուցիչների բավարար չեն եղել: Այդ նպատակով բուհը նոր մասնաշենքում, ինչպես նաև առկա մասնաշենքում նախատեսել է բարելավել գրադարանային ռեսուրսները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դասախոսների շատ քիչ մասն է օգտվում գրադարանից, և գրադարանի համալրումը ժամանակի պահանջներին համահունչ չի

իրականացվում: Ուսանողներն անհրաժեշտություն ունեն մասնագիտական գրականության, որի սակավությունը տեսանելի է շահակիցների համար:

Բուհում առկա է ճաշարան, որն ունի առանձնացված տարածք: Սակայն հաշվի առնելով բուհի ուսանողների թվաքանակի աճի միտումները՝ բուհը նոր մասնաշենքում առանձնացրել է նոր տարածք ճաշարանին հատկացնելու համար:

7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ բուհի բյուջեի ուսումնասիրության՝ 2022 թ. այն ձևավորվել է հիմնականում ուսանողների վարձավճարներից (շուրջ 93%): Ֆինանսական տեսանկյունից բուհի բյուջեի մինչև 40%-ն ուղղվում է անձնակազմի համար նախատեսված աշխատավարձին: Բուհի ֆինանսական մուտքերի ու հատկացված ծախսերի համադրությունը ցույց է տալիս, որ բուհն իր ֆինանսական միջոցների մեծ մասը ներդնում է նոր մասնաշենքի կառուցման և կահավորման համար:

Ըստ բուհի ներկայացրած հիմնավորումների՝ ֆինանսական ռեսուրսների պլանավորումը և հատկացումներն իրականացվում և բխում են Ռազմավարական ծրագրից ու դրա գործողությունների պլանից: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաճախ խզված է կապը հատկացվող ռեսուրսների բաշխման և ռազմավարական նպատակների միջև՝ հատկապես Հետազոտության ուղղությամբ բուհի սահմանած նպատակների ապահովման տեսանկունից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհի կառավարման խորհրդի անդամները, հանդիսանալով բուհի ներքին շահակիցներ, ներգրավված չեն բուհի համար ֆինանսական կամ այլ ռեսուրսներն ընդլայնելու ուղղությամբ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնները և համապատասխան այլ ստորաբաժանումները ներկայացնում են տարեկան պլանավորման ծախսերը՝ կրթական ծրագրերի անհրաժեշտությունից ելնելով, բայց դրանց ներկայացումը համակարգված և հստակ մեթոդաբանություն չի կրում: Բուհը, ըստ անհրաժեշտության, տրամադրում է մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Այսուհանդերձ, փորձագիտական դիտարկումները, դասալսումները ցույց տվեցին, որ ուսումնական կամ սպասարկող լաբորանտների թիվը քիչ է, և մարդկային ռեսուրսների համալրման ուղղությամբ ֆինանսական հատկացումներ դեռևս նախատեսված չեն: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ, որ ամբիոններում տեսնում են անհրաժեշտությունը լաբորանտների հաստիքների ավելացման հաջորդ ուսումնական տարվա համար, ինչպես նաև կարևորում են անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ու քիմիական նյութերի՝ մեկ ուսանողի հաշվարկով պլանավորումը՝ հստակ հաշվարկի մեթոդաբանությամբ և ծախսային հիմնավորումներով:

7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար բուհը հատկացնում է աշխատավարձային միջոցներ, ըստ անհրաժեշտության վերանայվում են դասախոսական կազմի աշխատվարձերը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ անձնակազմին տրվում են տարբեր տեսակի, այդ թվում՝ ֆինանսական խրախուսումներ,

սակայն դրանց տրամադրման համար ինստիտուցիոնալ պահանջները հստակեցված չեն։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջազգային ուսանողների շարունակաբար աճի միտում ունենալով՝ ՊԴ կազմի անգլերենի իմացության մակարդակի բարձրացման համար բուհը տրամադրում է ֆինանսական միջոցներ կարողությունների զարգացմանը նպաստող վերապատրաստումների համար։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, ոչ ըստ կրթական ծրագրերի մեկ ուսանողի հաշվարկով հստակ ֆինանսական պլանավորում և բաշխում առկա չէ։

Կրթական ծրագրերի իրականացման համար մյուս կարևորագույն ռեսուրսը ենթակառուցվածքներն են, որտեղ բուհը բացառապես սեփական խնայողությունների և միջոցների հաշվին կատարում է ներդրումներ։ Կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է ամբիոնների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, ապա քննարկվում է պրոռեկտորների և ռեկտորի հետ։ Առաջնահերթություններից ելնելով՝ կազմվում է բյուջեի նախագիծ, որը ներկայացվում է Կառավարման խորհրդին՝ հաստատման։

7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը։

Ֆինանսական միջոցների կայությունն ու դրա բազմազանեցումը բուհի ռազմավարական առաջնահերթություններից է, որն ամրագրված է ՌԾ-ում։ Վերջին տարիներին բուհի ֆինանսական հոսքերն ավելացել են արտասահմանցի ուսանողների թվաքանակին կտրուկ աճի հաշվին, սակայն վարձավճարներից բացի այլ եկամուտներ գրեթե չեն առաջանում, և ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացիա գրեթե առկա չէ։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բուհը ներկայումս նոր մասնաշենք է կառուցում, որում տեղակալված է լինելու կլինիկա՝ իր վիրահատարաններով, մասնագիտական կաբինետներով։ Բուհը նախատեսում է մատուցված բժշկական ծառայություններից գեներացնել այլընտրանքային ֆինանսական միջոցներ։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ բուհում առկա է լսարանային և գրադարանային ֆոնդ, կան լաբորատորիաներ, սակայն կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ հստակ պլանավորում առկա չէ։ Անհրաժեշտ սարքավորումներն ու քիմիական նյութերը ձեռք են բերվում բուհի՝ տվյալ տարվա ֆինանսական հնարավորություններից ելնելով, ինչի գնահատում դեռևս տեղի չի ունեցել՝ նվազագույն պայմանների ապահովման անհրաժեշտության տեսանկյունից։

Ըստ ինքնավերլուծության՝ նոր մասնաշենքի կառուցումը թույլ կտա նոր մակարդակի բարձրացնել կրթական ծրագրերի իրականացումը, ինչը կբերի որակի շարունակական բարելավմանը։

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ։

Բուհում տեղեկատվության փոխանցման և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու համար գործում է գործավարության կարգը։ Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ներքին ցանցի միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը դիմել է Mulberry համակարգի ներդրման հարցով, սակայն

մասնավոր կառույց լինելու պատճառով դեռևս հայտը չի դիտարկել համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպությունը: Բուհում ուսումնական գործընթացի կառավարման նպատակով ներդրվել է նաև «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիրը: Համակարգը ներառում է ուսպլանները, ուսանողների, շրջանավարտների անձնական տվյալները, առաջադիմությունը, ստուգարքային և քննական տեղեկագրերը, ակադեմիական տեղեկագրերը:

Ըստ սահմանված դեպքերի՝ դասախոսների, ուսանողների դիմումներն ուղղվում են ռեկտորին, պրոռեկտորներին, դեկաններին, ովքեր էլ տնօրինում են դրանց հետ կապված աշխատանքների հետագա ընթացքը: Բուհում դեռևս առկա չէ միասնական էլփոստի համակարգ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհը կարևորում է նաև կայքի պարբերաբար թարմացումը՝ շահակիցներին փաստաթղթային հենքը հասանելի դարձնելու համար:

7.6. ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համալսարանն ապահովում է առողջ և անվտանգ միջավայր ուսանողների և աշխատակիցների համար, որին ուղղված են համալսարանում գործող առողջության և անվտանգության պահպանման ծառայությունները՝ Գիտաբժշկական ուսումնական կենտրոնը (ԳԲՈՒԿ) և պահակային ծառայությունը: ԳԲՈՒԿ-ը իրականացնում է ԱԲՀ-ի ուսանողների և աշխատակիցների առողջության պահպանմանն ուղղված անվճար ծառայություններ, ինչպես նաև բնակչությանը մատուցում է մատչելի վճարովի բուժսպասարկման տարբեր ծառայություններ: Բացի բուժսպասարկումից, կենտրոնի գլխավոր բժիշկը հետևում է շենքային պայմանների սանիտարական նորմերի պահպանմանը:

Փորձագիտական ուսումնասիրությունները և հաստատության ռեսուրսների դիտարկումը ցույց տվեցին, որ լաբորատորիաներում օդափոխման համակարգը բավարար չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ լաբորատորիաներում անվտանգության կանոնների մասին տեղեկատվությունը փակցված չէ, և լաբորատորիաներն ամբողջությամբ չեն համապատասխանում կենսաանվտանգության նորմերին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասապրոցեսի ընթացքում, սակայն, կանոնները ներկայացվում են ուսանողներին համապատասխան գործնական առաջադրանքները կատարելու համար: Դասալսումներից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ օրինակ մանրէաբանության լաբորատոր դասերի իրականացման ընթացքում ոչ ամբողջովին էին պահպանված ներկայացվող անվտանգության կանոնները (ինչպես օրինակ, հակահրդեհային համակարգի՝ կրակմարիչների առկայություն լաբորատորիայի ներսում): Բուհը չունի վերելակ և հարմարեցված սանհանգույցներ՝ հատուկ կարիքներով ուսանողների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նորակառույց մասնաշենքում առկա են վերելակներ և թեքահարթակներ:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Բուհում տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով կատարվում են հարցումներ ուսանողների և

դասախոսների շրջանում: Տեղի են ունենում նաև հանդիպումներ ՊԴ կազմի և ուսանողների հետ, ու ստացված տվյալների հիման վրա իրականացվում են բարելավումներ: Հարցումների արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսանողները շեշտադրում են գրադարանային ռեսուրսների համալրման անհրաժեշտությունը, գրադարանի աշխատաժամանակի ավելացումը դասապրոցեսի ավարտից հետո ևս օգտվելու հնարավորություն ունենալու համար, լսարանների նյութատեխնիկական հագեցվածության և լաբորատոր միջավայրի շարունակական բարելավումը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ռեսուրսների բարելավումը բուհի մշտական ուշադրության կենտրոնում է, և այդ նպատակով պարբերաբար հատկացվում են միջոցներ ենթակառուցվածքների բարելավման և նոր ռեսուրսներ ձեռք բերելու համատեքստում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ առկա ռեսուրսները և կրթական միջավայրը թույլ են տալիս իրականացնելու բուհի կրթական ծրագրերը: Այնուամենայնիվ, չնայած առկա կրթական ռեսուրսներին՝ որոշ լաբորատորիաներ վերազինման և նոր սարքավորումների կարիք ունեն, ինչը կնպաստի ավելի որակյալ կադրերի պատրաստմանը, ինչպես նաև նոր խթաններ կստեղծի դիմորդների ներգրավման համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը, կարևորելով նոր որակի բժիշկների պատրաստումը, փորձում է ներգրավել որակյալ դասախոսական անձնակազմ և հնարավորինս բարելավել ռեսուրսները, ինչը նպաստում է կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Ֆինանսական մուտքերի բազմազանեցման տեսանկյունից՝ փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ բուհի եկամուտների շուրջ 90%-ը ստացվում է ուսանողների վարձավճարներից: Բուհի կողմից ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը, նոր մասնաշենքի ռեսուրսների կիրառմամբ այլաղբյուրների ձևավորումը, վճարովի ծառայությունների մատուցումը կնպաստեն բուհի ֆինանսական կայունությանը և կրթական ծրագրերի իրականացման շարունակականության համար երաշխիքներ կձևավորեն: Կառավարման համակարգի տեսանկյունից ևս նոր կապերի հաստատումը, արտաքին շահակիցների ներգրավումը բուհի գործունեության տարբեր ոլորտներում կարող են նպաստել ֆինանսավորման նոր մոդելների ներդրմանը բուհում:

Ֆինանսների արդյունավետ տնօրինման, կրթական ծրագրերի նպատակների իրականացման և դրանց շարունականության երաշխավորման համար, փորձագիտական խմբի գնահատմամբ, բուհը կարիք ունի հստակ հաշվարկելու յուրաքանչյուր կրթական ծրագրով մեկ ուսանողի համար նախատեսված միջոցները և ռեսուրսները, ինչը կնպաստի հետագա պլանավորումն ու ռեսուրսների հատկացումն առավել արդյունավետ դարձնելուն: Այս համատեքստում ֆինանսական պլանավորման մեխանիզմների լավարկումը կարող է հանգեցնել նաև բուհի զարգացման բյուջեի ծավալների ընդլայնմանը, ինչը կնպաստի բուհի համար ռազմավարական հանդիսացող ուղղությունների զարգացմանը և սահմանված ցուցանիշների ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱԲՀ միտումները փաստաթղթավորման գործընթացներն էլեկտրոնայնացնելու ուղղությամբ, ինչը մեծապես նպաստում է այս գործընթացների կանոնակարգմանը: Այս տեսանկյունից կարևոր հանգամանք է նաև բուհի կայքում տեղեկատվության տրամադրումը, ինչը ապահովում է հիմնական տեղեկատվության հասանելիությունը շահակիցների համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը ուշադրություն դարձնի անվտանգության պահպանմանը միտված աշխատանքների իրականացմանը, հատկապես շեշտադրում է լաբորատորիաներում անտանգությանն ուղղված կանոնների փակցնումը, կենսաանվտանգության կանոնների պահպանումը, համապատասխան օդափոխման և հակահրդեհային համակարգերով լաբորատորիաների վերազինումն ու արդիականացումը կրթական անվտանգ միջավայրի ապահովման համար:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ կարևոր է նաև իրականացվող բարելավումների շարունակական գնահատումը, ինչը նպաստում է շահակիցների կարիքների վերհանմանը և բարելավման գործողությունների մշակմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ԱԲՀ-ում արդիականացվել են որոշ լաբորատորիաներ, և այն կրում է շարունակական բնույթ, ռեսուրսային բազան ամբողջապես թարմացվում է նոր մասնաշենքի կառուցմամբ, առկա է կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ նվազագույն միջավայր, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները շարունակական են, ուսանողների և անձնակազմի համար առկա է գործունեության համապատասխան միջավայր, ներդրված են ռեսուրսների հասանելիության ու կիրառելիության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԱԲՀ-ն կարևորում է ներքին և արտաքին հաշվետվողականության ապահովումը շահակիցների համար: Պետության և հասարակության առջև հաշվետվողականության ապահովման համար բուհը հաշվետվություններ է ներկայացնում.

- ՀՀ Առողջապահության նախարարությանը՝համալսարանի գիտաբժշկական ուսումն ական կենտրոնի տարեվերջյան բուժկանխարգելիչ հիմնարկների գործունեության մասին,
- ՀՀ վիճակագրական կոմիտե՝ համալսարանի ամենամյա գործունեության մասին,
- ԿԳՄՍ նախարարություն՝ բարձրագույն մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատությունների, ամփոփիչ ավարտական ատեստավորման հանձնաժողովի նախագահների դիտարկումների մասին:

Ներքին հաշվետվողականության գործընթացն իրականացվում է համալսարանի ս տորաբաժանումների կատարած աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ձևով: Բուհի փաստաթղթային հենքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվությունները ներկայացվում և քննարկվում

են համալսարանի ԳԽ-ի նիստերում, այնուհետ հրապարակային դառնում ԳԽ-ում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների նեղ շրջանակի համար:

ԱԲՀ գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան հաշվետվությունն է: Հաշվետվությունը կազմվում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ներկայացնող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների առանձին տարեկան հաշվետվությունների հիման վրա: ԳԽ-ում ներկայացնելուց հետո այն տեղադրվում է համալսարանի պաշտոնական կայքէջում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաշվետվությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն, պարունակում են տեղեկատվություն բուհի ունեցած ձեռքբերումների, հաշվետու տարվա ընթացքում իրականացված գործընթացների մասին: Հարկ է նշել, որ հաշվետվություններում հիմնականում վերլուծված չեն պլանավորված, բայց կատարված գործընթացների պատճառները, ինչպես նաև դրանք ոչ միշտ են կապակցվում հաջորդ պլանավորման հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվետվությունների քննարկումները Գիտխորհրդում հանգեցրել են որոշակի փոփոխությունների, որոնց արդյունքում բարելավվել են կրթական ծրագրերը, վերհանվել են գրադարանի համալրման, աշխատակիցների վերապատրաստման կարիքները:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԱԲՀ-ն փորձում է ապահովել հանրության համար թափանցիկությունն ու հասանելիությունն իր պաշտոնական կայքի (http://utm.am) և ֆեյսբուքյան էջի միջոցով: Համալսարանի պաշտոնական կայքը եռալեզու է. տեղեկատվությունը հասանելի է հայերենով, անգլերենով և ռուսերենով: Դիմորդների հավաքագրման նպատակով տեղադրված են համապատասխան կարգերն ու քննական հարցաշարերը, տեղեկատվություն կրթական ծրագրերի մասին, աշխատանքային պլաններ և հաշվետվություններ:

Բուհն իր 2022-2023 ուստարվա հաշվետվությամբ կարևորել է օտարալեզու էջերում տեղեկատվության ամբողջացումը օտարերկրյա այցելուների, մասնավորապես օտարերկրյա դիմորդների համար ամբողջական տեղեկատվություն տրամադրելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհն առավելապես թիրախավորում է միջազգային դիմորդներին, տեղական շուկային ուղղված միջոցառումները առավել սահմանափակ են: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին նաև, որ իր գործունեության մասին հասարակության առավել լայն շերտերին իրազեկելու համար բուհը դեռևս չունի հստակ PR ռազմավարություն և մեխանիզմներ: Կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ռուսալեզու հատվածն ավելի սակավ տեղեկատվություն է ապահովում արտաքին շահակիցների համար: Բուհը դեռևս չի գնահատել ռուսալեզու տեղեկատվության ապահովման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը՝ հաշվի առնելով, որ ռուսալեզու կրթություն բուհը չի իրականացնում, ինչպես նաև հստակեցված չէ, թե ռուսերենով առկա տեղեկատվությունը արտաքին շահակիցների որ շրջանակին է ուղղված:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ վերջին տարիներին աճել են կայքէջի դիտելիության տվյալները. այսպես օրինակ 2017 թվականին էջի դիտելիությունը՝ 5 843 էր, իսկ 2022 թվականին հասել է 65 706-ի՝ աճելով 11 անգամ:

Հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների մեծաթիվ լինելը՝ բուհը ֆեյսբուքյան էջում ևս տրամադրում է տեղեկատվությունը հայերենով և անգլերենով: Ֆեյսբուքյան էջի դիտելիության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին աճել է

նաև տեղեկատվության հասանելիության ցուցանիշը, այսպես օրինակ 2017 թվականին նյութերի հասանելիության ամենաբարձր սանդղակը եղել է 766-ը, իսկ վերջին տարիներին այն անցել է 10.000-ը:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն՝ վերանայվել է ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականությունը: Քաղաքականության համաձայն բուհը կարևորում է հետադարձ կապի մեխանիզմների միջոցով կապի ապահովումը շահակիցների հետ, նրանցից ստացված արձագանքի ուսումնասիրությունը և դրա հիման վրա գիտակրթական գործունեության բարելավումը:

ԱԲՀ-ում լրատվության և հասարակայնության հետ կապերի հաստատման գործառույթներն իրականացնում է կայքէջի պատասխանատուն:

Համալսարանի էլեկտրոնային փոստի հասցեն (info@utm.am) ԱԲՀ-ին դիմելու պաշտոնական տարբերակներից մեկն է: Հետադարձ կապի մեխանիզմներն են նաև բուհի կայքի՝ կապի հաստատման համապատասխան բաժինը և ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնականում նշված տարբերակներով բուհին դիմում են դիմորդները կրթական ծրագրերի, ընդունելության գործընթացների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

ԱԲՀ-ի հասարակության հետ կապերի ձևավորումն իրականացվում է նաև բուկլետների տպագրման միջոցով՝ այդ թվում օտարալեզու: Տպագրվում են նաև անգլերենով գովազդային նյութեր միջազգային ուսանողների հավաքագրման նպատակով:

8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհը կարևորում է հասարակությանը կրթական, բժշկական օգնության, առողջության պահպանման մասնագիտական խորհրդատվության ծառայությունների տրամադրումը և դրանց համապատասխան գործողությունների իրականացումը: ԱԲՀ-ի գիտաբժշկական ուսումնական կենտրոնը (ԳԲՈՒԿ) իրականացնում է բուժսպասարկման և գիտաուսումնական աշխատանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱԲՀ-ի ԳԲՈՒԿ-ը հասարակությանը մատուցում է բժշկական օգնություն և մասնագիտական խորհրդատվական ծառայություն: ԳԲՈՒԿ-ի մատուցած ծառայություններից օգտվում են և՛ ներքին (աշխատակիցներ, ուսանողներ), և՛ արտաքին (ՀՀ բնակիչներ) շահակիցները:

ՄՈՒՀ-ում կան հասարակության գիտելիքի փոխանցման մեխանիզմներից է նաև «ԱԲՀ Բաց Գիտություն» նախագիծը: Նախագծի շրջանակներում հրավիրյալ տեղացի և արտասահմանցի մասնագետների կողմից համալսարանում անցկացվում են բաց դասախոսություններ, որոնց կարող են մասնակցել ոչ միայն ԱԲՀ-ի, այլև այլ բուհերի, բժշկական և գիտահետազոտական կենտրոնների ուսանողներ և աշխատակիցներ:

Գիտելիքի փոխանցմանն են ուղղված նաև համալսարանի Ուսանողական գիտական ընկերության կողմից իրականացվող նախագծերը: Առաջինը՝ Գիտական բաց բանավեճերի նախագիծն է, որի շրջանակներում բժշկագիտության մեջ առկա խնդիրների և դրանց հնարավոր պարզաբանումների մասին քննարկումներից և դեբատներից վերհանված արդյունքները լուսաբանվում է հանրությանը: Երկրորդը՝ առողջապահական իրազեկման

վիդեոշարքն է, որի շրջանակում ԱԲՀ ուսանողները նախապատրաստում և հրապարակում են առողջապահական խնդիրներին առնչվող հակիրճ տեսաձայնագրություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լրացուցիչ կրթության, վերապատրաստումների իրականացման հնարավորություններ դեռևս առկա չեն համալսարանում: Բուհը նախատեսում է այս ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու համար դիմել դրամաշնորհային ծրագրերի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացվող աշխատանքները դեռևս հստակ պլանավորված չեն, ինչպես նաև ցածր է դրանց մասին իրազեկվածությունը արտաքին շահակիցների շրջանում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհում գործում են հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք նպաստում են բուհի գործունեության մասին տեղեկատվության տրամադրմանը հասարակությանը և պետությանը: Առկա գործընթացների մասին շահակիցների իրազեկվածության բարձրացմանը կարող է նպաստել բուհի կողմից PR ռազմավարության մշակումը և կապերի հաստատմանն ուղղված պարբերական գործընթացների իրականացումը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի շեշտադրումը, գործընթացների արդյունքների գնահատումն ու վերլուծությունը, ինչը կնպաստի հաշվետվողականության և պլանավորման գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը վերջին տարիներին բարելավել է տեղեկատվության տրամադրման հարթակների՝ պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի աշխատանքը, ինչը հնարավորություն է տալիս միջազգային դիմորդներին տեղեկանալ բուհի կրթական ծառայությունների մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ կայքի հասանելիության ու մատչելիության մեխանիզմների լավարկումը, օտարալեզու տեղեկատվության ամբողջական համալրումը կարևոր են գործընթացների թափանցիկության ապահովման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ համապատասխան տեղեկատվության տրամադրումը, հաշվի առնելով համագործակցությունների ուղղությունները, դիմորդների ներգրավման շուկաները, հնարավորություն կտա ռեսուրսներն ուղղել ավելի որակյալ տարբերակով տեղեկատվության տրամադրմանն ու տարածմանը:

Անդրադառնալով հետադարձ կապի ապահովման մեխանիզմներին՝ փորձագիտական խումբը դրական է համարում կայքի, ֆեյսբուքյան էջերի կիրառմամբ հասարակությանը հուզող հարցերին պատասխանելը և հետադարձ կապ ապահովելը: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշված մեխանիզմների շարունակական գնահատումը, շահակիցների բացահայտված կարիքներին հիման վրա այս գործիքների լավարկումը կնպաստեն կայուն հետադարձ կապի ձևավորմանը:

Դրական հանգամանք է, որ բուհը, կարևորելով հասարակությանն արժեքների փոխանցումը, ԳԲՈՒԿ-ի միջոցով հանրությանը մատուցում է բժշկական ծառայություններ, ինչը խոսում է բուհի սոցիալական պատասխանատվության մասին: Դրական հանգամանք է նաև բուհի ՈՒԳԸ-ի ներուժի օգտագործումը սեմինարների, գիտաժողովների կազմակերպման միջոցով բժշկական ոլորտի գիտելիքների փոխանցման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս աշխատանքների կանոնակարգումը, դրանց պարբերական իրականացումը կնպաստեն բուհի մասին իրազեկվածության բարձրացմանը ու տեղեկատվության ապահովմանը հանրության լայն շերտերի շրջանում: Կարևոր է նաև սահմանել իրականացվող դասընթացների, քննարկումների նպատակները և ակնկալվող արդյունքները բուհի

ռեսուրսներին օպտիմալ կիրառման ու գործընթացներից ստացվող հետադարձ կապի արդյունավետության բարձրացման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում է հաշվետվողականության սահմանված համակարգ, համալսարանն ապահովում է իր գործընթացների իրականացման մասին տեղեկատվության տրամադրումն ու թափանցիկությունը, առկա են հետադարձ կապի ապահովման և հասարակությանը արժեքների փոխանցման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարարում է չափանիշ 8-ի պահանջներին։

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**։

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանն իր 2020-2025թթ. ռազմավարությամբ կարևորել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը՝ նպատակ ունենալով խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները համալսարանական և ծրագրային մակարդակներում։ Բուհի կողմից սահմանվել են հետևալ խնդիրները.

- ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները,
- ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում,
- ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը։

Դիտարկելով ԱԲՀ իրականացրած գործընթացները միջազգայնացման խթանման, միջազգային դիմորդների շարունակական ներգրավման նպատակով՝ պարզ է դառնում, որ նախորդ հավատարմագրումից հետո աճել է օտարերկրյա ուսանողների թիվը։ Այսպես 2018-2019թթ.-ի համեմատությամբ (250 ուսանող) 2022-2023 թթ.-ի տարեսկզբի դրությամբ համալսարանի ուսանողների թիվը (621 ուսանող) աճել է մոտ 2,4 անգամ: 2022-2023 ուստարվա սկզբին օտարերկրյա ուսանողները (595 ուսանող) կազմել են ուսանողների ընդհանուր թվի 96%-ը: Ինքնավերլուծության համաձայն՝ միջազգային ուսանողների հավաքագրման նպատակով ԱԲՀ-ն համագործակցում է «Քեմփուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, ՀՀ-ում տարբեր դեսպանատների հետ:

ԱԲՀ-ն իր ռազմավարությամբ կարևորում է նաև փորձի փոխանակումը կրթական ծրագրերի բարելավման նպատակով։ Այս ուղղությամբ բուհը նախատեսել է իրականացնել բենչմարքինգ եվրոպական առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետ արդիականացնելու

համար գործող կրթական ծրագրերը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2019-2020 ուստարվա ընթացքում կազմակերպվել է ՄԿԾ-ների բենչմարքինգ՝ Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» հետ: Բենչմարքինգի արդյունքում վերանայվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ների ուսումնական պլանները, վերջնարդյունքները և առարկայական դասընթացների ծրագրերը: Այսուհանդերձ, համադրելով ընտրված հաստատությունները ուսանողների հոսք ապահովող երկրների հետ՝ տեսանելի է դառնում, որ իրականացված բենչմարքինգը չի թիրախավորել այն երկրները (Հնդկաստան, Իրաք, Իրան, Գանա և այլն), որտեղ ուսումնառությունն ավարտելուց հետո իրենց աշխատանքային գործունեությունը իրականացնում են բուհի շրջանավարտները: Համեմատական վերլուծության հիմքում չեն դրվել ուսանողների կարիքները և շրջանավարտների մասնագիտական գործունեության աշխատաշուկաները:

Նախորդ հավատարմագրումից հետո համալսարանը կնքել է մի շարք հուշագրեր, օր.՝ 2021թ. Բելառուսի Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի հետ, Լեհաստանի Բիդգոշչի «WSG» համալսարանի հետ՝ ուսանողների փոխանակման, ինչպես նաև բուժքույրական, բժշկական օգնության ծրագրերի, պրակտիկայի և այլ ոլորտներում համագործակցության համար: ԱՄԷ Շարժայի «Սըքսես Փոինթ» քոլեջի հետ բուհն իրականացրել է 16 ուսանողների փոխանակում: Վերոնշյալ մյուս դեպքերում գործընթացները դեռ պլանավորման փուլում են: Դասախոսական կազմի փորձի փոխանակման դեպքերը ևս խիստ սահմանափակ են և հիմնականում տեղի են ունենում սեփական նախաձեռնությամբ:

Ինքնավերլուծության համաձայն բուհի ներկայացրած տվյալների դիտարկումից պարզ դարձավ, որ ԱԲՀ ուսանողների արտագնա շարժունության դեպքեր չեն արձանագրվել: Դասախոսական կազմը ևս դեռևս չի մասնակցել շարժունության ծրագրերի:

ԱԲՀ-ն նախատեսել է նաև միջազգային դրամաշնորհների դիմել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման ծրագրեր բուհում դեռևս առկա չեն: Բուհը նախատեսել է նաև իրականացնել համատեղ գիտակրթական միջոցառումներ միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, խրախուսել միջազգային շարժունության ծրագրերը և վերապատրաստումները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նշյալ գործընթացները ևս դեռևս պլանավորման փուլում են:

9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Համալսարանը 2017 թ.-ին մշակել է արտաքին կապերի բաժնի կանոնադրությունը: Փաստաթուղթն արտացոլում է բաժնի խնդիրներն ու գործառույթները, որոնք փոփոխության չեն ենթարկվել նոր Ռազմավարության հաստատումից հետո: Համալսարանում Արտաքին կապերի բաժնի գործունեությունը իրականացնում են բաժնի վարիչը և 2 մասնագետներ: Արտաքին կապերի բաժնի գործունեության շրջանակներն ընդգրկում են համալսարանի համագործակցության ապահովումը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների ու գիտական կենտրոնների միջև, ուսանողների, ՊԴ կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերին նպաստումը, համալսարանի և միջազգային կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացումը, այլ երկրներից ուսանողների հավաքագրմանը, համալսարանի առջև դրված ռազմավարական գերակա խնդիրների լուծումը: Նշված ուղղությունների զարգացման համար բաժինն ունի նաև հնգամյա ռազմավարական ծրագիրն ընդգրկող պլան: Պլանում նախատեսված

գործընթացներն ուղղված են դիմորդների ընդունելության կազմակերպմանը, ուսանողների անձնական գործերի, տեղեկանքների պատրաստմանը, ուսանողների և ՊԴ կազմի համար միջոցառումների իրականացմանը, արտաքին կապերի ընդլայնմանը և համագործակցությունների հաստատմանը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ լրացուցիչ ֆինանսական միջոցներ նշված գործընթացների համար հատկացված չեն: Համագործակցությունների հաստատումը չի հիմնվում շուկայի թիրախային ուսումնասիրությունների վրա: Փորձագիտական խմբի կողմից բուհի սահմանած ակնկալվող արդյունքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հիմնականում սահմանափակվում են գործընթացների փաստաթղթավորմամբ (հրամաններ, պայմանագրեր, զեկույցներ և այն), և տեսանելի չէ բուհի կողմից դրանցով նախատեսված որակական փոփոխությունը կամ ակնկալվող բարելավումը:

Ինքնավերլուծության համաձայն՝ բուհը ևս շեշտադրում է այն հանգամանքը, որ միջազգայնացման գործընթաները խթանելու համար անհրաժեշտ է ակտիվացնել համալսարանի ամբիոններում կատարվող աշխատանքները հանրապետության այլ բուհերի և արտասահմանյան գործընկերների հետ՝ գիտական, կրթական բնագավառին վերաբերող տարբեր բնույթի համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ աշխատանքների հստակ պլանավորում՝ մարդկային ու ֆինանսական ռեսուրսների բաշխմամբ ու ակնկալվող արդյունքների սահմանմամբ, դեռևս տեղի չի ունեցել:

9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանը գործնական ուսուցման և արտադրական պրակտիկաների կազմակերպման նպատակով պայմանագրեր է կնքել շուրջ 14 բժշկական կազմակերպությունների (հիվանդանոցներ, կլինիկաներ, պոլիկլինիկաներ, ատամնաբուժարաններ) հետ, ինչը հնարավորություն է ընձեռում ոչ միայն համատեղ ռեսուրսների կիրառման գործնական պարապմունքների իրականացման նպատակով, այլև պրակտիկաների իրականացման համար: Պրակտիկաների կազմակերպմանն են ուղղված նաև Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի «WSG» համալսարանի հետ կնքված հուշագիրը: Տեղական համագործակցությունների արդյունքում դասավանդման գործընթացում ներգրավվել են պրակտիկ ոլորտից բժիշկներ (ընդհանուր դասախոսական կազմի շուրջ 18%-ը) Ս. Գրիգոր Լուսավորիչ, Արմենիա բժշկական կենտրոններից, Հայ-ամերիկյան առողջության կենտրոնից և այլ բուժհաստատություններից: Համալսարանը համագործակցում է նաև ՀՀ Ստոմա-տոլոգների ասոցիացիայի հետ, որի անդամներ են բուհի դասախոսներից շատերը:

Անդրադառնալով միջազգային ուսանողների համար պրակտիկաների հնարավորությունների ստեղծմանը՝ հարկ է նշել, որ ՀՀ-ում նրանք հնարավորություն ունեն իրենց պրակտիկան անցնել բուհի գործընկեր կազմակերպություններում: Այսուհանդերձ, եթե միջազգային ուսանողները վերադառնում են իրենց երկրներ պրակտիկայի ժամանակահատվածն այնտեղ անցկացնելու համար, բուհը համապատասխան պայմանավորվածությունների հիման վրա հնարավորություն է ընձեռում նրանց անցնել պրակտիկան: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այս պայմանավորվածությունները ձեռք են բերվում ըստ անհրաժեշտության և ընթացիկ վերահսկման ինստիտուցիոնալ մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Բուհը շարունակաբար փորձում է ընդլայնել միջազգային համագործակցությունները բժշկական ոլորտի կազմակերպությունների ու համալսարանների հետ՝ կնքելով պայմանագրեր, հուշագրեր: Այսպես օրինակ համագործակցության պայմանագրեր են կնքվել Գրոդնոյի, Վիտեբսկի պետական բժշկական համալսարանների հետ: Նշված պայմանագրերը ենթադրում են փորձի փոխանակում, պրակտիկաների հնարավորություններ, համատեղ սեմինարների անցկացում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաստատված միջազգային կապերը դեռևս չեն նպաստել բուհի ուսանողների կարիքներին համապատասխան պրակտիկաների վայրերի բազմազանեցմանը, շարժունության ապահովմանը, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը խրախուսում է փորձի փոխանակումը նաև առցանց տարբերակով գիտաժողովների, սեմինարների մասնակցության միջոցով: Այդպիսի սեմինարներ են կազմակերպվել Գրոդնոյի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում:

9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Համալսարանը իր կարևոր խնդիրներից է համարում ներքին շահակիցների անգլերենի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովումը՝ նպատակ ունենալով ընդլայնել միջազգային ուսանողների համակազմը: Ինքնավերլուծության համաձայն՝ բուհի դասախոսական կազմի 88%-ը և վարչական կազմի 44%-ը տիրապետում են անգլերենին: Ուսանողների պարագայում անգլերենի իմացությունը 90% է (օտարերկրյա ուսանողները կազմում են ուսանողների ընդհանուր թվի 96 %-ը):

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքների քննարկումների հիման վրա 2021-2022 ուստարում բուհի կողմից կազմա-կերպվել են անգլերենի դասընթացներ 28 դասախոսների համար: Վերապատրաստման ավարտին 27 մասնակցի տրվել են B2 մակարդակի և 1 մասնակցի՝ C1 մակարդակի հավաստագրեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը նախատեսում է հետագայում ևս տրամադրել բյուջե դասընթացների/վերապատաստումների կազմակերպման համար:

Դասալսումներից պարզ դարձավ, որ նույն խմբում սովորող միջազգային ուսանողները հաճախ ունեն անգլերենի իմացության տարբեր մակարդակներ: Միջազգային և հայ ուսանողների համար անգլերենի լրացուցիչ պարապմունքներ նախատեսված չեն, սակայն անհրաժեշտության դեպքում ուսանողները դիմում են դասախոսներին և ստանում համապատասխան մասնագիտական աջակցություն: Անգլախոս ուսանողների համար ԱԲՀ-ի ՄԿԾ-ներում ներառված են նաև հայերենի դասընթացներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն իր ռազմավարությամբ կարևորել է արտաքին կապերի հաստատումը ու միջազգայնացման գործընթացների խթանումը, ինչը նպաստել է նոր համագործակցությունների հաստատմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ հաստատված նպատակներին հասնելու համար բուհը դեռևսչի հստակեցրել միջազգայնացմանն ուղղված քաղաքականությունը, չի սահմանել չափելի ու նպատակներին ուղղված խնդիրներ, ինչը հնարավորություն կտար միջազգայնացման գործընթացները դարձնել ավելի պլանավորված ու ձևավորել փորձի փոխանակման միջավայր: Փորձագիտական խումբը գտնում է, որ

սահմանված ռազմավարական նպատակներին ու ԳԱՑ-երին հասնելն ավելի իրատեսական կլինի, երբ բուհը կարողանա նաև այս նպատակները դնել ընթացիկ պլանավորումների հիմքում, արտացոլել ամբիոնային աշխատանքներում, ներգրավել շահակիցների հնարավորինս լայն շրջանակի: Ամբիոնների ներգրավվածության ցածր մակարդակը միջազգայնացման գործընթացներում կարող է խոչընդոտ հանդիսանալ նաև հետազոտական ուղղությամբ բուհի գործընթացների բարելավման համար, չնպաստել դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը և բուհի տեսանելիության բարձրացմանը բժշկական մասնագիտական ուսումնական հաստատությունների շարքում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում արտաքին կապերի կիրառմամբ ուսանողական կազմի շարունակական համալրմանն ուղղված բուհի ջանքերը, ինչը նպաստել է ուսանողների թվաքանակի աճին և ֆինանսական միջոցների կայունացմանը: Կրթական ծրագրերի շարունակական լավարկման համար կարևորելով բենչմարքինգի իրականացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կողմից թիրախային կրթական ծրագրերի ուսումնասիրությունը, ուսումնառողների կարիքների վերհանումը կարևոր են շրջանավարտների մրցունակության բարձրացման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը նպատակները սահմանելիս հատկացրել է նաև մարդկային ռեսուրսներ գործընթացների կառավարման նպատակով: Այս համատեքստում կարևոր է նաև համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրումը բուհի կողմից, ինչը կնպաստի սահմանված նպատակների իրագործելիության բարձրացմանը: Պլաններում ակնկալվող արդյունքների հստակեցումը ևս կարևոր է փաստաթղթային պլանավորումից անցում կատարելու միջազգայնացմանն ուղղությամբ առավել շոշափելի արդյունքներ ունենալուն, ինչը կհանգեցնի կրթական ծրագրերի միջազգայնացմանը՝ բուհի կրթական ծրագրերը ճանաչելի և ընդունելի դարձնելու միջոցով: Փորձագիտական խմբի համոզմամբ այս աշխատանքները կնպաստեն նաև դասախոսական և ուսանողական համակազմերի շարժունության իրականացմանն ու փորձի փոխանակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար բուհը շարունակաբար համալրում է իր գործընկեր բժշկական հաստատությունների բազան, ինչը հարավորություն է տալիս կազմակերպել ուսանողների պրակտիկան և նրանց փոխանցել համապատասխան կարողություններ: Հաստատված համագործակցությունները նպաստում են նաև ռեսուրսների համատեղ օգտագործմանը և պրակտիկ ոլորտից բժիշկ-դասավանդողների ներգրավմանը. նման մասնագետների հետ աշխատանքը, նրանց փորձառության դիտարկումը նպաստում է ուսանողների կլինիկական մտածողության ձևավորմանը:

Միջազգային համանման բուժհաստատությունների հետ կապերի հաստատումը, պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը կարող են նպաստել միջազգային ուսանողների պրակտիկայի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Դրական հանգամանք է, որ բուհը շարժունության կազմակերպման, փորձի փոխանակման համար պայմանագրեր է կնքել որոշ միջազգային գործընկեր բժշկական բուհերի հետ: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ այս ուղղությամբ աշխատանքները դեռևս պարբերական ու համակարգված չեն իրականացվում, ինչը թույլ կտար բուհին վեր հանել լավագույն փորձը բուհում ներդրման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհն օգտվում է նաև սեմինարներին ու գիտաժողովներին մասնակցության առցանց հնարավորություններից, ինչը

թույլ է տալիս ֆինանսական միջոցներ խնայելով ծանոթանալ այլ հաստատությունների փորձին: Այս համատեքստում կարևոր է նման հնարավորությունների մասին ներքին շահակիցների հնարավորինս լայն շրջանակի իրազեկումը, նման միջոցառումների պարբերական իրականացումը, ինչը հիմքեր կստեղծի շարժունության հետագա ծրագրերի համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը միջոցներ է հատկացնում դասախոսական կազմի անգլերենի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչը նպաստում է նաև անգլալեզու խմբերում դասավանդող դասախոսների կարողությունների զարգացմանը: Անգլերենի իմացության կիրառումը կարող է նպաստել նաև դասախոսական կազմի կողմից միջազգային հետազոտական և գիտական գրականության ուսումնասիրման ծավալների ընդլայնմանը, նրանց ներգրավմանը միջազգային դրամաշնորհային ծրագրերում: Փորձագիտական խումբը կարևորում է այս գործընթացների շարունակական իրականացումը դասախոսների համար, ինչպես նաև նման հնարավորությունների ստեղծումն ուսանողների համար: Անգլերենի իմացության մակարդակի պահանջների հստակեցումը, իմացության լավարկումը կարևոր է, որ ուսանողները կարողանան ուսումնասիրել մասնագիտական գրականություն և ստեղծել համագործակցային մասնագիտական կապեր, ինչը հնարավորություն կստեղծի նաև հետագայում մասնագիտական աշխատանք գտնելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ արտաքին կապերի հաստատմանն ու միջազգայնացմանն ուղղված ընթացակարգերը դեռևս չեն նպատում փորձի փոխանակմանը, միջազգայնացման գործընթացները հստակ պլանավորված չեն, արտաքին կապերի հաստատման ու համագործակցության մեխանիզմները ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում, տեղական և միջազգային համագործակցությունների ուղղությունները լիովին չեն արտացոլում բուհի շահակիցների կարիքները, ուսանողների և դասախոսների շարժունությունը խթանող գործընթացները տեսանելի արդյունքների չեն հանգեցրել՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով ԱԲՀ-ում մշակվել է Որակի ապահովման քաղաքականությունը: Համալսարանի ՈԱ քաղաքականության հիմնական նպատակն է հնարավորինս ապահովել եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի ներքին մշակույթի ձևավորումը, տարածումն ու զարգացումը, ԱԲՀ-ի ռազմավարական նպատակներին ու խնդիրներին

համապատասխան առաքելության իրականացումը: 2022թ.-ին բուհի Գիտական խորհրդում հաստատվել է նաև Որակի ապահովման ձեռնարկը: Ձեռնարկը մշակվել է բուհի կողմից բարձրացնելու ներքին և արտաքին շահակիցների իրազեկվածությունը որակի ապահովման և կառավարման համակարգի վերաբերյալ, խթանելու նրանց ներգրավվածությունը որակի ապահովման համակարգի զարգացման համար: Ձեռնարկի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն ընդգրկում է ինչպես բուհի որակի ապահովման ընթացակարգերը, կիրառվող գործիքները, պատասխանատուները, այնպես էլ անդրադարձ է կատարված կրթական ծրագրերի մշտադիտարկմանը, վերանայմանը, առկա են կրթական ծրագրերի մշակման մեթոդական մոտեցումներ ՄԿԾ պատասխանատուների համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում փորձ է կատարվել ներդնել որակի ապահովման մշակույթի ձևավորման տարրեր: 2019թ.-ին ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա կազմվել է Թերությունների վերացման պլան-ժամանակացույց, ըստ որի իրականացվել են գործողություններ՝ միտված ՈԱ ներքին համակարգի բարելավմանը: Թերությունների վերացման ծրագրի համաձայն՝ բուհը որակի ապահովման գործընթացների կանոնակարգմանը զուգընթաց իրականացրել է կարիքների վերհանմանն ուղղված միջոցառումներ՝ որպես գործիք կիրառելով հարցումները, քննարկումները: Ծրագրի միջանկյալ հաշվետվությունում բուհը ևս փաստել է, որ որակի ապահովման համակարգի լիարժեք ներդրման ուղղությամբ դեռևս շատ գործընթացներ պետք է իրականացնել:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի աշխատանքային պլանը ևս համընկնում է բուհի ռազմավարական զարգացման պլանի ժամանակատվածին՝ փորձելով համակցել պլանով նշված գործողությունները ՌԾ նպատակների հետ: Պլանում սահմանված գործընթացները բավական ընդգրկուն են, ներառում են ինչպես որակի ապահովմանն ուղղված գործընթացները, այնպես էլ կրթական, հետազոտական գործունեության զարգացմանը միտված ուղղությունները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որակի ապահովման ուղղությամբ նախատեսված գործընթացներից իրականացվել են շահակիցների հետ քննարկումները, հարցումները, մշակվել և հաստատվել են ընթացակարգային ու ձևաչափային փաստաթղթերը: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ պլանում սահմանված ժամանակահատվածները ընդհանրական են (հիմնականում 2020-2025թթ.), իսկ ակնկալվող արդյունքները հաճախ հանգում են փաստաթղթային հենքի ձևավորմանը, ինչը տեսանելի չի դարձնում դրա կիրառման արդյունքում բուհի կողմից նախատեսված որակական փոփոխությունները:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Բուհում որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ԳԽ-ին կից ձևավորվել է Որակի ապահովման հանձնաժողովը, որի նախագահը ևս բուհի ռեկտորն է: Որակի ներքին ապահովման գործընթացները համակարգում են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը և ՈԱ առաջատար մասնագետը:

Պաշտոնների անձնագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ծրագրում, կազմակերպում և հսկում է որակի ապահովման աշխատանքների կատարումը, պատասխանատու է ՈԱ քաղաքականության իրագործման, ՈԱ

գործընթացների, մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար: ՈԱ առաջատար մասնագետը մասնակցում է որակի ապահովման գործընթացներին, պրոռեկտորի հանձնարարությամբ մասնակցում ոլորտային գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը: ՈԱ գործընթացների մասին հաշվետվությունները ներկայացվում են համալսարանի ռեկտորին:

ՈԱ գործընթացների իրականացման նպատակով ըստ անհրաժեշտության ԱԲՀ ռեկտորի հրամանով ձևավորվում են աշխատանքային խմբեր, որոնք ներկայացնում են հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ ԱԲՀ ԳԽ նիստին: Այսպես օրինակ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացնելու համար ռեկտորի հրամանով 2023թ.-ին ձևավորվել է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավված են եղել ստորաբաժանումների աշխատակիցներ ու ուսանողներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուների մասնագիտական կարիքների գնահատում չի իրականացվել: Այսուհանդերձ, պրոռեկտորը և առաջատար մասնագետը մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից որակի ապահովման ուղղությամբ կազմակերպված քննարկումներին ու վերապատրաստումներին: ԱԲՀ տարեկան բյուջեով նախատեսված են ՈԱ համակարգին տրամադրվող ֆինանսական հատկացումներ, որոնցից տրամադրվում է նաև ՈԱ պատասխանատուների աշխատավարձը, հատկացվում են ՈԱ գործընթացների կազմակերպման, աշխատաքային խմբերի ձևավորման համար պահանջվող ծախսերը: Մասնագիտական վերապատրաստումների համար առանձին միջոցներ նախատեսված չեն, դրանք հատկացվում են ըստ բուհի հայեցողության: ՈԱ պատասխանատուների համար բուհում առանձնացված են համապատասխան աշխատասենյակներ՝ հագեցած անհրաժեշտ միջավայրով:

10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Համալսարանի ներքին շահակիցները ներգրավվում են որակի ապահովման գործընթացներում հիմնականում հարցումների, քննարկումների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների միջոցով վերհանվել են ենթակառուցվածքների բարելավման, մասնագիտական գրականության թարմացման ուղղությամբ խնդիրներ, որի արդյունքում օրինակ բուհը միջոցներ է հատկացրել անգլալեզու գրականություն ձեռք բերելու ուղղությամբ: Հարցումներ են իրականացվել նաև պրակտիկայի գործընթացները գնահատելու նպատակով: Հարցման վերլուծությունը քննարկվել է նաև պրոռեկտորների ու ուսանողների հետ: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հարցումների անցկացման մեթոդաբանությունը և պարբերականությունը դեռևս ամբողջովին հստակեցված չէ, հարցաշարերում ներկայացված հարցերը երբեմն շատ ընդհանրական են: Բուհը դեռևս փորձում է նոր մեթոդներ կիրառել՝ ընդգրկելու ներքին շահակիցների ավելի լայն շրջանակի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կարիքները, կրթական ծրագրերից բավարարվածությունը առավելապես քննարկվում է ընթացիկ հանդիպումների ժամանակ: Այսպես օրինակ, ուսանողները վերհանել են ավանդական կրթամասի առարկաների ուսումնառության ժամաքանակի ծավալուն լինելու հանգամանքը՝ մասնավորապես Ֆիտոթերապիա և Ասեղ-այրում թերապիա առարկաների մասով: Հաշվի առնելով այս կրեդիտների ճանաչման խնդիրները արտերկրում, նաև մասնագիտական

առարկաների հաշվին այս ուղղությանը տրվող կրեդիտների մեծ քանակը՝ Գիտխորհուրդը որոշում է կայացրել պահպանել առարկաները, սակայն նվազեցնել ծանրաբեռնվածությունը:

Դասախոսական կազմի կարիքները քննարկվում են ամբիոնային նիստերի, Գիտխորհրդի նիստերի ժամանակ, որոնց արդյունքում փոփոխություններ են տեղի ունեցել կրթական ծրագրերում, վերհանվել են նյութերի ձեռքբերման ուղղությամբ հարցեր:

Համալսարանի որակի ապահովման գործընթացներին արտաքին շահակիցների մասնակցությունը հիմնականում սահմանափակվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվելով: Բուհի համար խոչընդոտ է այն հանգամանքը, որ գործատուների հետ կապը խզվում է՝ պայմանավորված բուհն ավարտելուց հետո ուսանողների կրթությունն օրդինատուրայում շարունակելու հանգամանքով: ՀՀ գործատուների կարիքները որոշակիորեն արտացոլվում են կրթական ծրագրերում պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների միջոցով, որոնք իրենց փորձառությունը ներդնում են դասավանդման գործընթացում: Միջազգային արտաքին շահակիցների (գործատուների, որոնց մոտ միջազգային ուսանողներն անցնում են աշխատանքի) կարիքների գնահատում բուհի կողմից չի իրականացվել:

10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Ինքնավերլուծության համաձայն՝ որակի ապահովման համակարգի վերանայումը, գործընթացների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթային հենքի լրամշակումը տեղի է ունեցել նախորդ հավատարմագրումից հետո: Բուհի կողմից մշակված Թերությունների վերացման ծրագրում ամրագրվել են բարելավմանն ուղղված գործողությունները, որոնցով բուհը փորձել է առաջնորդվել: Այնուհետ բուհը հաշվի է առել նաև ՈԱԱԿ-ի կողմից որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման ընթացքում արված դիտարկումները ընթացակարգերը մշակելու և կարիքների վերհանման գործիքները ձևավորելու համար: Փաստաթղթային հենքը, որի վրա հենվում է ներկայումս բուհի որակի ապահովման ներքին համակարգը, հիմնականում հաստատված է 2022թ.-ին: Դրանցով նախատեսված աշխատանքների ավարտը համընկնում է հաճախ ռազմավարական ծրագրի ավարտին, և բուհը դրանց արդյունավետության գնահատում դեռ չի իրականացրել:

ԱԲՀ-ն դիտարկել է առկա հաշվետվությունները, ստորաբաժանումների կատարողականները, որոնց միջոցով փորձել է ընթացիկ վերանայումներ իրականացնել, սակայն որակի մշակույթը դեռևս ինստիտուցիոնալացման փուլում է: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ հաճախ մշակված ընթացակարգերը ընդգրկում են գործունեության առավել լայն շրջանակ, քան որակի ապահովման ուղղությամբ է նախատեսված բուհում՝ ներառելով կրթական ծրագրերի վերանայումներ, վերապատրաստումներ:

10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո վերահավատարմագրման նպատակով 2023թ.-ին ԱԲՀ-ն իրականացրել է իր երկրորդ ինքնավերլուծությունը: Ինքնավերլուծության իրականացման նպատակով ռեկտորի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ: Խմբում ներգրավված են եղել բուհի ղեկավար կազմը, վարչական աշխատակիցներ, դասախոսներ և ուսանողներ: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ցույց տվեցին, որ յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ուղղությամբ

տրամադրել է տվյալներ, որոնք այնուհետև ամփոփվել են որակի պատասխանատուների կողմից։ Նախագծի պատրաստումից հետո այն շրջանառվել է բուհում, քննարկվել շահակիցների հետ, որից հետո հաստատվել է ինքնավերլուծության վերջնական տարբերակը։

Ինքնավերլուծության շրջանակներում ներկայացվել են բուհի ունեցած ձեռքբերումները նախորդ հավատարմագրումից հետո, անդրադարձ է կատարվել Թերությունների վերացման ծրագրով նախատեսված գործընթացներին, ներկայացվել են նաև տվյալ չափանիշին առնչվող փաստաթղթերը։ Այսուհանդերձ, հարկ է նշել, որ ինքնավերլուծությունն ունեցել է առավելապես նկարագրական բնույթ, նախորդ հինգ տարիների զարգացման դինամիկան ներկայացվել է հատվածապես՝ բուհում ընթացող գործընթացների մասին պահանջվող տարիների վերաբերյալ վերլուծությունը ոչ ամբողջապես արտահայտելով։

10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԱԲՀ-ն փորձում է ապահովել որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը հիմնականում պաշտոնական կայքի միջոցով։ Ներքին և արտաքին շահակիցների համար տեղեկատվության ապահովման համար ՄՈՒՀ-ի կայքում առկա է ՈԱ գործընթացների ներկայացման առանձին բաժին, որտեղ տեղադրված է ՈԱ համակարգի քաղաքականությունը, պաշտոնի անձնագրերը, ՈԱ գործընթացներն արտացոլող հիմքերը՝ տարեկան հաշվետվություն, հարցումների վերլուծություններ, ձեռնարկներ և ուղեցույցներ։

Ներքին շահակիցների շրջանում որակի ապահովման համակարգի գործունեության թափանցիկությունն ապահովվում է նաև Գիտխորհրդում հարցումների միջոցով բացահայտված կարիքների քննարկման, հաշվետվությունների ու կատարողականների ներկայացման միջոցով։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է իրականացրել հաստատությունում որակի մշակույթի ձևավորման ու տարածման ուղղությամբ։ Մասնավորապես մշակել է համապատասխան քաղաքականություն ու ընթացակարգեր, ինչը հնարավորություն է տվել կանոնակարգել որակի ապահովման գործընթացները, որակի ապահովման համակարգի գործունեությունը փոխկապակցել բուհի զարգացման ուղղություններին։ Դրական է, որ բուհը բարելավել է որակի պլանավորման աշխատանքները՝ համապատասխան պլանների մշակման, պատասխանատվությունների բաշխման միջոցով։ Փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված նպատակների առավել հստակեցումը, դրանց համար միջանկյալ ցուցիչների սահմանումը կնպաստեն որակի մշակույթի ամրապնդմանը ԱԲՀ-ում։ Կարևոր է նաև ակնկալվող արդյունքների համակարգի շարունակաբար լավարկումը որակի ապահովման գործառույթների ամբողջական իրականացման, փաստաթղթավորում-իրականացում կապերի լիարժեք գործարկման համար, ինչը կհանգեցնի բուհում ընթացող գործընթացների որակական բարելավումների։

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև բուհի կողմից մարդկային ռեսուրսների հատկացումը, նախորդ հավատարմագրումից հետո այս ուղղությամբ կառուցվածքային փոփոխությունների միջոցով պրոռեկտորի հաստիքի ներդրումը, ինչը

հնարավորություն է տվել բուհին ՈԱ գործընթացները կապակցել սահմանված բարելավման ուղղություններին, բարելավել կրթական ծրագրերը, դրական ազդեցություն ունենալ կառավարման համակարգի զարգացման վրա: Հաշվի առնելով բուհի կազմակերպաիրավական բնույթով պայմանավորված առանձնահատկությունները և դիտարկելով, որ ներկայումս որակի ապահովման համակարգը կաշկանդված չէ կարիքների վերհանման գործում՝ փորձագիտական խումբն այսուհանդերձ շեշտադրում է որակի ապահովման համակարգի որոշակի անկախության հանգամանքը: Որակի ապահովման հանձնաժողովում ռեկտորի նախագահ լինելու հանգամանքը կարող է հանգեցնել ռեկտորի աշխատանքի գնահատման անարդյունավետությանը, շահերի բախմանը, քանի որ հավաքագրված տվյալները նորից ներկայացվում են բուհի ղեկավարին: Հաշվետվողականության նոր ուղիների որոնումը կարող է նպաստել խնդիրների ու կարիքների վերհանման գործընթացների լավարկմանը:

Կարևոր է, որ ըստ անհրաժեշտության ձևավորվում են նաև աշխատանքային խմբեր, տրամադրվում են ֆինանսական միջոցներ որակի ապահովման գործընթացներին աջակցելու համար: Փորձագիտական խումբը կարևորում է նաև կարիքների գնահատումից հետո մասնագիտական վերապատրաստումների հնարավորությունների ընդլայնումը պատասխանատուների կարողությունների զարգացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման ընթացքում տրված խորհրդատվությունները՝ բուհը որոշակիորեն լավարկել է նաև շահակիցների կարիքների վերհանման գործիքակազմերը: Դրական է, որ բուհը վերհանում է ներքին շահակիցների կարիքները, հնարավորություն տալիս նրանց իրենց խնդիրները ներկայացնելու քննարկումների, Գիտխորհրդի նիստերի ընթացքում, ինչը նպաստել է կրթական ծրագրերի, նյութատեխնիկական միջոցների բարելավմանը: Կարևոր է կիրառվող գործիքների արդյունավետության գնահատման հիմքով դրանց կատարելագործումը, ինչը հնարավորություն կտա բուհին իր առանձնահատկություններին համահունչ վեր հանել ուսանողների, շրջանավարտների, դասախոսների ու վարչական անձնակազմի կարիքները ու նախատեսել բարելավման համապատասխան գործընթացներ: Անդրադարձ կատարելով արտաքին շահակիցներին՝ փորձագիտական խմբի համար տեսանելի են բուհի ջանքերը ուղիներ որոնելու արտաքին շահակիցների կարիքների գնահատման ուղղությամբ: Այնուամենայնիվ, բուհը պետք է արդյունավետ ձևեր գտնի գործատուների, հասարակության հետ աշխատելու համար, ինչը կնպաստի նաև բուհի մասին իրազեկվածության բարձրացմանը, նոր կապերի ձևավորմանը, բուհ-գործատու կապերի ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը հաշվի է առել նախորդ հավատարմագրման ժամանակ որակի ապահովման ներքին համակարգի ուղղությամբ արձանագրված խնդիրները և քայլեր իրականացրել դրանց ուղղությամբ, ինչը նպաստել է համակարգի զարգացմանը բուհում: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացների պարբերականության հստակեցումը, կիրառվող գործիքների արդյունավետության գնահատումն ու վերանայումը կհանգեցնեն դրանց շարունակաբար զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար կազմված ինքնավերլուծությունում անդրադարձ է կատարվել Թերությունների վերացման ծրագրին, իրականացված գործընթացներին, ինչը հնարավորություն է տվել հասկանալու հավատարմագրումից հետո բուհում ունեցած փոփոխությունները: Ինքնավերլուծությունում վերլուծականության ավելացումը,

պլանավորված, բայց չկատարված գործընթացների պատճառների վերլուծությունը, պլանավորված գործընթացների համար հստակ հիմքերի ներկայացումը կարող են ինքնավերլուծությունը դարձնել առավել արժանահավատ տվյալների ներկայացման գործիք:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը փորձում է ներքին և արտաքին շահակիցների համար որակի ապահովման գործընթացների մասին թափանցիկությունն ապահովել՝ կիրառելով պաշտոնական կայքի հնարավորությունները: Գիտական խորհրդում խնդիրների քննարկումը ևս նպաստում է շահակիցների կարիքներին համահունչ որոշումների կայացմանը և կայացված որոշումների մասին տեղեկատվության տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհում բարելավվել են որակի ապահովման գործընթացները, հաստատությունում գործում են որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բուհը տրամադրում է համապատասխան ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների իրականացման համար, ներքին շահակիցների կարիքները վերհանվում են որակի ապահովման համակարգի կողմից, որոշակիորեն բարելավվել է արտաքին գնահատման համար կազմված ինքնավերլուծությունը, բուհն ապահովում է որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Կարեն Թոչունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

5-ը մարտի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Կարեն Թոչունյան՝ 2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետը: Շարունակել է կրթությունը ԵՊՀ ասպիրանտուրայում և 2013թ.-ին ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի, իսկ 2017-ին՝ կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015թ.-ից եղել է ԵՊՀ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, 2019-ից՝ դոցենտ, 2021-ից՝ պրոֆեսոր: 2015-2021թթ. եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն, ապա 2023թ.՝ կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ղեկավար: Հեղինակ է ավելի քան 80 գիտական աշխատությունների:

Աննա Սուքիասյան՝ 2003թ. ստացել է մագիստրոսի որակավորում Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի «Մանրէաբանության և կենսատեխոլոգիայի» ամբիոնում: 2012թ. շնորհվել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2015թ. ստացել է դոցենտի կոչում: 2014թ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մանրէաբանության և հիգիենայի ինստիտուտում, ԳԴ Բեռլինի «Շարիտե» բժշկական կենտրոնում, 2015-2017թթ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մոլեկուլային կենսատեխնոլոգիայի և ֆունկցիոնալ գենոմիկայի ամբիոնում, ԳԴ Վիլդաուի տեխնիկական համալսարանում: 2020 թ.-ից առ այսօր աշխատում է Եվրասիա միջազգային համալսարանում՝ որպես դոցենտ, 2021 թ.-ից մինչ այժմ ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտում՝ որպես Նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժնի գիտաշխատող: 2022թ.-ից առ այսօր աշատում է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում՝ որպես դոցենտ: 2023թ.-ից աշխատում է Առողջապահության ինտեգրատիվ գիտությունների եվրոպական ինստիտուտում (EIIHS)՝ որպես դոցենտ: Շուրջ 12 գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

Վարդուհի Խաչատուրյան՝ 2011 թվականին ստացել է Արցախի պետական համալսարանի ֆինանսա-հաշվային ամբիոնի մագիստրոսի որակավորում: 2011-2015 թվականներին եղել է Արցախի պետական համալսարանի ֆինանսա-հաշվային ամբիոնի ասպիրանտ: 2014-2016թթ. աշխատել է ՀԱԱՀ ք. Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես դասախոս, 2012-2014թթ.՝ Գրիգոր Նարեկացի համալսարանի դասախոս: 2017-2023 թթ. եղել է Արցախի պետական համալսարանի ֆինանսա-հաշվային ամբիոնի դասախոս: 2016թ.-ից առ այսօր աշխատում է ՇՏՀ ինժեներական էկոնոմիկայի և ագրոբիզնեսի ամբիոնում՝ որպես ավագ դասախոս:

Նինո Չիչվեիշվիլի՝ 2008-2014թթ. սովորել է Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի մանկաբարձության և գինեկոլոգիայի օրդինատուրայում, այնուհետև Ջավախաշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարնի Բժշկության ֆակուլտետի ասպիրանտուրայում՝ կլինիկական բժշկության ուղղությամբ: 2016թ.-ից մինչ այժմ Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի (NCEQE) փորձագետ է,

2020թ.-ից մինչ այժմ դասավանդում է «Գեոմեդի» համալսարանում: 2022թ.-ից Կանանց գիտական ասոցիացիայի նախագահն է:

Մարիա Գալստյան՝ Հայկական բժշկական ինստիտուտի Բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող է: Ավարտել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

28.11.2023 թ. - 01.12.2023 թ.

	28.11.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	10:00	10:50	50 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	11:00	12:00	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:10	13:00	50 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Առցանց հանդիպում արտասահմանցի շրջանավարտների հետ	14:20	15:00	40 րոպե
6	Հանդիպում տեղացի շրջանավարտների հետ	15:10	15:50	40 րոպե
7	Հանդիպում գործատուների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հետ	16:00	16:50	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

	29.11.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի կառավարման խորհրդի հետ	09:30	10:10	40 րոպե
2	Հանդիպում Կլինիկական աշխատանքների գծով պատասխանատու, ուսումնաարտադրական պրակտիկայի ղեկավարի, դեկանի, ուսումնական և գիտական մասերի ղեկավարների հետ	10:20	11:10	50 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	11:20	12:20	60 րոպե
4	Համալսարանի ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:50	15:50	60 րոպե
7	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	16:00	16:50	50 րոպե

8	Հանդիպում ստորաբաժանումների (ՄՌԿ և ընդհանուր բաժին, ԳԲՈՒԿ, կարիերայի պատասխանատու, արտաքին կապերի բաժին, գրադարան, հաշվապահություն, տնտեսական մաս) ղեկավարների հետ	17:00	18:00	60 րոպե
9	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:10	19:00	50 րոպե

	30.11.2023թ.		***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ		11:30	12:30	60 րոպե
2	Հանդիպում «Բուժական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	12:45	13:45	60 րոպե
3	Հանդիպում «Բուժական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ	14:00	15:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		15:10	15:50	40 րոպե
5	Բաց հանդիպում		16:00	17:00	60 րոպե
6	Հանդիպում ՈւԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ		17:00	17:50	50 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		18:00	19:00	60 րոպե

	01.12.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուների հետ	10:00	11:00	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:10	12:50	100 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Վերապատրաստման ուղեցույց (Ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման գործընթացում)	1
2.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ՝ վերջին երեք տարիների համար	2
3.	Ստորաբաժանումների հաշվետվություններ՝ վերջին երեք տարիների համար	2
4.	Ստորաբաժանումների SWOT վերլուծություններ (առկա է ՄՌԿ և ընդհանուր բաժնի դեպքում)	2
5.	Նախահաշիվներ, բյուջեի բացվածք վերջին երեք տարիների համար	2
6.	Ամփոփիչ ատեստավորման քննական տոմսերի օրինակներ	3
7.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
8.	Պրակտիկայի ծրագրեր	3
9.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
10.	Պրակտիկայի վայրերի հետ կնքվող պայմանագրեր	3
11.	Բենչմարքինգի փաթեթներ	3
12.	Կրթական ծրագրերի առարկայացանկ՝ կրեդիտներով	3
13.	2020-2023թթ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ և վերլուծություններ (2021թ.)	3
14.	Պրակտիկայի թղթապանակներ	3
15.	Ուսանողների փոխանակման փաթեթներ	3
16.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	4
17.	ՈւԽ պլաններ և նիստերի արձանագրություններ	4
18.	ՈւԳԸ պլաններ և նիստերի արձանագրություններ	4
19.	Ուսանողների հեռացման հիմքեր	4
20.	Թեզիսների և հոդվածների ցանկ վերջին երեք տարիների համար	4
21.	Ուսանողների՝ գիտական ղեկավարների հետ համատեղ տպագրություններ վերջին երեք տարիների համար	4
22.	Բելառուսում երիտասարդ գիտնականների համաժողովի նյութեր	4

23.	Ուսումնական միջավայրից բավարարվածության հարցումների փաթեթներ	4
24.	Դասալսումների հիմքեր	5
25.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսների պլաններ	5
26.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	5
27.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	5
28.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
29.	Վերապատրաստման փաթեթներ	5
30.	Ուսումնաօժանդակ կազմի պաշտոնների նկարագրեր	5
31.	Դասախոս-ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցություն	5
32.	Դասախոսների մրցույթների փաթեթներ	5
33.	Համատեղությամբ աշխատող դասախոսների ցանկ՝ հիմնական աշխատանքի վայրերով	5
34.	Դասախոսների վերապատրաստումների հիմքեր և ցանկ վերջին երեք տարիների համար	5
35.	Դասախոսների խրախուսման հիմքեր	5
36.	Գործատուների հետ համագործակցության շրջանակում կիրառական հետազոտությունների ցանկ	6
37.	Համագործակցության հիմքեր գիտական կենտրոնների հետ, կատարված աշխատանքների փաթեթներ	6
38.	Ավանդական բժշկության բնագավառում գիտական աշխատանքներ	6
39.	Նորակառույց 2 մասնաշենքերի համար նախատեսվող ռեսուրսների ցանկ	7
40.	Միջազգային համագործակցության պայմանագրեր	7
41.	ֆինանսական հաշվետվություններ	7
42.	ԱԲՀ տարեկան հաշվետվություններ 2021-2022, 2022-2023 թթ. համար	8
43.	Կայքի դեիտելիության մասին տվյալներ	8
44.	Աշխատակիցների անգլերեն լեզվի վերապատրաստման և ատեստավորման փաթեթներ	9

45.	Արտաքին կապերի բաժնի 2022-2023թթ. Հաշվետվություն	9
46.	Շահակիցների կարիքների վերհանման հիմքեր	10
47.	Շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ	10
48.	ՈԱ պլաններ և հաշվետվություններ վերջին երեք տարիների համար	10
49.	Մշտադիտարկման վերաբերյալ հիմքեր	10
50.	ՈԱ-ի կողմից իրականացված հարցումների, դասալսումների, հանդիպում-քննարկումների հիմքեր	10
51.	Հարցումների դինամիկայի վերաբերյալ վերլուծություն	10
52.	Շրջանավարտների շրջանում կատարվող հարցումներ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,

2. համակարգչային լսարաններ,

3. լաբորատորիաներ,

4. ստորաբաժանումներ,

5. գրադարան-ընթերցասրահ,

6. բուֆետ,

7. նորակառույց մասնաշենք,

8. Ս. Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցում գործնական պարապմունքների համար կիրառվող ենթակառուցվածքներ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ _____ Ն.Խ.ՄԱՐԻԲԵԿՅԱՆ
« 28 » 08 2022թ.



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԲՀ-Ավանդական բժշկության համալսարան

ԱՀԿ-Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԳԱՑ- գործունեության արդյունավետության ցուցանիշներ

ԳԲՈՒԿ-Գիտաբժշկական ուսումնական կենտրոն

ԳԽ-Գիտական խորհուրդ

ԿԽ- Կառավարման խորհուրդ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՈՈՇ-Ոլորտային որակավորումների շրջանակ

ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ

CBL (Case Based Learning) -դեպքերի վրա հիմնված ուսուցում

OSCE (Objective Structured Clinical Examination)-Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննություն

OSPE (Objective Structured Practical Examination)-Օբյեկտիվ կառուցվածքային գործնական քննություն

PBL (Problem-Based Learning)- խնդրի վրա հիմնված ուսուցում

WFME (World Federation for Medical Education)-Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա